

ՀՐԱԶ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ

ԿԱՄ

ՉԱՐՄԱՆԱԼԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ï ² ÔÏ ² Òàđ - 2009

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱԻ
ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ԱՌԱԶՆՈՐԴ
Տ. ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Գիրքը լոյս է տեսնում
Ժիրայր եւ Անահիտ Նշանեան
հիմնադրամի մեկենասութեամբ

Նվիրում են մորս՝ Նադեժդա Բեգլարյանի հիշատակին:
Աղաչեմ՝ ողորմի ասեք:

ՕՐՅՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իր սկզբնավորման պահից իսկ քրիստոնեությանը հատուկ են եղել հրաշքները: Այսինքն այն երևույթները, որոնք դուրս են սովորականի ոլորտից:

Ինքը՝ մեր Տեր Յիսուս Քրիստոսը, հաճախ էր դիմում հրաշքների: Դրանք Նրա համար սովորական էին, իսկ երկրի վրա ապրող մահկանացուներիս համար՝ անսովոր: Ի՞նչը կարելի է հրաշք համարել: Ա՞յն, որ տեղի է ունենում՝ բացառելով երկրի վրա գործող օրենքները, թե՞ այն, երբ այս կամ այն երևույթը մեր աչքին հրաշք է համարվում միայն այն պատճառով, որ մարդկությունը դեռևս չի հայտնագործել այդ օրենքները: Կամ մարդիկ, որոնք պնդում են, թե կանգնեն տարիներ, զուցե և դարեր, և այսօր հրաշք թվացող այս կամ այն երևույթը բնավ էլ հրաշք չի համարվի:

Դա հետազայի ուսումնասիրության գործ է, և դժվար է այսօր ժամանակից առաջ անցնելով՝ խոսել այն բաների մասին, որոնք մենք ո՛չ բացատրել կարող ենք, ո՛չ հասկանալ: Սակայն չմոռանանք շեշտել, թե հրաշքը միշտ բնագանցական է: Ասենք, ինչպես բացատրես, երբ մարդը մահանում է, անցնում է չորս ժամ, մարդիկ պատրաստվում են հանգուցյալին դնել դագաղի մեջ... և նա վերակենդանանում է: Կամ ինչպե՞ս կարելի է երկրային օրենքներով բացատրել այն երևույթը, երբ կինը մահացել է, բժիշկները հաստատել են մահը, գնում են, որպեսզի հերձում կատարեն և նա իր դստեր աղոթքից հետո հանկարծ կենդանանում է:

Կամ, ասենք, մեքենան անդունդի եզրին կանգնել է ու չի ընկնում ձորը: Կամ կարկուտը խփում, վերացնում է շրջակա բոլոր արտերը, իսկ այն արտը, որի համար Անդաստանի արարողություն էր կատարվել, մնում է կարկուտից պաշտպանված....

Էլի կարելի է շարունակել դեպքերի թվարկումը, որոնք կասկածամիտը զուցե թե փորձի մեկնաբանել բնության այս կամ այն

երևույթով, սակայն ֆիզիկայի ո՛չ մի օրենք, բնության օրենքների ո՛չ մի չիմացություն չի կարող բացատրել այն փաստը, թե ինչպես քաղցկեղով հիվանդ մարդը կարող է բժշկվել՝ հույսը միայն Աստծո վրա դնելով և աղոթելով:

Հրաշքը չի կարող լինել առանց հավատքի: Պատահական չէ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը բժշկելուց առաջ մարդկանցից հավատ էր պահանջում: Այո, հավատ, քանի որ հավատով կարելի է ամեն ինչի հասնել, և այն, ինչ անհնարին է մարդկանց, հնարավոր է Աստծո համար:

Չժխտենք, որ գերբնական երևույթների հեղինակը կարող է նաև սատանան լինել: Սուրբ գրքին ծանոթ յուրաքանչյուր մարդ կարող է հիշել, թե ինչպես էր Սիմոն մոզը թռչում օդով (Գործք: 8): Սակայն նրա հրաշագործությունների վերջնական արդյունքը երբեք բարի չի լինում և միշտ կործանարար է լինում մարդկանց համար: Ահա այդ է պատճառը, որ մարդիկ, հաճախ հրապուրվելով սատանայական այս կամ այն գուշակության երևութական ճշմարտությամբ, հետագայում ավելի մեծ ցավի կամ առավել մեծ փորձանքի են հանդիպում:

Չփորձենք խորանալ հրաշքների և նրանց բացատրության հարցի մեջ, սակայն ասենք, որ առանց հրաշքների մարդկային կյանքը շատ միագիծ կլիներ և առանց հավատի շատ տարօրինակ կլինեին հրաշքները: Դրանք հիմնականում տրվում են հավատավոր մարդկանց: Թեև չենք բացառում նաև անհավատներին պատահած հրաշքները: Հրաշքները միշտ տրվում են որոշակի նպատակով: Սակայն գլխավորն այն է, որ հրաշքը ոչ թե տեղի է ունենում մարդու, այլ՝ Աստծո կամքով: Հրաշքը ոչ թե ինքնանպատակ է, այլ անպայման ունի որոշակի նպատակ: Բացի այդ, ճիշտ չէ բնական միջոցները թողած՝ ամեն հասարակ բանի համար սպասել հրաշքի, ասել է՝ Բարձրյալի միջամտությանը: Աստված Ինքը գիտե, թե ինչպես, երբ և ինչ միջոցներով օգնի Իր զավակներին:

Սակայն անդրադառնանք «Հրաշապատում» գրքին և ասենք,

որ նրա մեջ ամփոփված է մեր եկեղեցուն ամեն օր տեղի ունեցող բազում հրաշքների միայն մի փոքր մասը:

Գրքի հեղինակը Վազգենյան հոգևոր դպրանոցի դասախոս, պատմագիտության թեկնածու Զրաչ Բեգլարյանն է, որը ջանասիրաբար հավաքել է հրաշքները կամ արտառոց երևույթները, դրանք ենթարկել որոշակի գեղարվեստական մշակման, սակայն չի խաթարել դրանց էությունը, այլ աշխատել է ամբողջությամբ հասցնել ընթերցողին:

Կատարված է դժվար, մանրամասն աշխատանք: Յուրաքանչ-յուր դեպքում (բացառությամբ մեկ - երկուսի, երբ մարդիկ ցանկացել են գաղտնի պահել իրենց անունները) նշված են պատմողների անունները և այն տեղը, որտեղ տեղի է ունեցել այդ հրաշալի դեպքը և այն վայրը, որտեղ ապրում է պատմողը:

Պատմողները մեծ մասամբ Հայ Առաքելական սուրբ եկեղեցու զավակներ են, թեև հանդիպում են նաև մարդիկ, ովքեր այնքան էլ մոտ չեն Քրիստոսի լույսին: Այդ դեպքերի ականատեսների մեջ և՛ հոգևորականներ կան, և՛ աշխարհականներ:

Գրքի նախաբանը գրել է Սահակ վարդապետ Մաշալյանը, ով իր վարդապետական թեզը նվիրել է հրաշքների բացատրության և մեկնաբանության հարցին:

Անշուշտ, որոշ դեպքերում կարելի է վիճարկել այս կամ այն դեպքի հրաշք լինելը, սակայն եթե նույնիսկ հրաշք էլ չհամարենք, ապա չենք կարող ժխտել դրա արտառոց լինելու հանգամանքը: Ուստի գրքում զետեղված նյութերի ուսումնասիրությունը ապագա սերունդներին թողնելով՝ մեր օրինության խոսքն ասենք այս օգտակար գրքին և նրա հեղինակին: Վստահ ենք, որ այս գիրքը թեկուզ և մեկ նաքարաքիթի չափ կամրապնդի հավատը մեզանում և կնպաստի Հայ Առաքելական եկեղեցու և նրա հավատացյալների զորացմանը:

ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՐԱՄՅԱՆ
Կոտայքի թեմի առաջնորդ

ՆԱԽԱԲԱՆ

Հրաշքներն այն բոլոր պատահարներն են, որոնք գերազանցում են բնության բոլոր ընդունված օրենքները, ինչպես նաև մարդկային ուժն ու կարողությունները: Ընդունված է հրաշքները համարել գերբնականի արտակարգ միջամտությունների բնականի և մարդկայինի վրա: Աստվածաշնչի մեջ հրաշքն այնպիսի մի դեպք է, որ ստիպում է մեզ ասելու. «Ի՞նչու է եղել այս, եւ է սքանչելի առաջի աչաց մերոց» (Սաղմ. 118.23):

Տեղի ունեցած հրաշագործությունների մեջ տեսնվում է Աստծո ձեռքը, հայտնվում Նրա կամքը և իրագործվում է նպատակը Նրա:

Հրաշքները ոչ մի ժամանակ իրենց արժեքն ու հետաքրքրականությունը չեն կորցրել ո՛չ հավատացյալների, ո՛չ էլ հասարակ մարդկանց համար: Ճիշտ է, նրանք քիչ հանդիպող երևույթներ են, սակայն իրական են: Լրատվության միջոցները, մամուլն ու հեռուստատեսությունը ժամանակ առ ժամանակ հասարակության հետաքրքրասիրությունը սնուցում են զգայացունց լուրերով: Լուրեր, որոնք ունկնդիրներին դնում են պատահած դեպքերի մասին կարծիք հայտնելու դժվար երկընտրանքի առաջ: Մանավանդ, որ ամեն մարդ կարող է տեսնել կամ ուրիշներից լսել տարօրինակ երևույթների մասին: Սակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ որևէ մարդու հակազդեցությունը հրաշքներին որոշվում է նրա հավատքի որակի ու մակարդակի չափով: Սակայն մեծամասնության կեցվածքն այս հարցի վերաբերյալ մակերեսային է, եթե չասենք՝ անտարբեր: Թերևս դրա պատճառն այն է, որ այս հարցը հույժ բարդ է և շատերի համար՝ նույնիսկ անլուծելի, դրա համար էլ նրանք չեն ծանրանում դրա վրա:

Հավատացյալի համար հրաշքի գաղափարն անգամ հաճախ իր կրոնական մշուշոտ բաժիններից մեկն է այնքան ժամանակ, մինչև որ որևէ լուրջ ճգնաժամ կամ տագնապ է պատահում, որը

քննության է ենթարկում նրա հավատքը: Կյանքի մեջ անպակաս են հրաշքի կարոտող դժվարալույծ պարագաները, որոնք հրավեր են կարդում հավատացյալին ի գործ դնելու իր հավատքը և պահանջելու այն հրաշալի և հազվագյուտ արդյունքները, որոնք իրագործել է խոստանում կրոնը:

Հուսահատությունը և կասկածները խորանում են, երբ ուշանում է ակնկալածը և կամ երբեք չի կատարվում: Եվ կամ՝ ճիշտ հակառակը. հավատացյալը հրաշքների նկատմամբ անիրապաշտ համոզմունքով տարված՝ կարող է մխրճվել բանականությունն ամբողջովին ժխտող կրոնական կույր նախապաշարմունքի մեջ, որին հենված՝ կարող է ժխտել տրամաբանական ցանկացած միջոց հրաշքից բացի: Ասենք, օրինակ, մերժել դեղը, բժշկությունը կամ գիտության առաջարկած այլ լուծում: Կարելի է մոլորվել նաև կախարդության խավարի մեջ՝ հրապուրված գերբնականի նկատմամբ ունեցած անբնական ախորժակից: Այս պարագաները կարոտ են առողջ հոգևոր ըմբռնումի և առաջնորդության՝ հրաշքների ասպարեզի մեջ, հավատքի նման ճգնաժամներից անվնաս դուրս գալու համար և խուսափելու հոգևոր կյանքի շատ հավանական նավաբեկություններից: Ուստի շատ կարևոր է ուսումնասիրել հրաշք համարված երևույթները՝ հասկանալու համար նրանց իսկությունը, հաստատել դրանք Սուրբ Գրային և եկեղեցական մեր հավատքի հիմքերի վրա, պրպտել նրանց կարելիության պայմանները և սահմանները, հստակեցնել նրանց իրականացման գործոնները և նաև՝ Աստծո ու հավատացյալի դերը նրանց մեջ: Նաև ցույց տալ սխալ ըմբռնումների ու մոլորությունների բազմապիսի տեսակներն ու ձևերը: Աններելի բացթողում պիտի լիներ, եթե Հայ Առաքելական եկեղեցին այս ասպարեզը ամբողջովին աղանդավորների սանձարձակ պնդումներին թողներ: Անշուշտ, մեր եկեղեցին ունի հազարավոր տարիների ընթացքում իր կուտակված խոսքն ու կարծիքն այս նյութի շուրջը, բայց մեր երկհազարամյա հավատքը շարունակում է հրաշքներ ծնել՝ որպես թարմ եղելություններ: Այդ հրաշքները կատարվում են հավատացյալների կյանքում:

Սևանի Վազգենյան Հոգևոր դպրանոցի դասախոս պարոն **Հրաչ Բեգլարյանի** այս գիրքը գալիս է լցնելու այս շատ կարևոր բացը մեր հոգևոր գրականության մեջ՝ մեզ ներկայացնելով կենդանի հավատքի արդյունքները: Հավաքված է այնպիսի նյութ, որը մեզ ստիպում է մեր հայացքը հառել նաև անբնական թվացող շատ երևույթների վրա:

Մեր արդի աշխարհը հրաշքների վերաբերյալ հետաքրքրական մոտեցումներ ունի. հասարակության կողմից որդեգրված են կեցվածքներ, որոնք մի տեսակ հավատքի և անհավատության խառնուրդ են ներկայացնում:

Աշխարհում հրաշքների ընկալման չորս տեսակի ենք հանդիպում.

ա. Քրիստոնեության տեսակետն է, որ գրեթե անփոփոխ է մնացել Հիսուսի ժամանակներից ի վեր: Այդ տեսակետը, Նրա ուսուցումների և գործերի հիման վրա հաստատված, հրաշքն ընդունում է որպես Աստծո կամքի հայտնության սովորական միջոցներից մեկը:

բ. Բնական նյութապաշտություն (rational materialism), որ նյութական իրականությունն ընդունում է որպես միակ հենարան և աղբյուր, իսկ հոգևոր իրականությունը, բնականաբար, մեկնաբանում է որպես պատրանք և ցնորք: Հետևաբար, հիմնովին ժխտում է հրաշքների կարելիությունը:

Հունական փիլիսոփայության ազդեցության գոտուց ներս միշտ էլ գտնվել են այս ուղղությամբ մտածողներ վաղեմի ժամանակներից ի վեր: Ինչպես 5-րդ դարի փիլիսոփա Եզնիկ Կողբացին է ակնարկում. «Ուղեղը դատարկվելիս մարդը թռցնում է խելքը և սկսում է խոսել պատերի և կռվում է քամիների հետ: Ուստի բժիշկները պնդում են, թե բնավ դև չկա, որ մտնի մարդու մեջ, այլ դրանք ցավեր են, որ մենք կարող ենք դարմանելով բժշկել: Բայց մենք դա չենք ասում, քանզի մեզ համար ճշմարիտ է Ավետարանի խոսքը, թե բազմաթիվ դևեր, երբ տեսնում էին Հիսուսին, աղաղակում և դուրս

էին ելնում մարդու միջից. և Նա սաստում էր նրանց և չէր թողնում, որ խոսեին» (Եզնկայ, Եղծ աղանդոց, ի Ջատագովութիւն Աստուծոյ Ճշմարտի. Եղծ Քեշիկն Պարսից, ԻԱ. Պուլէնոս Այրես, Այրարատ, 1951, էջ 88):

գ. Հրաշքները, հակառակ նյութապաշտության, արժանացել են ժխտական կեցվածքի, գիտական կամ կես-գիտական ուսումնասիրությունների, հոգեբանական կամ հարահոգեբանական (parapsychology) շահագրգռությունների ուղորտում, որոնք մեծապես նպաստել են, որպեսզի գիտական աշխարհը հետզհետե դրական դիրք գրավի սրանց ուսումնասիրության նկատմամբ:

դ. Հնդկական, բուդդայական և սրանցից ազդված արևմտյան նոր-գնոստիկական շարժումներն ընդունում են, որ նյութական իրականությունը պատրանք է: Եվ եթե որևէ մեկն անհատապես հասնի այս ճշմարտությանը, նրա հետ հրաշքներ կսկսեն կատարվել ինքնաբերաբար: Այս տեսակետը տարածվում է արևմուտքի մեջ՝ արժանանալով համակրանքի և հետաքրքրության:

Որևէ հրաշք չի կարելի փաստել, եթե չորդեգրվի գերբնականի գոյությունն ընդունող փիլիսոփայություն: Եթե մենք նման փիլիսոփայություն չենք որդեգրել և որևէ արտասովոր դեպք է պատահել, ապա մեծ հավանականությամբ պիտի ասենք, թե զոհ ենք գնացել պատրանքի: Փորձառությամբ մեր ձեռք բերածը կախված է նրանից, թե ինչ տեսակ փիլիսոփայություն ենք մենք դնում այդ փորձառության մեջ:

Շատ հավանական է, որ հավատացյալի կողմից որպես հրաշք որակվող դեպքը անհավատի կողմից նույն գնահատականին չարժանանա: Եվ, քանի որ տվյալ դեպքը պատահել է բնության մեջ, անհավատը նրա պատճառները պիտի փնտրի և գտնի բնության մեջ՝ եղածը համարելով մարդկանց դեռևս անծանոթ բնական երևույթների կամ օրենքների գործունեության արդյունք:

Այս առարկությունը մասամբ ընդունվում է որոշ աստվածաբանների կողմից և կախված է այն բանից, թե ինչպես ենք սահմա-

նուն բնությունը: Հավատացյալի կողմից դժվար չէ ընդունել հոգևոր ու բնազանցական այլ աշխարհների և օրենքների գոյությունը, որոնք դեռ անծանոթ են մեզ, և որոնց գյուտը կատարելու պարագային, թերևս, հնարավոր պիտի դառնար հրաշքները բացատրել և մեկնաբանել որպես բնական երևույթներ: Այս պարագային բնություն ասելով պիտի հասկանայինք ամբողջ ստեղծվածը, ամեն ինչ, որ գոյություն ունի, ներառյալ նաև աննյութական և հրեշտակային աշխարհներն ու այլազան հոգևոր գոյացությունները:

Աստված անպայման բնության օրենքները զանց առնելով կամ խախտելով չէ, որ գործում է իր հրաշքները: Սուրբ Օգոստինոսը մեզ հիշեցնում է, թե «Հրաշքը հակառակ չէ բնությանը, այլ բնության մասին մեր գիտեցածներին է հակառակ» (Աստուծոյ քաղաքը, 21.8):

Հավանական է, որ իր ամենագետ իմաստնությամբ և զորությամբ Աստված կարող է տիրել բնության տարրերին այնպիսի զարմանահրաշ մի կարողությամբ, որ մենք՝ անկատար արարածներս, այլ ասելիք չունենանք, քան այն հրաշք կոչելն է: ճարտարվեստի արդի գյուտերը ըստ բնության օրենքների իրագործված մեկ-մեկ հրաշքներ են, եթե բաղդատվեն անցյալ դարերի տգիտության մակարդակի հետ: Նույնը կարելի է ասել հրեշտակների, մարգարեների և սուրբերի համար: Նրանք հավանաբար գիտեն և գործածում են որոշ հոգևոր օրենքներ ու ուժեր, որոնք գաղտնի և անթափանցելի են մարդկության մեծ մասի համար: Այս կետը հույժ կարևոր է, եթե ցանկանում ենք հասկանալ նաև կախարհության գործընթացը:

Աստծո ազատ կամքը բնության մեջ և բնության վրա, ինքնին տիեզերական հոգևոր օրենք է, և պետք է հրաշքը նկատվի որպես տիեզերական օրինավոր մի իրավունք: Այս տեսակետը շատ հարմար մի բաղդատմամբ զարգացվում է Ռիչարդ Փըրթիլի կողմից (Richard L. Purtill, *Thinking About Religion*, (Englewood Cliffs: Prentice-Hall, 1978), 70): Նա մատնանշում է «Նախագահական ներումի» գործընթացը, որ գործածության մեջ է դրված Միացյալ Նա-

հանգների օրենսդրության մեջ: Նա հրաշքը համեմատում է նախագահական ներումի հետ, որ դուրս է օրինական համակարգից, անգուշակելի է և չի կարելի ձեռք բերել փաստաբանական որևէ ճարպկությամբ: Ներումը դուրս է դատաստանական օրենքների բնականոն գործադրությունից: Բացի այդ, նախագահական ներումը երկրի օրենքների դեմ գործադրած ոտնձգություն չի համարվում, որովհետև միայն նախագահինը համարվող այս իրավունքը նաև սահմանադրական նորմ է: Նմանապես, հրաշքը գիտական հետազոտության սահմաններից դուրս է համարվում և կարող է կատարվել միմիայն Աստծո հատուկ օրենքով, ըստ երևույթին՝ բոլոր ֆիզիկական օրենքներին հակառակ, և սակայն առանց որևէ օրենքի խախտում համարվելու:

Բնապաշտի և գերբնապաշտի միջև բուն հարցը կայանում է ոչ թե այն կետում, թե բնության օրենքներն ինչ աստիճանով են մասնակցում հրաշագործությանը, այլ հրաշքի գաղափարն ինքնին ժխտում է բնության հասկացությունը՝ որպես գոց տիեզերական համակարգի, որի մեջ տեղ չկա անակնկալի կամ Աստծո համար, որ ըստ կանս կարենա միջամտել բնության սոսկ մեխանիկականությանը: Բնապաշտի խնդիրն է մերժել տիեզերքից դուրս որևէ ազդակի գոյությունը, որ անկախ է բնության օրենքներից և գերազանցում է նրանց: Ըստ բնապաշտական գիտության հասկացողության, դեպքերը կարելի է բացատրել ուրիշ դեպքերով, հետևաբար իմաստագուրկ է դրանց բացատրության համար դիմել որևէ գերբնական պատճառի կամ ակնարկել որևէ բնազանցական պատճառ:

Ուրեմն հրաշքներն անպայման հավատք չեն ստեղծում, բայց հրաշքների ընկալման համար հավատքը պարտադիր պայման է: Ավետարանները վկայում են, որ անգամ Քրիստոսը չկարողացավ հանդել բոլոր մարդկանց, ովքեր ականատես եղան աչաշլաց հրաշքներին, ինչպես, օրինակ, չորս օրվա մեռածին հարություն տալն էր: Այս հրաշքի ականատեսներից ոմանք նույնիսկ որոշեցին Յիսուսի հետ նաև Ղազարոսին սպանել (Յովհ., 11:46 և 12:10):

Հայտնի է, որ հրաշքը չի տալիս հավատքի բոլոր խնդիրների պատասխանը: Մարդու հոգին ունի ենթագիտակցական հատուկ բարդությամբ, որոնք պատճառ են դառնում, որ անծը երբեմն շատ դյուրությամբ մի կողմ շարտի բոլոր այն փաստերը, որոնք հակասում են իր նախասիրություններին: «Եթե Մովսեսին և մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն» (Ղուկ., 16: 31):

Եթե անհավատ մեկը փոխի իր մեկնակետը և ընդունի աներևույթ էությունների և Աստծո գոյությունը, ապա այդ դեպքում միայն հրաշքներն ընդունելի ու իմաստալի կդառնան նրա համար: Սակայն չմոռանանք հակադարձը. նման հավատադարձ տեղի է ունենում, երբ մարդիկ ականատես են լինում հրաշքի: Այնպիսի անբացատրելի, խորհրդավոր և արտասովոր դեպքեր, որոնք ժամանակ առ ժամանակ պատահում են մարդկանց, ստիպում են, որ նրանք վերստին քննեն իրենց աշխարհայացքը և տեղ բանան գերբնականի համար:

Պարոն Հրաչ Բեգլարյանի աշխատանքն այս առումով խիստ կարևոր է, որովհետև այն մեզ է ներկայացնում բազմաթիվ գերբնական դեպքեր, զարմանալի պատմություններ, հոգևոր ապրումներ և փորձառություններ, որոնք պատահել են մեզ նման մարդկանց հետ: Դեպքեր, որոնք աստվածային միջամտության դրոշմ ունեն և կրկին ու կրկին փաստում են մեր հավատքի շոշափելի ու իրական լինելը:

Որքան էլ որ զանազան ձևերով հանդես գան, հրաշքներն ի վերջո ընկերային դեպքեր են, որոնք կարոտ են դրանք որպես «հրաշք» ընկալող ականատեսների վկայության: Հրաշքների վկայությունը, դրանք արձանագրելը, տարածելը, քարոզելն ու դրանց ջատագովությունը հավատքի արժարժան համար էական դեր են կատարում: Իզուր չէ, որ Աստվածաշնչի մեջ այդքան մեծ տեղ է տրված հրաշքների պատմությանը: Սակայն միայն անցյալը չէ, որ գալիս է փաստելու հրաշքների իրական լինելը, այլ ներկայումս

պատահած նմանօրինակ դեպքերը, որոնք ստիպում են հրաշքներն ընդունել որպես կյանքի երևույթ: Ճիշտ է, դրանք միշտ և ամենուրեք չէ, որ պատահում են, սակայն պատահում են: Այս համեստ հատորի մեջ տեղ գտած հավատացյալ վկաների մի խումբ դարձյալ գալիս է փաստելու, որ «Աստծո համար անկարելի բան չկա»:

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆ

ԻՍ ԿՅԱՆՔԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՅՐԱՇԵՐ

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հրաշքներ կատարվում են եթե ոչ բոլոր մարդկանց, ապա նրանցից շատերի հետ: Բոլորովին այլ հարց է՝ արդյոք մարդը խորանու՞մ է եղելության մեջ և իր հետ կատարվածը որպես հրաշք ընկալու՞մ է, թե՞ ոչ:

Ինչևէ, չխճճվենք հրաշքների մեկնաբանման բարդ լաբիրինթոսի մեջ և ասենք, որ դրանց բնութագրումն ընկալման հարց լինելուց բացի մեր աշխարհի հայտնի օրենքները ժխտող կամ շրջանցող երևույթների հետ գործ ունենալ է նշանակում: Ավելի կոնկրետանալով ասենք, որ դպրոցում իմ ամենասիրած առարկան պատմությունն էր: Հաճախ, երբ ուսուցիչն անդրադառնում էր Կաթոլիկ եկեղեցուն, մեզ պատմում էր նաև ինկվիզիցիայի մասին: Գույները խտացնելով՝ խոսում էր Խաչակրաց արշավանքների, դրանց ժամանակ գործադրված դաժանությունների մասին:

Ուսուցիչս կամ չգիտեր, կամ էլ դիտմամբ չէր ասում, որ Հայ Առաքելական եկեղեցին երբևէ որևէ կապ չի ունեցել ինկվիզիցիայի հետ: Եվ ոչ միայն ես, այլև իմ դասընկերները մի կարգին չէինք էլ հասկանում, թե որն է այդ երկու եկեղեցիների տարբերությունը: Հիմա համոզված եմ, որ այդ մասին չգիտեին նաև խորհրդային դպրոցների ուսուցիչները ևս:

Գալով ինձ՝ ասեմ, որ կարդալով ինկվիզիցիայի մասին՝ օրավուր ցատումով, արհամարհանքով և վրեժով էի լցվում Քրիստոսի, քրիստոնեություն, Խաչի ու Խաչյալի նկատմամբ՝ վերածվելով յուրատեսակ Սողոսի:

Բայց այն, ինչ ինձ հետ կատարվեց 10-րդ դասարանում, փոխեց կյանքիս ընթացքը: Ավարտական քննությունների շրջանում էր: Շատ էի պարապում քննությունները հաջող հանձնելու համար: Մի երեկո շատ հոգնած էի. կարդացել էի ամբողջ օրը:

Չգիտեմ՝ ննջե՞լ էի, թե՞ արթուն էի, հանկարծ ինձ հայտնվեց Քրիստոսը: Սպիտակ շորերով էր, ժպիտը դեմքին: Նա չասաց իր ով լինելը, բայց ես հասկացա, որ Նա է: Եկավ, կանգնեց և ասաց.

- Գնա եկեղեցի:

Չնայած տեսիլքից ազդված էի՝ բայց ինձ նման անաստված մարդը միանգամից եկեղեցի չէր գնա: Փորձեցի նշանակութուն չտալ դրան՝ այն համարելով իմ հոգնածության արդյունքը: Ավարտեցի դպրոցը, ընդունվեցի Երևանի Մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Թվում էր՝ մոռացել էի կատարվածը, բայց Նա հայտնվեց դարձյալ: Վեց ամսվա ընթացքում հայտնվեց երեք անգամ, և ամեն անգամ նույն բանն էր ասում.

- Գնա եկեղեցի:

Սովորում էի Երևանում, բայց ապրում էի Էջմիածնի շրջանի Նորակերտ ավանում: Մի անգամ էլ (արդեն երրորդ) երբ հայտնվեց, որոշեցի մտնել Սուրբ Սարգիս եկեղեցի: Ասեմ, որ իմ ավտոբուսի կանգառը եկեղեցու մոտ էր:

Մտա, մոմ վառեցի և չհասկացա, թե ինձ հետ ինչ կատարվեց: Ասես ամեն ինչ ինձ հետ էր կատարվում ու ինձ հետ չէր կատարվում: Շուրջս այնպիսի մթնոլորտ էր ստեղծվել, որ այդ մի քանի րոպեի մեջ քննեցի ողջ կյանքս: Կարծես թե ես չէի ցանկանում, բայց ներսից ինչ-որ մի բան ինձ ստիպում էր աղոթել: Եվ ցավն այն էր, որ ես աղոթք չգիտեի, աղոթել չգիտեի, բայց աղոթեցի այնպես, ինչպես կարող էի: Սրտիս խորքից խոսեցի Աստծո հետ և, զարմանալի բան, անկախ ինձանից սկսեցի լաց լինել: Հանկարծ պարզորոշ հասկացա, որ պիտի փոխեմ կյանքիս ընթացքը: Եկեղեցուց դուրս եկա հաստատ վճռականությամբ, որ դուրս եմ գալու Մանկավարժական ինստիտուտից ու գնալու եմ հոգևոր ճեմարան:

Իմ անցյալին ու դարձին նայելով՝ այն նմանեցնում եմ Պոլոս Առաքյալի ընթացքին ու նրա դարձին, թեև ես Առաքյալի կոչիկների քուղերը կապելու իսկ արժանի չեմ և համեմատության եզրեր չկան: Եվ այդ ժամանակից ի վեր ես, ըստ կարի իմում, փորձում եմ ծառայել Խաչյալին ու Խաչին, Միակ Ճշմարիտ Աստուծոն ու Եկեղեցուն: Թե որքան է այդ հաջողվում, գիտի Աստված, իսկ ես կատարվածը համարում եմ իմ կյանքի ամենամեծ հրաշքը:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ԽՈՍՔԵՐՆ ԷԼ ՍՈՒՐԵ ԵՆ

1988թ. մայիսի 12-ին սարկավագ ձեռնադրվեցի: Վազգեն Վեհափառն այդ առթիվ իր մակագրությամբ մի Կտակարան նվիրեց: Երբ կարդում էի այն, ինձ դուր եկած տեղերում նշաններ էի դնում՝ փոքրիկ խաչիկներ: Սակայն մեծ եղավ զարմանքս, երբ որոշ ժամանակ անց անդրադառնալով՝ նկատեցի, որ այդ նշանները չկան: Դարձյալ նշումներ կատարեցի և դարձյալ նույնը կրկնվեց:

Անցավ մի քանի տարի, ասես մոռացվել էր կատարվածը, և կարդալիս նորից սկսեցի նշումներ անել գրքի վրա, բայց որոշ ժամանակ անց, երբ նորից անդրադարձա, նորից տեսա, որ մի անտես ձեռք ջնջել է դրանք:

Եվ ահա մի օր, դարձյալ նինջի^օ, թե^օ թմրության մեջ ինձ մի լույս հայտնվեց, որի միջից լսվեցի հետևյալ խոսքերը.

-Նոր Կտակարանի ամեն բառը սուրբ է: Նշումներ մի՛ արա և մի բառից մյուսին նախապատվություն մի՛ տուր:

Մի տեսակ սթափվեցի թմրությունից և հասկացա, որ դա նույնպես Տիրոջ հրաշալի հայտնությունն էր ինձ:

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԱԶԵՑ ԶՈՐԱՑԱԾ ԾԱՌԸ

Սիրում եմ ծառ ու թուփ, երբ ժամանակ եմ ունենում, սիրում եմ ծառեր տնկել և խնամել: Ամեն բույսի, ամեն ծառի միջից կարծես Աստծո աչքն է նայում մեզ: Եվ ես չգիտեմ աշխարհում ավելի մեծ գեղեցկություն, քան ծաղկած ծառն է: Ինչևէ, 2006թ. գարնանը, երբ փորձում էի ջրել այգին, ռետինե փողրակը կպավ և մատղաչ տանձենիներից մեկը ջարդեց: Ցավ ապրեցի: Վերցրեցի խնձորենու մի չորացած ճյուղ, հենակ սարքեցի ջարդված ծառի համար, կապեցի ջարդված ճյուղը: Խնձորենու ճյուղը վաղուց չորացած, դեն էր նետված և ծառայելու էր որպես վառելափայտ: Եվ քանի որ այդպես էր, ճյուղը բարակ կողմով խփեցի հողի մեջ: Մտքումս աղոթեցի, որ ջարդված տանձենին վերակենդանանա, կանաչի: Անցավ մոտ քսան օր, և հանկարծ գարմանքով նկատեցի, որ ոչ միայն ջարդված տանձենին է կանաչել, այլև... կողքին տնկած խնձորենու չոր ճյուղը, որ ծառայում էր որպես հենակ: Եվ քանի որ բարակ կողմով եմ խփել հողի մեջ, ճյուղը կանաչել է, բայց ոստերը հակառակ կողմից են աճել: Կանաչել է չոր, արդեն վաղուց մեռած ճյուղը:

Ի՞նչ է սա, եթե ոչ Աստծո հրաշք: Ում պատմես՝ չի հավատա, որ լրիվ չորացած ճյուղը կարող է կանաչել: Ով գիտե, Աստված իմ սրտի տխրությունը տեսավ և ինձ խղճաց, թե՞ ինչ... Հիմա ծառն այդ աճում է հորս տնամերձում, իսկ ես չեմ դադարում գարմանալ և հիանալ Տիրոջ ողորմածություն ու ամենակարող զորություն համար:

ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԱՄՅԱՆ
Կոտայքի թեմի առաջնորդ

«ՆԱՐԵԿԻ» ԲԺՇԿՈՂ ՈՒԺԸ

-Մինչ օրս էլ Մոսկվայում ապրում են ռուս երկու եղբայրներ, որոնք ականատեսն են եղել «Նարեկի» բժշկող հրաշալի ուժի: Նրանք տարիներ առաջ դժբախտ պատահարի զոհ էին դարձել,- այսպես սկսեց իր պատմությունը Արցախի թեմի առաջնորդ Պարզև եպիսկոպոս Մարտիրոսյանը,- նրանց տունը հրդեհվել էր: Ու թեև իրենք մի կերպ փրկվել էին, բայց այնքան խոր այրվածքներ էին ստացել, որ նրանց սպիները երկար ժամանակ չէին վերանում: Ոչ մի պլաստիկ վերահատուկություն չէր կարող վերացնել այրվածքների սարսափելի հետքերը:

Նրանք Ռուս Ուղղափառ եկեղեցու հետևորդներ էին: Հաճախ էին եկեղեցի գնում, աղոթում, ապրում հոգևոր կյանքով: Մի անգամ նրանք հանդիպում են իրենց հայ ընկերոջը, որը նրանց խորհուրդ է տալիս կարդալ «Նարեկը»: Պատմում է Գրիգոր Նարեկացու մասին, նրանց է տալիս «Մատենաի» ռուսերեն թարգմանությունը:

Տղաներն սկսում են «Նարեկ» կարդալ և որոշ ժամանակ անց նկատում են փոփոխությունը, իսկ մի տարի անց վերանում են բոլոր սպիները, և նրանց այրված մաշկը վերածվում է ասես նորածին երեխայի մաշկի:

Ձարմացած «Նարեկի» ամենաբույժ ուժից՝ նրանք ստեղծում են «Նարեկի» բարեկամների ակումբը», որտեղ մինչև հիմա էլ հավաքվում և «Նարեկ» են կարդում Աստծո և նրա սրբերի զորությունը հավատացող մարդիկ: Լինում են նաև տարբեր բժշկություններ Սուրբ Գրիգոր Նարեկացու բարեխոսությունը:

Հ 2 հեռուստատալիքի «Հոգևոր անվտանգություն»
հաղորդաշար 2005թ. նոյեմբերի 1-ի հաղորդում

ՀՐԱՇՔ ԱՇԽԱՐՀ

Եվ Աստված ասաց. «Եղիցի լոյս, և եղեւ լոյս»:

Եվ այդ օրվանից ի վեր Աստված աշխարհը լցրեց հրաշքներով:

Մեզ շրջապատող բնությունը, բացվող ու մթնոլորտը՝ արևի լույսով ու վերջալույսով, դեպի ծովերի անհունը շտապող գետերը, թռչունների ճովողյունը սովորական իրողություններ են: Փոքրիկ մի ծիլ ճեղքել է ասֆալտի կարծրությունը և գլուխը մեկնել է դեպի արևը: Հողի ջերմությունից հատիկը ճաք է տալիս, ու աշխարհը լցվում է բարիքով: Եվ քանի՜ - քանի՜ աղոթաձայն մրմունջ է առաքվում առ Աստված, որ Նա պահպանի հողը ճեղքող ծիլը:

Կամ գռուզ մագերով մի մանչուկ, տակավին անտեղյակ քերականական օրենքներին ու լեզվական օրինաչափություններին, նորովի է հնչեցնում հինգհազարամյա մի լեզու: Արիացու չգիտեմ քանի՜ հազարերորդ այս հյուլեն ինչպե՞ս է այսպես վարժ ու ճիշտ թոթովում հայերեն... Եթե հեռու դարերից ինչ-որ մեկը հայտնվեր այսօր, անշուշտ պիտի խենթանար՝ այս հրաշքները տեսնելով և իրեն կարծեր հեքիաթների աշխարհում, իսկ մենք անտարբեր ենք այս հրաշք-աշխարհի նկատմամբ: Յուրաքանչյուր Աստծո օր արթնանում ենք նոր հրաշքների որոնումներով և կյանքի խելահեղ վազքի մեջ չտեսնելու ենք տալիս աշխարհն էլ, հրաշքն էլ...

Աշխարհում միշտ էլ հրաշքներ կատարվում են, սակայն մենք միայն հիշում ենք նրանք, որոնք արտառոց են կամ զարմանալի: Ահա դրանցից մեկը.

1999 թվականի սեպտեմբերյան մի օր եկա երևան՝ մորս այցելության: Հեռախոսը զանգեց: Սանահայրս էր՝ Բժշկական Համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Նազարեթյանը, որը

միաժամանակ նաև Պաշտպանության նախարարության բժշկական վարչություն պետն էր:

-Վազգեն Սարգսյանի թիկնապահի տղան` փոքրիկ Նժդեհը, ավտովթարի է ենթարկվել ու մահամերձ է: Վիճակն անհուսալի է: Ծնողները ցանկանում են անհապաղ մկրտել երեխային: Սրբազան Հայր, խնդրում ենք ընդառաջել,- խոսափողի մեջ լսվեց նրա ձայնը:

«Ինչպե՞ս մկրտեմ,- մտածեցի ես,- հոգևորականի հագուստս և մկրտություն ձեսի համար անհրաժեշտ պարագաներն Օջականում են...»: Սակայն...

Զանգահարեցի ՀԲՄ մասնաճյուղի տնօրեն Աշոտ Ղազարյանին: Նրա հայրը Տեր Մովսեսն է, որ մի ժամանակ ծառայում էր սուրբ Գեղարդի վանքում, իսկ հիմա վաստակած հանգստի էր կոչվել: «Նա անպայման տանը հագուստ և անհրաժեշտ պարագաներ կուենենա», - անցավ մտքովս:

Գնացի նրանց տուն, հագա տեր հոր քահանայական զգեստը, որը վրաս չափազանց կարճ ու նեղ էր և հիվանդանոց շտապեցի:

Երեխան Մալաթիայի Սուրբ Աստվածածին հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում էր: Պետերբուրգից ժամանած նյարդավիրաբույժ Վիլյամ Խաչատրյանը կատարել էր չափազանց բարդ մի վիրահատություն:

-Բժշկությունն արել է հնարավոր ամեն ինչ,- ասաց բժիշկը,- սակայն երեխային կարող է փրկել միայն Աստվածային հրաշքը:

Հիվանդասենյակում ճնշող լռություն էր: Վիշտն ու արցունքները քարացել էին ամբողջովին վիրակապված երեխայի շուրջը հավաքվածների աչքերում: Այդտեղ էին նաև Վազգեն Սարգսյանը, նրա եղբայր Արամը, Գագիկ Զհանգիրյանը, հի-

վանդանոցի գլխավոր բժիշկ Նիկոլայ Դալլաքյանը, Վիլյամ Խաչատրյանը...

Բոլորը քարացած սպասում էին: Մահճակալի վրա անգիտակից, փակ աչքերով, ամբողջովին վիրակապված երեխան էր: Նրա կապտակարմիր գույնը անիրական ու երևակայական էր դարձնում փրկութունը:

Ես կատարեցի հոգևորականի իմ պարտքը: «Իւղն անույշ յանուն Յիսուսի Քրիստոսի հեղեալ ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգևացն անապականութեան...»,- ասելուս պահին, երբ մյուսն ունկնդրեց մատով դրոշմեցի նրա ճակատը, երեխան ծանրորեն բացեց կոպերը... Բոլորը միանգամից ապշանքի ու ցնծության ձայներ արձակեցին:

-Աստված... հրաշք տեղի ունեցավ...

Այսօր Նժդեհն ապրում է իր առօրյա հոգսերով, սակայն մեզինից ոչ ոք չի մոռացել 1999 թվականի աշնան այն ծանր օրը:

ՀՐԱՉԻ ԹՈՒՉԲԸ

16-17 տարեկան տղաներ էինք: Հաճախ էինք ֆուտբոլ խաղում բախում: Հրաշք, որ սովորում էր ձարտարագիտական համալսարանում և մեզանից ավելի տարիքով էր, հաճախ էր միանում մեզ:

Մի օր էլ, երբ դարձյալ ֆուտբոլ էինք խաղում, տեսանք, թե ինչպես Հրաշք բակ մտավ, բայց քայլում էր գինովցածի քայլերով: Նա տուն բարձրացավ:

Որդուն այդ վիճակում տեսնելով՝ մայրը նեղսրտում է, սկսում հանդիմանել նրան, թույլ չի տալիս, որ իջնի բակ և միանա ֆուտբոլ խաղացողներին: Չկարողանալով դիմադրել որդուն՝ մայրը փակում է դուռը:

- Դուռը փակում ես, հա՞,- հինգերորդ հարկից լսվեց Հրաչի մի քիչ գինով, բայց հուժկու ձայնը,- դե որ փակում ես, ես էլ ուղիղ կիջնեմ ներքև:

Նա վազելով դուրս եկավ պատշգամբ և այնտեղից ներքև ցատկեց: Դրան հաջորդեց մոր անբնական ու սարսափելի ճիչը: Մի քանի վայրկյանում բակը լցվեց տարբեր կողմերից դեպի վայր ընկած տղան վազող մարդկանցով:

Խառնիխուռն ձայների մեջ առանձնանում էր մոր ձայնը.

-Վա՛յ, այս ինչ արեցի... մի՛ակս, հո՛ւյս,- գոչում էր նա՝ կուրծքը ծեծելով:

Մինչ տեղ կհասներ շտապօգնություն մեքեան, հանկարծ Հրաչը ճոճվելով ոտքի կանգնեց ու սկսեց սաստել շրջապատողներին.

-Ի՞նչ կա... ի՞նչ եք հավաքվել վրես... կարո՞ղ ա մեղր եմ բաժանում...

Մարդիկ ապշահար նայում էին իրար: Շուտով հայտնվեց շտապօգնություն մեքենան: Նրանք գոռով մեքենայի մեջ խցկեցին «հիվանդին» ու տարան...

...Կես ժամ անց Հրաչը, մի թևը վիրակապած, ամեն օրվա պես հայտնվեց մեր խաղի կենտրոնում:

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍՎՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

Արարատյան Հայրապետական թեմի
սուաջնորդական փոխսանորդ

ԵՎ ԴԵՎԸ ԶԵՌԱՅԱՎ

1992 թվականին էր: Մի օր Մայր տաճարում ծառայող երիտասարդ վարդապետներից մեկին մոտեցավ մի կին և հայտնեց, որ իրենց մի հարազատի տանն այս էլ քանի ամիս տարօրնակ ու անհասկանալի բաներ են կատարվում: Գիշերային ժամերին

ձայներ են լսվում, իրերն իրենք իրենց տեղափոխվում են, կոտորվում են ափսեներն ու բաժակները...

Նրանք դիմել էին զանազան մարդկանց՝ մոգերի, գրբացների, էքստրասենսների, սակայն որևէ արդյունքի չէին հասել: Ամբողջ շենքը տեղյակ էր այս մասին և շենքի բոլոր բնակիչները միահամուռ կերպով հաստատում էին, որ իրենց հարևանի տանն ինչ-որ տարօրինակ բաներ են կատարվում և այնտեղ առկա է ինչ-որ չար ոգի:

Ջգիտես ինչու կինը կարծում էր, որ երիտասարդ վարդապետը կարող է քշել չար ոգուն, դրա համար էլ հաստատակամորեն պնդում էր, որ հայր սուրբը գնա և որևէ կարգ կատարի:

Վարդապետն սկզբում փորձեց հրաժարվել՝ զանազան պատճառաբանություններով, սակայն ի վերջո անսալով նրա պնդումին՝ տեղի տվեց, բայց խոստացավ գալ մեկ շաբաթ անց միայն:

Վարդապետը շատ լավ գիտեր տերունական խոսքը, թե. «Այդ տեսակը ուրիշ բանով չի ելնի, եթե ոչ ծոմապահությունը ու աղոթքով» (Մարկ. 9:28): Եվ, չնայած նրան, որ մինչ այդ այնքան էլ հակված չէր պահեցողության ու աղոթքի, պահք պահեց և աղոթեց երկար ժամանակ:

Իսկ մեկ շաբաթ անց, սպառազինված պահքով, աղոթքով և ծիսական անհրաժեշտ պարագաներով, շաբաթը պահքով ու աղոթքով անցկացրած իր երկու ուսանողների ուղեկցությամբ գնաց նրանց տուն: Հարց ու փորձից պարզվեց, որ այս շաբաթ դեռ իրեն առավել անպատկառ ու հանդուգն է պահել, զանազան սպառնալիքներ է տեղացել տան տերերի գլխին: Հոգևորականն սկսեց պայքարը ստի թագավորի դեմ:

Նա և աշակերտները «Մաշտոցից» ընթերցեցին դիվահալածության ողջ կարգը, և դա արվեց առավել սրտանց ու հոգով, քան՝ երբևէ: Կարգն ավարտելուց հետո հայտնեց նաև, որ կշարունակի գալ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ լինի:

Աղոթքից ու հուզմունքից ուժասպառ՝ նա վերադարձավ իր խուցը և ննջեց: Առավոտյան, դեռ ժամերգության չէր իջել, երբ դուռը ձեռքիցն այդ տան բնակիչները:

- Հայր սուրբ, դեռ հեռացել է,- հայտնեցին նրանք:

- Փառք տվեք Աստծուն,- պատասխանեց երիտասարդ վարդապետը:

ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՁԱՊԱՅՅԱՆ

Օրհնակի թեմի առաջնորդ

ԱՐՑՈՒՆՔ՝ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎՐԱ

Մեր, ինչպես և ցանկացած քրիստոնյայի կյանքում, շատ հրաշքներ են պատահել, սակայն մեր կարծիքով զրո արժանի են այս երկուսը:

2003 թվականին էր, սուրբ Վարդանանց տոնի ժամանակ: Պատարագ էր մատուցվում Կրասնոդարի սուրբ Ավետարանաց եկեղեցում: Պատարագի խորհրդավոր պահերից մեկին զգացի, որ խորանի վրա դրված նկարի մեջ սուրբ Աստվածամոր աչքից արցունքի մի կաթիլ կաթեց Հիսուսի ձեռքին պատկերված Ավետարանի վրա: Կարծեցի, թե ինձ թվաց, սակայն ժամանակ էր անցնում, իսկ արցունքը չէր չորանում: Հրավիրեցի ինձ սպասարկող հոգևորականներին, սպասավորներին և հարցրեցի, թե ի՞նչ են տեսնում նկարի վրա: Նրանք էլ միաբերան հաստատեցին, թե Ավետարանի վրա արցունքի կաթիլ կա:

Պատարագից հետո նույնը հավաստեցին նաև հավատացյալները: Այդ արցունքի փայլը Տիրոջ ձեռքի վրայի Ավետարանին մնաց ևս մեկ շաբաթ, մինչև որ սարկավազը, հետաքրքրասիրությունից դրդված, մատով փորձեց շոշափել: Այդ ժամանակ արցունքի կաթիլն անհետացավ:

Մեր կարծիքով դա Աստվածային նշան էր, քանի որ այս դեպքից մեկ շաբաթ անց բարբարոսները ջարդեցին Կրասնոդար քաղաքի հայկական գերեզմանոցի 50 գերեզմանաքար: Կարծես թե այդ արցունքի կաթիլը թափվեց ջարդված շիրմաքարերի ու բրիստոնյաների պղծված շիրիմների համար:

ԽՈՒՆԿԻ ԲՈՒՅՐԸ

2005 թվականի մայիսի 8-ին Դաղստանի հանրապետության հայաշատ Կզլար քաղաքում կատարեցինք սուրբ Սարգիս մատուռի բացման արարողությունը, իսկ հաջորդ օրը մեկնեցինք Դաղստանի Դերբենդ քաղաքը, որը հինգ հազար տարվա պատմություն ունի և նրա պատմության մեջ քիչ դեր չեն խաղացել հայերը: Քաղաքի կենտրոնում վեր է խոյանում հայկական մի գեղեցիկ եկեղեցի, որի վրայից, ցավոք, հանել են խաչերը: Ասենք նաև, որ 120 հազար բնակչություն ունեցող քաղաքում ապրում է 3 հազար հայ, 5 հազար ռուս, իսկ բնակչության մեծ մասը ադրբեջանցիներ ու լեզգիներ են:

Հեռվից նայեցինք փառահեղ եկեղեցուն և տեղի հայ համայնքի ներկայացուցիչներին խնդրեցինք, որ մեզ տանեն այնտեղ: Եվ քանի որ թաղամասն ամբողջովին ադրբեջանաբնակ էր, ազգամիջյան որևէ ընդհարում թույլ չտալու համար հանեցինք հոգևորականի հագուստը և գնացինք որպես սովորական քաղաքացիներ:

Այժմ եկեղեցին վերածվել է Կովկասի ժողովուրդների պատմության թանգարանի: Բավական ցուցանմունչներ կային այնտեղ, որոնցից ոչ մեկը հայկական չէր: Ավելին, եկեղեցու վրայից քերել, հանել էին հայկական արձանագրությունները: Այդ եկեղեցում վերջին անգամ արարողություն էր կատարվել 20-րդ դարի սկզբին: Լուռ ցավ ապրեցինք, մանավանդ այն բանից հետո, երբ ադրբեջանցի բացատրողը ոչ մի հիշատակություն չա-

րեց ո՛չ հայերի, ո՛չ նրանց կառուցած եկեղեցու մասին: Մենք խնդրեցինք, որ թույլ տան թանգարանում երգել: Նրանք չգիտեին մեր հոգևորական լինելը և չառարկեցին: Սկսեցինք երգել նախ «Հայր մերը», ապա՝ «Տեր ողորմեան»: Եվ երբ վերջացրինք երգը, շինությունը լցվեց խունկի բույրով: Դա զգացինք ոչ միայն մենք՝ հոգևորականներս, այլև համայնքի անդամներն ու անգամ թանգարանի ադրբեջանցի աշխատակիցները:

-Ովքե՞ր եք դուք,- զարմացած հարցրեցին թանգարանի աշխատակիցները և երբ իմացան, որ հայ հոգևորականներ ենք, լուրն անմիջապես տարածեց թաղամասում: Եվ մենք, անվտանգուժյան նկատառումներից ելնելով, ստիպված եղանք շուտափուլթ կերպով հեռանալ քաղաքից: Հիմա՝ տարիներ անց, ամեն անգամ Դերբենդ քաղաքը հիշելիս այդ օրն եմ հիշում և եկեղեցով մեկ չգիտես որտեղից և ինչ հրաշքով տարածված խունկի բույրը:

ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ

ԻՆՉՈՒ ԱՌԱՋ ՉԵՐ ՇԱՐԺՎՈՒՄ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՆ

Շուշի քաղաքից պետք է գնայինք Վաղուհաս՝ պսակադրություն կատարելու: Այդ առավոտ իմ մեքենան հնարավոր չեղավ գործարկել: Խնդրեցի, որ Տեր Հովհաննես քահանան իր մեքենան տրամադրի: Վերցրի մեքենան և ճանապարհ ընկա: Ճանապարհն անցնում էր անտառի միջով: Հասա ճանապարհի կեսին և մեքենայի շարժիչը հանգեց: Հետո մի կերպ գործարկեցի, բայց զարմանալի բան էր կատարվում՝ մեքենան առաջ չէր շարժվում, իսկ ետ շարժվում էր: Երեք անգամ փորձեցի անցնել ճանապարհի այդ հատվածը, բայց ինձ չհաջողվեց: Ռացիայով կապվեցի Տեր Հովհաննեսի հետ, ներկայացրեցի իրավիճակը,

խորհուրդ հարցրեցի, սակայն դա էլ չօգնեց: Իջա մեքենայից, նայեցի շրջակայքը և, այ քեզ զարմանք, հենց մեքենայի դիմաց, մի քանի մետր այն կողմ հակատանկային ական էր քողարկված: Երբ նկատեցի ականը և նստեցի ավտոմեքենան, այն աշխատեց: Շրջանցեցի վտանգավոր տեղամասը և առաջ գնացի: Ինչ խոսք, այս դեպքից հետո մի անգամ էլ փառք տվեցի Աստծուն, որ այդպես հրաշալի կերպով պահպանում է Իրեն ապավինողներին:

ԱՂԹՔԸ ՎԱՅԱՆ Է ՄԱՐԴՈՒ ՅԱՄԱՐ

Արցախյան պատերազմի օրերին էր, ավելի ստույգ՝ 1992 թվականի դեկտեմբերի 30-ին: Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի թեմական խորհրդի անդամ Ռոբերտի հետ գնացել էինք Մարտունու շրջանի ձարտար գյուղ: Երբ առաջադրանքը կատարեցինք, շարժվեցինք դեպի շրջկենտրոն: Հանկարծ աղբբեջանական կողմը սկսեց «Գրադով» հրետակոծել: Դաշտում աշխատող մարդիկ, նրանց հետ էլ՝ մենք, ապաստանեցինք մոտիկ անասնազոմում: Այնտեղ կար մոտ 150-160 մարդ, գոմը լեփ-լեցուն էր անասուններով: Թշնամին թիրախ էր դարձրել այն և հարվածում էր մոտ 40 րոպե: Ես՝ հոգևորականս, ի՞նչ կարող էի անել աղոթելուց բացի: Կանգնեցի մի անկյունում և սկսեցի աղոթել: Բազմաթիվ արևեր կպան գոմին, բայց ոչ մի մարդ չվնասվեց: Իմ, և ոչ միայն իմ կարծիքով, թշնամու «Գրադի» առաջ վահան դարձավ աղոթքը: Այդ դեպքից հետո շատերը դարձի եկան և հավատացին Աստծուն:

ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՅԱՄՅԱՆ

ՀՀ Պաշտպանության Առխարարի
հոգևոր խորհրդական

ԻՆՁ ՓՐԿՈՂ ՁԵՌՔԸ

Ես ծնվել եմ Կ. Պոլսում: Մեր ընտանիքն աղքատ էր և չէր կարողանում բնակվել քաղաքի կենտրոնում: Տուն էինք շինել մի շրջանում, ուր գրեթե բնակչություն չկար: Չկար նաև ջուր, էլեկտրականութուն: Այդ բոլորը հետագայում եղան: Մի խոսքով, մանկութունս այդ թաղամասում եմ անցկացրել: Հիմա ստույգ չեմ կարող ասել, թե այդ ժամանակ քանի տարեկան էի, բայց երևի մի չորս-հինգ տարեկան կլինեի: Հավանաբար 1966 կամ 1967 թվականը պիտի լիներ: Մեր թաղամասում էլեկտրականութուն անցկացնելու համար մեծ սյուներ էին տնկելու և խոր փոսեր էին փորել: Մի օր տեղատարափ անձրև սկսվեց, իսկ հետո երկինքը պարզեց: Ես հետաքրքրասեր երեխա էի: Գնացի այդ փոսերի մոտ և տեսա, որ դրանք լի են ջրով կամ ավելի ճիշտ՝ ջրախառն տիղմով: Բոլոր երեխաների նման ես էլ էի սիրում ջուրն ու ցեխը: Մոտեցա ջրափոսին, սկսեցի նայել, հետո չեմ հիշում. ո՞տքս սահեց, թե՞ ինքս մտա փոսի մեջ: Չվախեցա, երբ ցեխաջուրն սկսեց կամաց-կամաց կլանել ինձ: Նախ ընկղմվեցի մինչև գոտկատեղս, հետո՝ մինչև կոկորդս, հետո ցեխաջուրը ծածկեց ինձ: Սկսեցի ինձ փրկելու համար ճիգեր գործադրել, բայց ավելի խորն ընկղմվեցի:

Սակայն հանկարծ զգացի, որ մի ձեռք հետևի կողմից բռնեց իմ օձիքից, քաշեց, հանեց ցեխաջրի միջից և կանգնեցրեց ջրափոսի կողքին: Ես ձեռքը չտեսա, բայց այն զգացի: Ջուրն ու ցեխը թափվում էին վրայիցս: Զարմացած նայում էի շուրջս, բայց շուրջբոլորն ամայի դաշտ էր, և ոչ ոք չկար:

Գնացի տուն, ծեծ կերա ցեխոտվելու համար... Բայց մինչև օրս չեմ մոռացել ինձ օգնող, ինձ փրկող ձեռքի զգացողութունը:

Հիմա, երբ տարիներ են անցել, մտածում եմ, թե դա Աստծո ողորմությունն էր, որ հասավ ինձ: Դեռևս մեռնելուս ժամանա-

կը չէր, և Աստված այլ ծրագրեր ունեւր ինձ հետ կապված, դրա համար էլ միջամտեց ու փրկեց ստույգ մահից:

Նաև հավատացյալ ծնողներ ունեւր և մեծ մամիկ, որոնք միշտ աղոթում էին ինձ համար: Ես հիմա հաստատ համոզված եմ, որ դա գերբնական միջամտութիւնն էր իմ կյանքի ընթացքին:

ՅԱՅԱՅԻՍ «ՄԱՅԸ»

Մորս մայրը, որին Յայա էինք ասում, շատ հավատաւոր կին էր, և նրա հետ մի քանի անհավատալի դեպքեր են կատարվել, որոնք ես ուզում եմ շարադրել այստեղ: Նա Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծանր հիվանդանում է: Այդ ժամանակ նրա ամուսինը ծառայում էր թուրքական բանակում, իսկ մորեղբայրս, որ վեց ամսական երեխա էր, խանձարուրի մեջ էր: Տատիս մյուս զավակները դեռևս ծնված չեն լինում:

Ապրելիս են լինում են մի խուլ գյուղում և ո՛չ բժշկական օգնութիւն ակնկալիք կար, ո՛չ հույս:

Զարմանալի չթվա ասածս: Տատս հիվանդանում է և... մահանում: Մի չորս ժամ մահացած է լինում, դիակը՝ արդեն սևացած: Մարդիկ գալիս են, լաց լինում վրան, թաղման պատրաստութիւն են տեսնում: Սակայն մահից չորս ժամ անց, ի սարսափ և ի ուրախութիւն ներկաների, մահացածը վերակենդանանում է:

Հետագայում, մինչև իր կյանքի վերջը, նա մեզ պատմում էր այն ամենը, ինչ ինքը տեսել էր «մահվանից հետո»:

-Ես անկողնում պռկած էի,- ասում էր,- դրսից հարսանիքի ձայներ լսեցի: Նվազում էին, երգում, բացականչում: Հետո վեր կացա անկողնուց, դուռը բացեցի ու տեսա, որ տարօրինակ, բայց տոնական հագուստներ հագած մարդկանց ուրախ թափոր է անցնում:

- Դու ել արի,- ասացին,- ու ես միացա նրանց: Ջարմանալին այն էր, որ այնտեղ մեր ծովափնյա Թաշքյուփլու գյուղից ոչ ոք չկար: Գնացի նրանց հետ այնքան, մինչև որ հասանք մի մեծ կամրջի: Տարածքը մեր գյուղին կամ մեր տարածքին նման չէր բոլորովին: Անդունդի վրայով էր անցնում այդ կամուրջը: Նրա տակ, որոշ տեղերում կրակներ կային, որոշ տեղերում՝ անամոթ, անպարկեշտ, անպատմելի տեսարաններ: (Դրանց մասին հիշելիս նա ամաչելով փակում էր դեմքը, չէր պատմում):

- Հետո,- ասում էր,- երբ հասա կամրջի մեջտեղը, հիշեցի մանկանս ու հետ դարձա:

- Ո՛ւր ես գնում,- զարմացան թափորի մարդիկ,- առաջ պիտի գնանք:

- Չէ՛,- առարկեցի,- ես մանուկ ունեմ,- ու եկա մեր գյուղ, մտա տուն: Թափորն էլ՝ ինձ հետ: Եկել, քաշում էին, թե՛ արի: Ես սկսեցի լաց լինել և պաղատել, որ ինձ թողնեն.

- Երեխաս որբ կմնա, ամուսինս բանակում է,- լալիս էի...

Եվ հանկարծ այդ լացիս ժամանակ ներս մտավ երկար հասակով, երկար մազերով մեկը: Հասկացա, որ Հիսուսն է, չնայած նրա անունը չտվեցին:

- Ի՞նչ է պատահել,- հարցրեց:

- Ձի ուզում գալ,- պատասխանեցին:

Ես ընկա նրա ձեռքերին և աղաչեցի.

- Վեց ամսական զավակ ունեմ, ես որ գամ, նա որբ կմնա: Ամուսինս բանակում է...

- Թողեք, թող մնա,- ասաց և նրանք գնացին, իսկ ես վերակենդանացա:

Ե՛Վ ՊԱՏԻԺ, Ե՛Վ ՕԳԼՈՒԹՅՈՒՆ

Չնայած նրան, որ Եղեռնից բավական ժամանակ էր անցել, Թուրքիո մեջ գավառում ապրելը բավական դժվար էր, և մեր ընտանիքը որոշում է գալ քաղաք: Թուրքերը շրջաններում շարունակում էին ճնշել հայերին, իսկ Պոլսում ազգային հալածանքից ու սոցիալական ծանր վիճակից ազատվելը համեմատաբար հեշտ էր:

Սակայն Պոլսում նույնպես նրանց ապրուստը հեշտ չէր, ապրում էին աղքատության մեջ, այս պայմաններում նա հղիանում է: Հղիանում է, բայց չի ցանկանում ծննդաբերել: Եվ քանի որ բժշկի դիմել չէր կարող՝ միջոցներ չկային, փորձում է տնական եղանակներով ազատվել անցանկալի երեխայից:

Երազում նրան մարդիկ են այցելում և զգուշացնում.

- Դու այս գավաղը պիտի ծնես, այլապես շատ վատ կլինի քեզ համար:

Բայց ընտանիքն աղքատ է, ապրուստ չկա, և նա չի ցանկանում լսել զգուշացումն ու ազատվում է անցանկալի պտղից:

Որոշ ժամանակ անց, երբ ճաշ պատրաստելիս է լինում, հանկարծակի բռնկվում է նավթավառը: Կրակից բռնկվում է նաև նրա հագուստը, այրում մարմինը, մազերը, աչքերը... Շատ ծանր վերքերի մեջ է լինում, որոնցից թեև մի կերպ ապաքինվում է, սակայն կորցնում է մի աչքը: Սակայն աշխատում էր չտրտնջալ, քանի որ դա իր համար պատիժ էր համարում, իրեն արած զգուշացումը չլսելու համար: Չնայած այդ ծանր ֆիզիկական վիճակին, հղիանում է և ունենում է չորրորդ գավաղը:

...Հետաքրքիր է նաև Յայայիս վախճանը: Կյանքի վերջին շրջանում ինքը շատ էր գիրացել և գրեթե դուրս չէր գալիս տանից:

- Հոգիս ձեր բուրբի հետ շրջում է աղոթքով,- ասում էր:

Իր մահից տասնհինգ տարի առաջ նա կաթված տարավ: Չէր կարողանում խոսել, և բժիշկները կանխատեսում էին վախճանը: Պառկած էր անշարժ, և զավակները հերթով հերթապահում էին: Այդ օրը մայրս է լինում հերթապահ: Խոհանոցից դալիս է հիվանդին նայելու և ... ով զարմանք, տեսնում է, որ Յայան վեր է կացել ու նստել է անկողնում:

-Այս ի՞նչ եղավ,- զարմանում է մայրս,- ինչպե՞ս նստեցիր:

-Հիսուսը բարձրացրեց,- ասում է նա, որ նաև սկսել էր խոսել,- ես պառկած էի, աղոթում և լաց էի լինում՝ Նրան խնդրելով, որ կամ բժշկի ինձ, կամ՝ տանի: Հանկարծ զգացի, որ մի գորավոր ձեռք, թիկունքիցս հրելով, ինձ բարձրացնում է: Բարձրացրեց և նստեցրեց:

Նա ապրեց ևս տասնհինգ տարի, այդպես նստած, ամեն ժամ և ամեն օր աղոթում էր մեզ համար, մինչև որ կնքեց մահ-կանացուն:

ՍԱՅԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆ

Կ. Պոլսի աթոռի միաբան

ԵԿԵՂԵՑՈՒ ՅՐԱՇԱԳՈՐԾ ԲԱՆԱԼԻՆ

Այս դեպքն անձամբ ինձ հետ չի կատարվել: Այն ինձ պատմել են ականատեսները: Մարդը պատմում էր, որ ինքը զավակ է ունեցել, որը երկար ժամանակ չի խոսել: Հետո լսել է, որ երեխայի լեզուն բացելու համար նրան պետք է տանել Գեղարդա վանք, և առավոտ վաղ, դեռևս եկեղեցու դուռը չբացած, բանալիով օրհնել տալ երեխային: Քանզի շատ են այն դեպքերը, երբ երկար ժամանակ չխոսած երեխան դրանից հետո սկսում է խոսել:

- Առավոտյան կգնանք Գեղարդ, որոշեցինք մենք,- ասաց մարդը,- սակայն առավոտյան վեր կացանք և տեսանք, որ ձյուն է եկել: Մի պահ հուսահատվեցինք, բայց հետո որոշեցինք գնալ և երեխային օրհնել տալ եկեղեցու դռան բանալիով: Մի կերպ, երկար տանջանքներից հետո հասանք Գեղարդ...

Հասել էին, սակայն մի քիչ ուշացել էին, քանի որ արդեն բացվել էր եկեղեցու դուռը: Նորից հուսահատության մեջ էին ընկել, բայց այդ հուսահատությունը փարատել էին հոգևորականները:

- Ոչինչ,- ասել էր քահանան,- թեև եկեղեցու դռներն արդեն բացվել են, բայց բացողները եկեղեցու սպասավորներն են...

Ինչևէ, քահանան եկեղեցու բանալիով օրհնել էր երեխային և նա անմիջապես սկսել էր խոսել:

ՏԻՐԱՄՈՐ ՀՐԱՇԱԼԻ ԵՐԵՎՈՒՄԸ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

- Գիտեմ, որ հավաքում եք վերջին ժամանակներս Հայ Առաքելական եկեղեցում տեղի ունեցած հրաշալի դեպքերը,- ասաց Գաբրիել աբեղա Սարգսյանը,- նման մի հրաշքի մասին էլ ես գիտեմ: Այն պատմել է Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը: Արցախյան պատերազմի տարիներին, երբ ռազմաճակատում մեր վիճակն այնքան էլ լավ չէր, գինվորները մարտի պիտի գնային, և նրանցից յուրաքանչյուրի դեմքին թախիժ ու մտահոգություն կար, երկնքում երևաց սուրբ Աստվածամոր պատկերը:

Սրբազանի ասելով՝ նրա դեմքը մի քիչ տխուր ու թախծոտ է եղել: «Կարծես նա եկել էր մեզ իր զավակների պես գրկելու և ասելու՝ ոչինչ, դուք թվով քիչ եք, սակայն հարցը քանակի մեջ չէ, այլ՝ ոգու: Ձեր գործն արդար է»,- ասում էր Պարգև Սրբազանը: Այդ երևումը ոգևորել է գինվորներին, նրանց նոր հաղ-

Թանակների մոդել: Բացի այս դեպքից, պատերազմի ժամանակ եղել են Տիրամոր այլ երևումներ ևս:

ԳԱԲՐԻԵԼ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՕՐՅՆՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈ ՎԵՐԱԴԱՐՁԱ ԵՐԿՐԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Այն, ինչի մասին ուզում եմ պատմել, շատերին անիրական, ֆանտաստիկ կլթվա: Ինքս էլ, գուցե այնքան էլ չհավատայի, եթե լսեի մեկ ուրիշից, քանզի կարծում էի՝ անհավանական է լինել Արարչի մոտ և այնուհետև վերադառնալ երկիր:

2006թ. նոյեմբերի 9-ը կարծես ոչնչով չէր տարբերվում մյուս օրերից: Սուրբ Գայանե եկեղեցուց, որի վանահայրն եմ, օրվա ծառայությունները կատարելուց հետո, ժամը 18:30-ի սահմաններում իմ մեքենայով ուղևորվեցի Երևան. մի քանի օր առաջ պայմանավորվածություն ունեի համապատասխան գրքեր վերցնելու՝ իմ վարդապետական ատենախոսությունը գրելու համար:

Մեքենան արագ վարելու սովորություն երբևէ չեմ ունեցել. կարծում եմ այդ օրն էլ չեմ գերազանցել արագությունը: Երևի թե հոգնածությունը գումարվել էր աշնանային մռայլ մթնշաղը, այդ պատճառով կոպերս ծանրանում էին և մերթնդմերթ փակվում (միգուցե սրանք դատարկ պատճառաբանություններ են, և ամեն ինչ որոշված էր ի վերուստ): Մոսսալեռի կամարն անցնելուց հետո չնկատեցի շրջադարձ կատարել պատրաստվող հսկա բեռնատարը, և տեղի ունեցավ սարսափելի վթարը:

Ականատեսների վկայությամբ՝ իմ ջախջախված մեքենային նայելով՝ ոչ ոք չէր ասի, թե վարորդը ողջ է մնացել: Ուշքի գալուց հետո՝ ամիսներ անց, պիտի հիշեմ, որ վթարի պահին կարծես աներևույթ մի ուժ հետ քաշեց իմ նստատեղը և կոտրեց:

Այն դժոխային տվայտանքները, որ ապրել էին իմ հարազատները, և հատկապես, ծնողներս, մինչև հիմա դրոշմված են նրանց աչքերում, քանի որ ո՛չ Էջմիածնի հիվանդանոցում, և ո՛չ էլ Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում բժիշկներից ոչ ոք հույսի նշույլ անգամ չի ունեցել, թե ես կյանք կվերադառնամ:

Հիվանդանոց տեղափոխելուց երկու ժամ հետո այնտեղ եկավ նաև Ամենայն Հայոց Հայրապետը՝ Գարեգին Երկրորդը: Վերակենդանացման բաժանմունքի ղեկավարի հետ կարճ առանձնազրույց ունենալուց հետո հուզված դուրս եկավ և ասաց. «Մեզ մնում է աղոթել առ Աստված, որ նա կյանք պարգևի հայր սուրբին»:

Համոզված եմ, որ ծնողներիս, Վեհափառի և իմ եղբայր հոգևորականների, իմ մյուս քույրերի ու եղբայրների աղոթքներն էին, որ հասու եղան Հայր Աստծուն:

22 օր «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում անգիտակից վիճակում մնալուց հետո՝ 23-րդ օրվա կեսին, աչքերս բացեցի և առաջինն ավագ եղբորս տեսա, որ այդ ողջ ընթացքում պահպան հրեշտակի նման եղել էր կողքիս:

Այդ սարսափելի դեպքից արդեն ամիսներ են անցել: Օր-օրի, կաթիլ-կաթիլ, Աստծո օրհնությամբ, ծնողներիս, բժիշկների օգնությամբ վերականգնում եմ ուժերս: Կարծում եմ՝ հեռու չէ այն օրը, երբ ի գորու կլինեմ շարունակել իմ առաքելությունը...

Իսկ այժմ թույլ տվեք անցնել այս պատմության ամենակարևոր հատվածին:

Վթարից անմիջապես հետո ես կարծես տեղափոխվեցի մի ուրիշ աշխարհ: Քաղցր նինջը պատեց աչքերս, և ես սկսեցի բարձրանալ: Մարդկային լեզուն ի գորու չէ նկարագրել իմ տեսած գեղեցկությունը: Անծայրածիր կանաչ տարածություններ՝

ծաղկազարդ ու խնկաբույր: Այդ վայրը թվում էր այնքան սքանչելի, որ կարող էի մի հավիտենություն անհոգ ապրել:

Այս դրախտային վայրում մի մեծ ու գեղեցիկ տուն կար: Ներս մտնելով՝ տեսա մի սպիտակամորուս, փառահեղ ծերունու, որն ինձ ընդառաջ էր գալիս: Ես անմիջապես հասկացա, որ ինձ մեծ բախտ է վիճակվել, սեփական աչքով տեսնել ՆՐԱՆ՝ տիեզերքը արարողին, մեր բոլորի Հայր Աստծուն: Ողջունելուց հետո ինձ ծանոթացրին տան պայմաններին: Այստեղ ինձ հյուրասիրեցին երկնային ուտելիքներով՝ սուրբ հացով և փլավով: Ինձ համար ամենազարմանալին այն էր, որ այնտեղ կար ինչ-որ հսկա իր, որը ցույց էր տալիս, թե ինչ է կատարվում երկրում: Այդ հիասքանչ վայրում շատ մարդիկ կային: Մարդկանց հոգիներում տիրում էր խաղաղություն և անհոգություն: Նրանց մեջ ես ճանաչեցի մեր հարևանուհիներից մեկին (որը, ինչպես հետագայում իմացա, մահացել էր իմ վթարի ենթարկվելուց մի քանի օր անց):

Այն, ինչ կատարվում էր այս դրախտային վայրում, պարզապես հրաշք էր: Այստեղ կարծես չկար ժամանակ, համենայն դեպս, ես այն չեմ զգացել: Ինքս ինձ զգում էի հավիտենակնության ու երանության գրկում: Ամեն ինչ անեղծ ու անբասիր էր, հետաքրքիր, հիասքանչ: Մեզ տեղեկացնում էին ամեն բանի մասին, մենք տեսնում էինք ամեն ինչ:

Միառժամանակ հետո, սպիտակափառ ծերունին, ինքը՝ Հայր Աստված, կանչեց ինձ և ասաց, որ պետք է վերադառնամ երկիր՝ ծնողներին և ինձ սպասող մյուս մարդկանց մոտ: «Ես քեզ հետ եմ ուղարկում երկիր, - ասաց նա, - հորդ ու մորդ մոտ, և քեզ տեսնելով՝ շատ մոլորյալներ դարձի են գալու ու հավատալու են ինձ»:

Ես ասացի, որ չեմ կարող վերադառնալ, քանի որ հետդարձի ճանապարհը չգիտեմ: Նա մի հրեշտակի կարգադրեց ուղեկցել ինձ:

Վայրէջքը նույնքան հուզիչ էր, որքան վերելքը: Իջնելիս աչքս ընկավ խոր գետնախորշերի, որտեղից մարդկային սրտակեղեք ձայներ էին լսվում: Այդ չարագուշակ փոսերում ես տեսա հսկայագլուխ շներ (կարծեմ՝ Կերբեր էին անվանում): Այդ գազանների երախն այնքան մեծ էր, որ մարդ առանց դժվարության կարող էր մտնել այնտեղ և դուրս գալ: Հրեշտակն ասաց, որ դրանց մոտ գցում են չար մարդկանց:

Քիչ անց հրեշտակն այլևս ինձ հետ չէր:

Հետդարձս կատարված էր: Ես երկրի վրա էի՝ շրջապատված ինձ հարազատ մարդկանցով:

ՄԱՍԲԻՆ ԱԲԵՂԱ ՏԱՇՉՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ ԿՈՒՐԱՑԱԾ ԿԻՆԸ

Այս պատմությունն ինձ պատմել է Ջարեհ Մայրագույն վարդապետ Պարոնյանը, որ իմ դասընկերն է եղել: Մեր ուսանողության տարիներին՝ անցած դարի վաթսուհինգական թվականներին, մենք ամեն ամառ երկու-երեք ամսով գնում էինք Սուրբ Գեղարգ:

Ամռան մի առավոտ, երբ դեռևս մոմերը վառված էին, և դեռ լույսը չէր բացվել, ծեծեցին վանքի դուռը: Վեր կացա, տեսա՝ ուխտավորներ են:

- Դեռ լույսը չի բացվել,- ասացի:

- Չգիտեմ՝ լույսը բացվե՞լ է, թե՞ ոչ,- տնքաց կինը, որովհետև արդեն վեց ամիս է, որ կուրացել եմ ու ոչինչ չեմ տեսնում...

Պարզվեց, որ նա գյուղերից մեկի դպրոցի ուսմասվարն է, կոմունիստ, անհավատ: Ինչ-ինչ պատճառներով կուրացել է:

Շատ բժիշկներին է դիմել, բայց ոչ ոք հույս չի տվել: Բոլորի արտորոշումը մեկն է եղել. կուրուլթյուն, որ բուժել հնարավոր չէ:

Մի քանի օր առաջ կինը երազ է տեսնում: Երազի մեջ նրան ասում են.

- Գնա Գեղարդա վանք, մատաղ տար, և աչքերդ կբացվեն:

Այս երազ-տեսիլքը կրկնվում է երեք անգամ: Եվ եկեղեցի գալուց առաջ, կեսգիշերին կինն արթնացնում է ամուսնուն.

-Վեր կաց,- ասում է,- ես հավատում եմ, որ Աստված կբժշկի ինձ: Ես հավատում եմ Աստծու զորությանը:

Աղամամութիւն բացեցին վանքի դռները, և վանահայր Հայր Մուշեղն սկսեց աղոթել: Աղոթքի կեսից կինը ձայն տվեց.

-Տեսնո՞ւմ եմ:

Բոլորը թափվեցին վարդապետի վրա և սկսեցին համբուրել ձեռքերը, փեշերը:

-Ես մեղավոր մարդ եմ,- շշնջաց վարդապետը,- խնդրում եմ Աստծո հրաշքը մի վերագրեք մեղավորիս: Եվ թույլ տվեք, որ աղոթքս ավարտեմ:

Աղոթեց վարդապետը, փառք տվեց Աստծուն իր աղոթքը լսելու և կնոջ տեսողությունը վերադարձնելու համար, իսկ կինը և իր հարազատները մատաղ անելուց և ուխտը կատարելուց հետո վերադարձան տուն:

... Այս մյուս դեպքը ես տեսել եմ իմ սեփական աչքերով: Դարձյալ Գեղարդա վանքում էր, դարձյալ իմ ուսանողության տարիներին (1957-1963թթ.): Ականատես եղա, թե ինչպես հենակներով մի կերպ քայլող մարդը եկավ ուխտ, լվացվեց Գեղարդի վանքի մեջ բխող աղբյուրի ջրով և հենակները նետելով, առանց ցավի տուն վերադարձավ:

ԽԵՆԹԻ

ՀՐԱՇԱԼԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Դարձյալ անցած դարի վաթսուհակա՛ն թվականներին էր: Մի անգամ մտա Մայր տաճար և հանկարծ անսովոր աղմուկ լսեցի: Պարզվեց՝ մի քանի հոգի մի կերպ բերում են կապկպված մի խենթի: Պարաններով ամուր կապել էին ոտքերն ու ձեռքերը, այնպես ամուր էին կապել, որ կարծես գերան բերելիս լինեին: Ես սյունի տակ կանգնած նայում էի: Բերեցին նրան ու դրեցին Իջման սեղանի առջև: Տեր Մկրտիչ քահանան սկսեց աղոթել: Անցավ որոշ ժամանակ, հիվանդը բացեց աչքերը, նայեց շուրջը և հարցրեց.

-Ինձ ինչու՞ եք կապել, արձակեցե՛ք:

Հիվանդի տերերը նայեցին քահանային:

-Արձակեցեք,- հանդարտ ասաց նա:

Կապերն արձակեցին, նա վեր կացավ, ծնկեց և ծնկաչոք երեք անգամ պտտվեց Իջման սեղանի շուրջը, հետո եկավ, խաչը համբուրեց, ոտքի կանգնեց և հեռացավ՝ Աստծուն փառք տալով:

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ԶԱՅԱՆԱ ԳՐԼԸՃՅԱՆ

ք. Էջմիածին

ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ

ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾ ԵՐԵՒԱՆ

Հավանաբար 1956 թվականի վերջն էր կամ 1957 թվականի սկիզբը: Ես այն ժամանակ Մայր տաճարի լուսարարապետի պաշտոնակատար էի: Մի օր եկեղեցի մտավ մի մարդ՝ մի երեխա շալակած: Երեխային դրեց վայր, հետո ձեռքերը երկինք պարզելով՝ բարձր ձայնով սկսեց Աստծուն աղերսել, որ բժշկի խեղճ

անդամալուծին: Իսկապես երեխան թույլ էր: Ամեն ինչից երևում էր, որ նա հիվանդ է փայտացումով կամ պոլիոմելիտով: Հայրն աղաղակում էր՝ խանգարելով եկեղեցու ժամերգությունը, նաև՝ աղոթող մարդկանց: Մոտեցա նրան՝ փորձելով խնդրել, որ մի քիչ ցածրաձայն աղոթի, մտածելով նաև՝ խնդրել եկեղեցու փորձառու հոգևորականներից մեկին, որ բժշկության Ավետարան կարդա երեխայի վրա: Կարծում էի, որ տարեց հոգևորականն ավելի փորձառու է այդ հարցում, իսկ ես հազիվ 24 տարեկան էի... Բայց հետո այնպես ստացվեց, որ ես ստիպված եղա զբաղվել նրանով:

Ժամերգությունից հետո երեխայի հետ ծունկի եկա Իջման սեղանի առջև և սկսեցի աղոթել: Կյանքիս մեջ եթե մի քանի տասնյակ անգամ ամեն ինչ մոռացած, վերացած աղոթքի եմ կանգնել, հավատացե՛ք, որ մեկն այդ օրն է եղել: Ամբողջ էությամբ տրված էի աղոթքին և Տիրոջը խնդրում էի, որ օգնի թշվառ երեխային: Աղոթքի մի պահի ինձ թվաց, թե լսելի եղավ աղերսանքս, կարծես թե լսեցի Աստծո ձայնը, ներշնչանք եկավ վրաս, որն ասում էր, թե երեխան արդեն պիտի ոտքի կանգնի: Ահա այդ էր պատճառը, որ աղոթքից հետո երեխային ղիմելով ասացի.

-Կանգնի՛ր:

-Պապի՛, - չնայած իմ երիտասարդ տարիքին՝ պատասխանեց տղան, - ես ինչպե՞ս ոտքի կանգնեմ, ախր ոտքերս թույլ են:

-Աստված քեզ բուժել է, - ասացի, - Նա քեզ անպայման կօգնի, կանգնի՛ր:

Եվ, ով զարմանք, նա կանգնեց: Այնպիսի տպավորություն էր, ասես ոտքի է կանգնում նորածին գառնուկը: Նա դեռևս օրորվում էր անվարժ ոտքերի վրա, բայց կանգնել էր: Երբ սա տեսավ հայրը, գոռոցով թավալվեց հատակին և սկսեց բարձրաձայն փառաբանել Աստծուն:

Վախենալով, որ հոր նման պահվածքը կարող է երեխային սթրեսի մեջ գցել, պաշտոնակիցներին խնդրեցի նրան դուրս տանել: Հետո դարձա երեխային ու ասացի.

-Հովհաննես,- այդպես էր նրա անունը, - Աստված պապիկը մեզ կանչում է վերևից:

-Բայց..., - զարմացավ նա:

-Ի՞նչ բայց,- չթողեցի, որ կասկածը նրան խանգարեր,- չէ՞ որ Աստված ամենակարող է և քեզ սիրում է: Ա՛յ, հիմա կանչում է, ասում է՝ բարձրացի՛ր խորան:

Հետո մի ձեռքով բռնեցի երեխայի ձեռքից, իսկ մյուս ձեռքով պահեցի մեջքից, որ անվարժ քայլքի պատճառով տղան հանկարծ չգայթի: Բարձրացանք Ավագ խորան: Բարձրացանք աստիճաններով, աղոթեցինք միասին, հետո դուրս եկանք Տաճարից և մի քանի պտույտ կատարեցինք եկեղեցու շուրջը: Ես ցանկանում էի, որ Հովհաննեսն ավելի երկար քայլեր և իր հոգում ամրապնդվեր բուժված լինելու միտքը:

Հետո Հովհաննեսի հետ գնացինք Վազգեն Վեհափառի մոտ:

-Վեհափա՛ռ, - ասացի, - հենց նոր կատարվեց Տիրոջ հրաշքներից մեկը: Այս երեխան, որ ծնված օրվանից անդամալույծ էր, սկսեց քայլել:

Ես և երեխան ծոնկի եկանք, ստացանք Վազգեն Վեհափառի օրհնությունը: Վեհը նաև ոսկյա խաչ նվիրեց տղային:

Հետո Հովհաննեսի ձեռքը բռնած՝ դուրս եկա Վեհարանից և նրան հորը հանձնելով՝ ասացի.

-Փառք տուր Աստծուն, որ խղճաց քեզ և բուժեց անդամալույծ երեխայիդ:

Որոշ ժամանակ անց նրանք դարձյալ եկան Էջմիածին՝ բերելով մի մեծ խոյ:

-Սա քեզ նվեր ենք բերել, - ասաց հայրը:

Ես հորը խնդրեցի, որ խոյը մատաղ անեն և Հովհաննեսն իր ձեռքով մատաղը բաժանի կարոտյալներին:

Տարիներ շարունակ երեխան ուխտ էր գալիս էջմիածին, հանդիպում էինք, բայց հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ ես երկար ժամանակով բացակայեցի Հայաստանից և կորցրեցի տղայի հետքը: Հիմա չգիտեմ՝ քանի՞ տարեկան է, որտե՞ղ է ապրում, ի՞նչ գործի տեր է, բայց չեմ մոռանում Աստծո մեծ ողորմածությունը նրա և նրա հոր հանդեպ: Դրա համար էլ հաճախ այդ դեպքը հիշելիս հուզվում եմ, բայց նաև միշտ փառք եմ տալիս Տիրոջը, որ երբեք չի գլանում իր ողորմածությունը Իրեն հուսացողներին:

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ԲԱՅԱՆԱ ԱՄՐԱՍՅԱՆ
ք. Էջմիածին

ԲՈՒԺԵՑ ՄՅՈՒՌՈՆԻ ԿԱԹՍԱՆ

Տղաս մեր բակի շների ու կատուների հետ խաղալիս նրանցից վարակվել էր սնկային հիվանդությամբ: Շատ ծանր հիվանդություն էր, որից մազերը թափվում էին, իսկ գլխի վերքերն այդպես էլ չէին լավանում: Մեկ տարի տարանք-բերեցինք մաշկա-վեներական հիվանդանոց: Այնքան դեղեր սրսկեցին, այնքան քսուքներ քսեցինք, բայց արդյունք չկար: Խեղճ երեխային ոչինչ չէր օգնում: Իսկ հիվանդությունը վերանայու փոխարեն առաջադիմում էր:

1991 թվականին էր, Վազգեն Վեհափառի վերջին մյուռոնօրհնեքի ժամանակ: Ընտանյոք հանդերձ գնացինք էջմիածին: Ծովածավալ բազմություն էր և մոտ գնալ չէր լինում: Ես այն ժամանակ վանքում էի աշխատում և սարկավազներից մեկին խնդրեցի ու նա տղայիս թաշկինակը տարավ, քսեց մյուռոնի կաթսային: Հետո թաշկինակը դրեցի երեխայի գլխին: Դրանից հետո հիվանդությունը վերացավ: Մազերը աճեցին: Դրանից

անցել է 15 տարի: Հետքը մի թեթև երևում է, բայց ընդամենը այդքան և ուրիշ ոչինչ: Եվ ես միշտ ասում եմ. եթե մյուսոսնի կաթսային կպչելիս մարդը բուժվում է, հապա մյուսոսնի կնիք ստանա՞լն ինչպիսի մեծ վահան է նրա համար:

ՏԻՐԱՄՈՐ ԵՐԵՎՈՒՄ՝ ԱՌԻՆՋԻ ԳԵՏԱՐԳԵԼԻ «ՍՈՒՐԲ ՆՇԱՆ» ԵԿԵՂԵՑՈՒՄ

2005 թվականին Առինջի Սուրբ Նշան եկեղեցու քահանան խորանի հետևի պատը մաքրելիս պատի վրա տեսնում է մի պատկեր: Ուշադրությամբ զննելիս պարզվում է, որ դա Տիրամոր անձեռակերտ պատկերն է: Այն հաստատ հին որմնանկարի մնացորդ է, ոչ էլ՝ մարդու ձեռքի գործ. պարզապես պատի վրա հայտնվել է Տիրամոր պատկերը: Այդ պատկերը պահպանվել է երկար ժամանակ: Եվ բազմաթիվ մարդիկ գնում են այն տեսնելու, աղոթելու, մոմ վառելու:

Ճիշտ է, այն կարծես թե այնքան էլ պարզ չէ, բայց ակնհայտ է, որ դա նույնպես հրաշալի հայտնություն է:

ՏԵՐ ՂԵՎՈՆԴ ԲԱՅԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԱՆՁԵՌԱԿԵՐՏ ՊԱՏԿԵՐ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՅՈՒՆԻ ՎՐԱ

-Մոտ մեկ ու կես ամիս առաջ հյուրեր էին եկել եկեղեցի: Նրանցից մեկը հանկարծ աջակողմյան սյունաշարի առաջին սյունի վրա նկատեց մորուքավոր տղամարդու պատկեր,- այսպես սկսեց իր պատմությունը Ապարանի «Սուրբ Խաչ» եկեղեցու քահանա տեր Վիրապը և շարունակեց,- հայտնի է, որ այս

եկեղեցիին կառուցվել է դեռևս 4-րդ դարում Գնթունի նախարարական տան իշխանների կողմից:

Վերը նշված երևումից որոշ ժամանակ անց, իսկ ավելի ստույգ՝ 2005թ. նոյեմբերի 21-ին՝ Ս. Աստվածածնին Տաճարին ընծայման օրը, այդ նույն սյունի վրա, նույն տեղում երևաց Տիրամոր պատկերը: Նա կանգնած էր՝ Մանուկը գրկում, մարդահասակից մի քիչ ավելի մեծ չափերի:

Պատկերն այնքան պարզ էր և այնքան կենդանի, որ հնարավոր չէր չտեսնել ու անտարբեր անցնել:

Դա մեծ իրարանցում առաջացրեց հավատացյալների շրջանում և օրեր շարունակ Հայաստանի տարբեր կողմերից մարդիկ գալիս էին տեսնելու այդ անձեռակերտ հրաշքը, մոմ վառելու և աղոթելու նրա առաջ:

Հետաքրքրական է նաև, որ գրեթե նույն ժամանակ Սուրբ Սեդանի վերևում, քարերի վրա առաջացած աղային կուտակումների մեջ, հայտնվել էր մի այլ պատկեր՝ ասես Հրեշտակի նկար լիներ: Ակնհայտորեն այն աղային կուտակում չէր, ոչ էլ խոնավության հետք կամ որևէ հավատացյալի վառ երևակայության արդյունք: Ցանկացած մարդ, եթե ուշադիր նայեր, անպայման կտեսներ նաև այդ պատկերը:

Իմ կարծիքով այս երևումը շատ պարզ բացատրություն ունի. Աստված բնակվել և բնակվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կամարների տակ, և Սուրբ Հոգին միշտ ուղղորդել է և այժմ էլ ուղղորդում է այդ Եկեղեցու ճամբարիտ, աստվածահաճո ընթացքը,- այսպես ավարտեց իր պատմությունը Տեր Վիրապ քահանա Ղազարյանը:

ՀԱՅ ԲԱՅԱՆԱՅԻ ԱՂՈԹՔԻ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Տարիներ առաջ, երբ ես Բոստոնի «Սուրբ Հակոբ» եկեղեցու քահանան էի, մի անգամ տեսակցության գնացի հիվանդանոցում գտնվող իմ ծխականներից մեկին: Մխիթարեցի նրան, աղոթեցի: Նա ինձ ասաց.

-Տեր Հայր, աղոթիր այս մարդու համար:

Մարդը նույն հիվանդասենյակում էր և՛ շատ ծանր վիճակում: Բժիշկները նրան ասել էին, թե իր հիվանդությունը բուժում չունի և խորհուրդ չէին տվել տուն գնալ: Ավելի լավ է մնա հիվանդանոցում, բժիշկների հսկողություն տակ, մինչև որ մահվան ժամը հասնի:

Գնացի մոտը, մի քիչ նստեցի: Բարի մարդ էր երևում: Ասացի.

-Գիտե՞ք, ես հայ քահանա եմ, ուզում եմ աղոթել Ձեզ համար:

-Տեր Հայր,- պատասխանեց,- ես հրեա եմ, միշտ գնացել եմ սինագոգ, հավատարիմ եմ եղել իմ կրոնին, բայց հիմա ինձ համար ով էլ որ աղոթի՝ ես սիրով կընդունեմ: Սիրտս սնող հինգ երակներն էլ փակ են, և իմ տարիքի պատճառով ինձ վիրահատել չի կարելի: Ես մահվան եմ դատապարտված, եթե Աստված չօգնի: Այնպես որ, խնդրում եմ աղոթեցեք ինձ համար:

Նախ և առաջ բանավոր ու սրտանց մի աղոթք ասացի, ապա «Փարատեան», հետո՝ «Պահպանիչ», և գնացի տուն:

Մի քանի օր անց դարձյալ եկա իմ հիվանդին այցելություն: Տեսա՝ հրեայի անկողինը դատարկ է:

-Այն մարդը մահացա՞վ,- հարցրեցի:

-Ոչ, Տեր Հայր, ի՞նչ եք ասում,- պատասխանեց իմ ծխականը:- Ձեր աղոթքից մի քանի ժամ անց բժիշկները եկան, նորից

քննեցին նրան և զարմացան: Հիվանդությունից հետք չէր մնացել: Դարձյալ քննեցին և համոզվեցին, որ սրտի խցանված երակները բացվել են: Փաստորեն հրաշք էր կատարվել: Հիվանդին խորհուրդ տվեցին մի օր էլ սպասել և եթե ոչինչ չպատահի, տուն գնալ, քանի որ իրենց անհայտ ինչ-որ ճանապարհով մարդն առողջացել էր:

Հաջորդ օրը մի վերջին քննություն կատարելով՝ նրան դուրս գրեցին հիվանդանոցից: Հրեան այն կարծիքին էր, որ իրեն բժշկել է հայ քահանայի աղոթքը:

* * *

Վեց ամիս անց՝ 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը, և այդ մարդը մի պատկառելի գումար նվիրեց մեր եկեղեցուն՝ որպես գնահատական և երախտգիտություն հայ քահանայի բժշկող աղոթքի:

ՈՏՆԱԼՎԱՅԻ ՅՐԱՇԲԸ

1965 թվականն էր: Նոր էի քահանա ձեռնադրվել: Ավագ հինգշաբթի օրն էր և Ոսնալվայի արարողություն պիտի անեի: Ես ուզեցի չորրորդ դասարանի տղաներին հրավիրել: Նրանց մեջ կար մեկը՝ շատ բարեպաշտ ընտանիքի երեխա: Զանգահարեցի մորը և հայտնեցի իմ ցանկությունը:

-Հնարավոր չէ, տեր հայր, - տխրությամբ պատասխանեց մայրը,- տղաս շատ ծանր մաշկային հիվանդություն ունի, որ տարափոխիկ է: Ոտքերի վրա վերքեր կան: Նրա այդ հիվանդությունը կարող է փոխանցվել ուրիշներին: Արդեն երկու տարի է, որ տղան տառապում է, շատ բժիշկների ենք դիմել, բայց չեն կարողացել բուժել:

-Ոչինչ,- ասացի, չեմ ուզում, որ տղան այդ պատճառով գրկվի այդ կարևոր իրադարձությունը մասնակից լինելուց: Թող

գա, ես նրա ոտքերն ամենավերջինը կլվանամ, որպեսզի մյուսներին չվնասեմ:

-Շնորհակալ եմ,- ասաց մայրը,- բայց որ տեսնեք՝ վերքերից չվախենաք:

Եկավ: Զգուշությամբ լվացի ոտքերը, որպեսզի վերքերին վնաս չպատճառեմ:

Մեկ շաբաթ անց մայրը հեռաձայնեց և ուրախությամբ հայտնեց, որ Ոսնալվայից հետո երեխայի վերքերը լավացել են: Տարել էին բժշկի, իսկ այնտեղ զարմացել էին, որ այդքան ծանր մաշկային հիվանդության հետքն անգամ չի մնացել:

-Ուրիշ ինչի՞ն կարելի է վերագրել այդ, եթե ոչ Ոսնալվայի ժամանակ տեղի ունեցած հրաշքին,- ասում էր մայրը:

Իսկ այդ բուժումը կարող էր տեղի ունենալ, քանի որ Ոսնալվայի ժամանակ յուզ է օրհնվում և արարողության ժամանակ աղոթքով խնդրում ենք բժշկութուն այդ յուզով օժիվածներին:

ՉՈՐԱՎՈՐ Է ՀԱՎԱՏՔՈՎ ԱՐՎԱԾ ԱՂՈԹՔԸ

2004 թվականին էր: Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու Երիտասարդաց շարժման անդամ երիտասարդ մի կին եկավ մոտս:

-Տեր հայր,- ասաց,- մոտ մեկ ու կես տարի է, ինչ ամուսնացած եմ, սակայն երեխա չենք ունենում:

Շատ տխուր էր ու ջարդված մանկամարդ կինը, մի տեսակ հուսահատություն կար դեմքին: Արդեն երեսուկ տարեկանին մոտ էր և վախենում էր, որ անզավակ կմնա:

-Անհոգ եղիր, աղջիկս,- ասացի նրան,- դու վստահիր Աստծուն:

Մենք «Մաշտոցի» մեջ մի աղոթք ունենք, որ նախատեսված է դժվարածին կանանց համար: Ճիշտ է, աղոթքը լրիվ չէր համընկնում կնոջը, քանի որ նա ոչ թե ծննդաբերել չէր կարողանում, այլ՝ հղիանալ, սակայն հավատքով այդ աղոթքն օգտագործեցի:

Աղոթք արեցի, կինը գնաց: Անցավ երեք ամիս, տեսա իրեն: Արդեն երկու ամսվա հղի էր: Ձգիտեմ՝ պատճառն այդ աղոթքն էր, թե՞ ուրիշ բան, սակայն կինը հավատում է, որ Աստված իրեն հղիություն է պարգևել այդ աղոթքի շնորհիվ:

ՏԱՃԱՏ ԱՎԱԳ ԸԱՅԱՆԱ ՂԱԿԹՅԱՆ
ԱՄՆ, Բոստոն

ՀԻՍՈՒՄԻ ԱՆՈՒՆԸ ՉՍՊԵՑ ԿԱՏԱՂԱԾ ՇՆԵՐԻՆ

Մի անգամ, կեսգիշերին մոտ երեցկնոջ հետ վերադառնում էինք մեր ծանոթներից մեկի տանից: Այն վատ, մութ ու խավար տարիներին էր: Փողոցներն ամայի ու մութ էին, և իրենց տանից մինչ մեր տուն՝ չորս-հինգ հարյուր մետր տարածություն: Այն ժամանակ թափառող, անտեր շները լիքն էին: Շրջում էին ոհմակներով, և քանի որ քաղցած էին, նաև կատաղած էին ու հաճախ մարդկանց վրա էին հարձակվում:

Ինչևէ: Համարյա հասել էինք մեր շներին, երբ անտեր շների կատաղած ոհմակը հաչելով հարձակվեց մեզ վրա: Եվ մի երկու-երեք մետր և կհասնեին մեզ: Ես հագիվ հասցրեցի ասել. «Հիսուս, ողորմեա»: Միայն այդքանը: Գիտեմ, գուցե մարդիկ չհավատան, սակայն լսեցի, թե ինչպես շան հաչոցը կիսատ մնաց: Կարծես դանակով կտրեցին: Շները քարացան, մեխվեցին տեղներում: Մենք շրջադարձն անցանք և զնացինք տուն, իսկ շները թողեցին, հեռացան:

ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ՝ ՇՈՒՐՁԱՌԻ ՏԱԿ

Համայնքի հավատացյալ կանանցից մեկն իր հետ կատարված հրաշալի բժշկության մասին պատմեց միայն երկու տարի անց: Ամեն Պատարագից հետո, նրանք, ովքեր բժշկության աղոթք են խնդրում, հավաքվում են շուրջառի տակ և ես նրանց վրա բժշկության աղոթք եմ կարդում:

Կինը պատմեց, որ ինքը շատ ծանր կանացի հիվանդություն է ունեցել: Երկար տարիներ բժիշկների է դիմել, տարբեր միջոցներ օգտագործել և՛ ոչ մի օգուտ: Սակայն ընդամենը մեկ անգամ բժշկության աղոթքին է մասնակցել և հրաշալի բժշկություն է ստացել:

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՂ ԵՎ ԱՊՐԵՑՆՈՂ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Սևանում իմ ծառայության առաջին տարիներին էր: Ինձ մոտ եկավ բավական բարձր պաշտոն ունեցող մի մարդ և ասաց, որ իր կինը շատ ծանր վիճակում է և կուզենար, որ նրա վրա բժշկության աղոթք կարդայի:

-Իսկ կինդ մկրտվա՞ծ է,- հարցրեցի ես:

-Ոչ,- պատասխանեց նա:

Ես խորհուրդ տվեցի նախ մկրտել կնոջը, քանզի մկրտության խորհուրդը կնոջ համար նաև բժշկող ազդեցություն կունենար: Աստվածային շնորհ կիջներ, և հնարավոր է, որ կինը բժշկվեր:

Մարդը ունկ չկախեց իմ ասածին և գնաց: Երևի մտածեց, թե պատրաստություն պիտի տեսնի, հյուրեր հրավիրի, ծախս անի: Մի խոսքով, անցավ մի քանի օր և այդ մարդը կեսգիշերին եկավ մեր տուն:

-Տեր Հայր,- ասաց,- կնոջս այլևս ոչինչ չի օգնում: Վիճակն օրհասական է: Ամեն պահ կարող է վերջինը լինել: Խնդրում եմ գնանք, մկրտիր:

-Ասացի՝ կնքահայր է անհրաժեշտ:

-Հարցերը կլուծեմ,- ասաց:

Գնացինք: Կեսգիշերն անց էր, երբ մկրտություն կատարեցի:

Այդ կինն առողջացավ: Այսինքն՝ Աստծո որդեգրություն շնորհն ընդունելը և Քրիստոսին ժառանգակից դառնալը նրա համար ոչ միայն հոգևոր, այլ նաև ֆիզիկական առուժով էլ փրկարար եղավ:

ԹԵ ԻՆՉՊԵՍ

ԲՈՒԺՎԵՑ ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

2006 թվականի հուլիս ամսին էր «Առաքելություն Հայաստան» կազմակերպության աշխատակցուհիներից մեկը՝ Հռիփսիմե Կիրակոսյանը, զանգահարեց և խնդրեց, որ գնամ իրենց տուն և իր ու քրոջ համար բժշկության աղոթք կարդամ: Հիվանդ էին երկուսն էլ և աշխատանքի չէին գնում:

Գնացի, աղոթեցի, զրուցեցինք, ինչպես կարգն է մխիթարեցի, համբերություն մաղթեցի: Դրանից չէր անցել երկու օր, երբ զանգահարեց և զարմացած ու ուրախացած հայտնեց, թե իր հետ հրաչք է կատարվել: Բացի այն տկարությունը, որի համար ինձ կանչել էր, նաև աչքերի տեսողությունն էր լավացել:

-Տեր Հայր,- պատմում էր Հռիփսիմեն,- ես վերջերս վատ էի տեսնում, և երբ աշխատակիցները մանր տառերով գրած թղթեր էին բերում կարդալու կամ ստորագրելու համար, ջղայնանում էի, սակայն աղոթքից հետո կարդում եմ նույնիսկ ամենամանր տառերով գրածը: Ակնհայտ է, որ աչքերիս տեսողությունը շատ է լավացել:

Ճիշտ է, աղոթքը չէր արվել աչքերի համար, բայց Աստված գիտի, թե մեզնից ամեն մեկին ինչ է հարկավոր և երբ է հարկավոր:

ՄԻՆԱՍ ԲԱՅԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՅԱՆԱՅԻ ԱՂՈԹՔԸ

Այս զարմանալի պատմությունը տեղի է ունեցել նախկին Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) շրջանի գյուղերից մեկում: Ազգությամբ եզդի ընտանիքը, ամուսն մի երեկո դաշտից տուն վերադառնալով, տեսնում է, որ տան պատերը, գուլքը, կահույքը, հագուստները վառվում են: Կրակը մարմանդ էր, կապույտ բոցով և երբեք հրդեհի չէր վերածվում: Եթե սովորական կրակ լիներ, պարզ է, որ անմիջապես պիտի հրդեհի վերածվեր և կարճ ժամանակում լափեր ամեն ինչ, սակայն այդպես չէր: Հասկանալի է, որ սա ոչ սովորական, զարմանալի, գուցե և՛ ոչ երկրային ինչ-որ նշան էր: Տան տերերը դիմում են տարբեր մարդկանց՝ գուշակների, ոգեհմանների, նույնիսկ՝ իրենց համայնքի շեյխին: Գալիս են նրանք, տարբեր հնարներ բանեցնում, բայց կրակը հանգցնել չեն կարողանում: Կրակը սկսում է տարածվել և փչացնել հատկապես ծալքը: Հայտնի է, որ եզդիների համար ծալքը՝ անկողնային պարագաների շքեղ զարդարված և հատուկ ձևով հավաքված, խնամքով պահվող հավաքածուն, սուրբ է: Բայց այդ անհասկանալի ծագում ունեցող կրակը լափում էր ծալքը:

Համայնքի բնակիչներից մեկը եզդուն խորհուրդ է տալիս հայ քահանա հրավիրել: Հրավիրում են Արմավիրի շրջանի Բամբակաշատ գյուղի քահանա տեր Գևորգին: Քահանան գալիս է, ականատես լինում վերը նկարագրված հրաշքին:

-Տեր Հայր, մի ճար արա, էս կրակը չի հանգչում,- լալիս է եզդին:

-Կփորձեմ,- ասում է Տեր Գևորգն ու սկսում է նախ «Պահպանիչ» կարդալ, ապա տնօրհնեքի կարգ է կատարում:

Հենց Հաջորդ օրն իսկ կրակը հանգչում, վերանում է, ասես չէր էլ եղել: Հրաչքն ակնհայտ էր: Եզդիները տեսնում են, որ Հիսուս Քրիստոսին հավատացողը պաշտպանված է նրա կողմից, դարձի են գալիս, հաճախակի եկեղեցի են գալիս, աղոթում:

Հաջորդ տարի նույնպես նրանք Տեր Հորը հրավիրում են տնօրհնեքի, սակայն նրան խնդրում են պահպանել իրենց Հյուրասիրության օրենքը. բոլորի նման խոնարհվել ծալքին, քանզի Հյուրասիրությանը պետք է ներկա գտնվեր նաև իրենց Համայնքի ղեկավարը՝ շեյխը:

Բնականաբար քահանան հրաժարվում է՝ ասելով.

-Եթե նույնիսկ նման հրաչքը դարձի չբերեց ձեզ, ապա ես այլևս այս տանն անելիք չունեմ:

Որպես հավելում ասենք, որ դեպքը տեղի է ունեցել մոտ 10-15 տարի առաջ: Բոլոր մանրամասներն այդ ժամանակ նկարահանվել են սիրողական տեսախցիկով: Տեսաերիզն այժմ պահպանվում է Տեր Վարդանի տանը: Հետագայում այս նյութի հիման վրա տեսաֆիլմ է պատրաստվել, որը ցուցադրվել է «Կենտրոն» հեռուստատեսությանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂՈԹՔԻ ՇՆՈՐՀԻՎ

Այս գարմանալի պատմությանն ականջալուր եմ եղել 6-7 տարի առաջ, երբ Գավառ քաղաքում, Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում աշխատում էի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

Մի անգամ ուսուցչուհիներից մեկը մոտեցավ ու հայտնեց, թե իր հետ մի հրաշալի իրողութուն է կատարվել, բայց ում որ պատմում է այդ մասին, քամահրանքով ու կասկածամտությամբ է վերաբերվում: Ես խնդրեցի և նա պատմեց հետևյալը.

Մի քանի ամիս առաջ իրենց ընտանիքը թունավորվել էր պահածոյից: Ամենածանրը մոր վիճակն էր: Չնայած բժիշկների բոլոր ջանքերին՝ նրան փրկել չի հաջողվում, և բժիշկները գրանցում են կնոջ մահը: Ինքը՝ ուսուցչուհին կուրացել էր, իսկ մյուս քրոջ վիճակը մի քիչ ավելի թեթև էր: Մորը տեղափոխում են դիահերձարան և այդ մասին հայտնում արդեն կուրացած աղջկան: Աղջիկը խնդրում է, որ իրեն տանեն հերձարանի մոտ: Երբ հերձող բժիշկն արդեն գնում էր իր գործը կատարելու, կուրացած աղջիկը ծունկի է գալիս դռան մոտ և ամբողջ սրտով սկսում է աղոթել, որ Աստված չտանի իր մորը: «Տեր, թող ես կույր մնամ, բայց մայրս թող չմահանա», - աղոթում էր նա: Բժիշկները չէին կասկածում, որ կինը մահացել է, իսկ կուրացած դուստրն իր հույսը չէր կորցրել և շարունակ աղոթում էր: Հանկարծ բժիշկների մոտ իրարանցում և աղմուկ է սկսվում: Աղջիկը չէր տեսնում և չգիտեր, թե ինչ է կատարվում ու շարունակաբար աղոթում էր: Հենց այդ պահին նրան մի տեսիլք է երևում: «Մի լուսեղեն էակ, - ասում էր նա, - մոտեցավ ինձ, ձեռքը դրեց գլխիս, օրհնեց և անմիջապես բացվեցին աչքերս ու տեսա, որ արդեն դիահերձարան տարած մորս սայլակով ետ են բերում: Ով հրաշք, անկենդան դիակը կենդանության նշաններ էր ցուցաբերել և նրան մեռելների միջից ետ էին բերել: Ես վստահ եմ, - շարունակում էր աղջիկը, - որ լուսեղեն էակը Հիսուսն էր: Բժիշկները զարմացել և քարացել էին՝ այս ամենը տեսնելով, քանզի բժշկական բոլոր կանոններն ասում էին, որ մայրս մահացած էր, իսկ իմ կուրույթունը կասկած չէր կարող հարուցել»:

Ինչ մեղքս թաքցնեմ, այս պատմությանը ես ևս թերահավատությամբ մոտեցա: Աղջիկն ինձ խնդրեց գնալ իրենց տուն և

Հարցնել մորը: Գնացի: Մայրն արդեն 70-նն անց կին էր և հաստատեց իրենց թուեմբարի: Ասաց, որ ինքը հիշում է, որ վատացել է, ուշագնաց է եղել և մեկ էլ այն է հիշում, որ իրեն օգնում էին, որ սայլակից իջնի:

Թե՛ մայրը, թե՛ աղջիկը հաստատեցին, որ այդ դեպքն այնքան ազդեցիկ է եղել, որ նույնիսկ դիահերձարանի բժիշկը դարձի է եկել և դարձել է հավատացյալ քրիստոնյա: Եվ դա պաթոլոգ-անատոմը, որի համար մարդու մարմին հերձելը սովորական բան էր, իսկ մարդը՝ միայն միս ու արյուն, միայն ֆիզիկական մարմին ունեցող էակ:

ՏՐԴԱՏ ԲԱՅԱՆԱ ԲՈՉԻԿՅԱՆ

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ ՄԻ ԿՆՈՋ ԿՅԱՆԸ ԵՐԿԱՐԱՑՐԵՑ ՏԱՍՆՉՈՐՍ ՏԱՐՈՎ

Մի կին մահամերձ պառկած էր անկողնում և հոգեվարքի մեջ էր: Հարազատներն ու անչափահաս երկու երեխաները կողքին կանգնած՝ աղոթելով լալիս էին և խնդրում Աստծուց, որ փոքրիկներին որը չթողնի: Այդ նույն պահին աղոթում էր նաև հոգեվարքի մեջ գտնվող կինը՝ խնդրելով իր առջեւ կանգնած և հոգին մարմնից բաժանելու եկած Գաբրիել Հրեշտակապետին՝ ասելով. «Խնդրում եմ ինձ մի քանի տարի կյանք տուր, որ երեխաներիս հասցնեմ իրենց նպատակին և հետո պատրաստ եմ հանձնվելու Տիրոջ կամքին»: Գաբրիելը, անսալով կնոջ թախանձանքին, տեսիլքի մեջ մի թղթի կտորի վրա գրում է «տասնչորս տարի» և դնում նրա ոտքի մեջ:

Անկողնու մոտ գտնվողները, իրենց անզոր զգալով, հույսով աղոթում էին՝ մտածելով, թե կինն արդեն մահացել է, որովհետև անշարժ պառկած էր: Բայց մահամերձը հանկարծ բացում է աչքերը, նայում իրեն շրջապատողներին և ուրախացած բա-

ցականչում. «Ես իրավունք ստացա ապրել ևս տասնչորս տարի»:

Այդպես էլ եղավ: Տասնչորս տարին լրանալուն պես, երբ նա արդեն մեծացրել էր իր երեխաներին և ամուսնացրել, այսինքն՝ հասցրել էր իրենց նպատակին, հենց նույն օրը, հոգեպես պատրաստ վիճակում՝ հանգիստ ավանդեց իր հոգին:

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորածին երեխան բավական թույլ էր և բժիշկները հույս չէին տալիս, որ նա կապրի: Երեխայի ծնողներին խորհուրդ տվեցին, որ եթե ապրելու հույս չկա և երեխան պիտի մահանա, ապա ավելի լավ կլինի, որ մկրտված հեռանա այս աշխարհից:

Ծնողները, անսալով խորհուրդին, քահանային հրավիրեցին տուն, քանի որ ձմեռ էր, ցուրտ և երեխային դուրս հանել չէր կարելի՝ Մկրտության արարողությունը կատարելու համար: Ասենք, որ քահանային ասվել էր, թե երեխան մահամերձ է, և իրոք այդպես էր, բայց քահանան, տուն մտնելով, հիացումով և ուրախությամբ արձանագրեց, որ այդտեղ մահամերձ երեխա չկա, քանի որ ինքը մթնոլորտի մեջ ոչ մի բացասական բան չի գտնում:

Արարողությունն անցավ պատշաճ կերպով, և դրանից հետո երեխան սկսեց մեծանալ ու զարգանալ, ինչպես բոլոր նորմալ մարդիկ եւ ապրեց 75 տարի, որից հետո իր հոգին ավանդեց Տիրոջ ձեռքը:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺԵՑ ԲԱՂՑԿԵՂԸ

Տաս տարեկան երեխայի մոտ բժիշկները քաղցկեղ էին հայտնաբերել և նրան ապրելու համար կանխատեսել էին երկու տարի: Ծնողները տարբեր տեսակի բժիշկների դիմելուց հետո,

Հուսահատված դիմեցին բժիշկների Բժշկի՝ Աստծու օգնութեանը՝ մտածելով, որ եթե մահանալու է, գոնե մկրտված վիճակում մահանա:

Մկրտութեան արարողութիւններից երկու ամիս անց ծնողները երեխային նորից տարան բժշկի մոտ՝ իմանալու համար նրա վիճակը: Հուրախութիւն ծնողների և առավել ևս երեխայի՝ բժիշկներն արձանագրեցին, որ նրա մոտ քաղցկեղի ոչ մի նշան չկա:

Ծնողներն այդ ավետիսը առաջին հերթին հայտնեցին մկրտութիւնը կատարող քահանային՝ միաժամանակ գոհաբանական աղոթք ու մատաղ կատարելով երեխայի փրկութեան համար:

Այդ երեխան ապրում է մինչեւ հիմա և շուտով դպրոցը կավարտի:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿԸ ՓՐԿՎԵՑ ՎՆԱՍՎԵԼՈՒՅ

Ամառային մի գեղեցիկ օր Հայաստանի հարավային մասում գտնվող Մեղրի քաղաքում մի ընտանիքի երեխաները ուրախ-գլխարկ խաղում էին իրենց բակում, որը միաժամանակ հարեանի տանիքն էր: Մեղրիում, հայոց հնավանդ սովորութեամբ, տներն այդպես իրար վրա են կառուցված, այնպես, որ մեկի տանիքը մյուսի համար բակի տեղ է ծառայում:

Այդպիսի մի բակ էր նաև «Սուրբ Աստվածածին» եկեղեցու հարեանութեամբ գտնվող այդ տան բակը, որի վրա էլ այդ օրը փոքրիկ աղջիկը հեծանիվ էր քշում՝ ինչպես միշտ: Հանկարծ մի ճիչ լսվեց: Այդ ձայնի վրա բոլորը դուրս եկան և տեսան, որ աղջիկը եկեղեցու բակում ընկած է: Երբ մոտեցան նրան՝ օգնութիւնը ցույց տալու, նա վեր կացավ և հանգիստ պատասխանեց. «Ինձ ոչինչ չի եղել. այդքան բարձրից այստեղ հասա, բայց չգի-

տեմ՝ ինչպես: Կարծես ոչ թե հեծանիվ նստած լինեի, այլ՝ ինքնաթիռ, որը հանգիստ վայրէջք կատարեց»:

Բոլոր հավաքվածները փառք տվեցին Աստուծուն, որ երեխան ողջ ու առողջ է և անվնաս է մնացել նման բարձրությունից ընկնելուց հետո:

ՀՈՒՄԻԿ ԶԱՅԱԼԱ ՆՈՒՐԻԶԱԼՅԱՆ

Մեղրիի տարածաշրջանի
հոգևոր հովիվ

ՄԻ ԱՆԳԱՄ, ՀԻՎԱՆԴԱՆՑՈՒՄ

2004 թվականին էր: Եկեղեցի եկավ մի մարդ և հայտնեց, թե իր բարեկամի երեխան Արյան փոխներարկման ինստիտուտում է գտնվում և վիճակը խիստ անհուսալի է: Բժիշկներն ամեն ինչ արել էին, սակայն օգուտը չատ քիչ էր եղել: Նրանք Գեղարքունիքի մարզի հեռավոր գյուղերից մեկում էին ապրում, ուր ո՛չ եկեղեցի կար, ո՛չ հոգևորական և ցանկանում էին երեխային մկրտել ու նոր տանել տուն:

-Եթե մահանալու է, թող մկրտված, քրիստոնյայի պես մահանա,- ասաց տղան:

Գնացինք հիվանդավոց: Սկսեցի մկրտության կարգը: Ասեմ, որ ես իմ կյանքում նման ծանր բան չեմ տեսել: Երեխան անընդհատ արյուն էր փսխում, և ես հաճախակի ստիպված էի լինում ընդհատել մկրտությունը: Ինչևէ, մի կերպ ավարտեցի...:

Անցան տարիներ: Մի անգամ պսակի արարողությունից հետո մի երիտասարդ մոտեցավ ու ժպտաց.

-Ինձ չե՞ք ճանաչում:

Ես փորփրեցի հիշողությունս, բայց չկարողացա հիշել, թե որտեղ եմ տեսել նրան:

-Ոչ,- ասացի,- չեմ կարողանում հիշել:

-Հիշո՞ւմ եք՝ ինչպես գնացինք Արյան փոխներարկման ինստիտուտ ...

-Այո,- վերջապես հիշեցի ես,- իսկ այն տղան ի՞նչ եղավ, մահացա՞վ:

-Մէջ, ի՞նչ եք ասում,- ժպտաց նա,- մկրտությունն իր բարերար ազդեցությունն ունեցավ նրա վրա: Ա՛յ, տեսնու՞մ եք այն սյունի տակ կանգնած երիտասարդին: Նա է: Հիմա էլ եկել ենք մեր բարեկամի պսակադրությանը:

Ես շատ ուրախացա և փառք տվեցի Աստծուն նման հրաշալի բժշկության համար:

ԵՍԱՅԻ ԸԱՅԱՆԱ ԱՐԹԵՆՅԱՆ
Երևանի Սուրբ Երրորդություն
եկեղեցու քահանա

ՍՐԲԱՊԱՏԿԵՐԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հորեղբորս ընտանիքը Երևանից տեղափոխվեց Էջմիածին: Որոշ ժամանակ անց նրանք որոշեցին վերանորոգել իրենց բնակարանը, իսկ վերանորոգումից հետո պատից հանեցին երկու հին սրբապատկերները: Կարծես թե դրանք չէին սազում նոր վերանորոգված պատին: Բացի այդ, պատը կարող էր փչանալ սրբապատկերները կպցնելու ժամանակ: Ինչևէ, հանեցին սրբապատկերները և... որոշ ժամանակ անց սկսեցին ձախորդություններ գալ այդ ընտանիքի գլխին: Նախ ֆուտբոլ խաղալիս տղայի թևը կոտրվեց, հետո աշխատանքի ժամանակ հորեղբորս ձեռքի մատը վիրավորվեց: Բժիշկները մի կերպ փրկեցին մատը կտրվելուց: «Ու՞մ հետ փորձանք չի պատահում: Ո՞վ է, որ երաշխավորված է նման պատահականություններից», - կհարցնեն շատերը, սակայն այս դեպքը ևս սովորականների թվին կարելի էր

դասել, եթե հորեղբորս կինը գիշերը տեսիլք-երազ չտեսներ: Երազի մեջ նրան հայտնվում է Աստծո Հրեշտակը և ասում.

-Ձեր ընտանիքի գլխին եկող փորձանքները կանցնեն, եթե նորից իրենց տեղում փակցնեք հին սրբապատկերները:

Նրանք նորից պատին փակցրեցին Հիսուսի և Աստվածածնի պատկերները, և դադարեցին նրանց ընտանիքին պատուհասող փորձությունները:

ԱՆԴԱՍՏԱՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Մայր աթոռի միաբան Տեր Կորյուն աբեղա Առաքելյանը իրենց տուն՝ Վարդենիս էր հրավիրել իր միաբան ընկերներին՝ Հայր Վարդան, Հայր Հովհաննես և Հայր Տաճատ աբեղաներին: Մի օր Հայր Կորյունը ընկերներին առաջարկում է գնալ դաշտերը, գբոսնել, նաև տեսնել իր ծնողների ցորենի դաշտերը: Երբ հասնում են դաշտ, տեսնում են ցորենի ծփացող արտերը, աբեղաներից մեկն առաջարկում է Հայր Կորյունենց ցորենի դաշտի վրա Անդաստանի արարողութուն կատարել:

Անցնում են ամիսներ և Վարդենիսում ահավոր կարկուտ է գալիս, որը հարվածում է ցորենի դաշտերին: Այնքան սարսափելի էր կարկուտը, որ Հայր Կորյունի ծնողները դրանից հետո նույնիսկ հարկ չեն համարում գնալ, տեսնել, թե ցորենի արտերն ինչ վիճակում են՝ մտածելով, որ նման արհավիրքից հետո դժվար թե կծղած հասկերի վրա ցորեն մնացած լինի: Բայց, այնուամենայնիվ, գնում են: Ինչքան էլ չլինի իրենց դաշտն է, քրտինք ու աշխատանք են թափել վրան: Գնում են դաշտ և... ա՛յ քեզ զարմանք, շրջակա բոլոր արտերի համապատկերի վրա տեսնում են իրենց արտը, որին կարկուտը ոչ մի վնաս չէր տվել և ամեն տարվա հետ համեմատած՝ այդ տարվա բերքը նույնիսկ շատ էր: Շրջապատի բոլոր արտերը հավասարվել էին գետնին, իսկ իրենցը... Ավելի ուշ, երբ դարձյալ տուն է գալիս և լսում

տանեցիները զարմանալի պատմությունն իրենց փրկված և հարևանների վերացած ցորենի դաշտերի մասին, Հայր սուրբը պատմում է իրենց կատարած Անդաստանի արարողություն մասին:

ՀԱԿՈՒ ՍԱՐԿԱՎԱԳ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ք. Էջմիածին

ԳՏԵՎԱԾ ԽԱՉՔԱՐԸ

Վերջերս կյանքից հեռացավ Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղի բնակչուհի բուժքույր Սոֆիան: Անցած դարի 60-ական թվականներին էր: Նոր էր ամուսնացել, հետո ամուսնու հետ բաժանվել էին ծնողներից և մինչև տնտեսություն դառնալը, տուն կառուցելը ապրում էին գոմի մեջ: Գոմը հին էր, ով գիտե՝ երբ էր կառուցվել և ում կողմից... Հենց առաջին գիշերը երազ տեսավ: Եկավ մի ձերուհի ու ասաց.

-Տեղս նեղ է, ազատիր ինձ այստեղից:

Քի՞չ երազ կարող է տեսնել մարդը գիշերը: Երազ էր, եկավ, անցավ: Սակայն հաջորդ գիշեր երազը կրկնվեց: Առավոտյան պատմեց ամուսնուն:

-Քեզ համար քնում ես, ուրիշի մասին երազ ես տեսնում, ձեռ առավ ամուսինը: -Ի՞նչ ձերուհի, ի՞նչ տեղ: Իբր մենք տուն ու տեղ ունենք, դու էլ...

Բայց հաջորդ գիշեր ձերուհին նորից եկավ, ցույց տվեց, թե ինքը որտեղ է և խնդրեց ու պահանջեց ազատել իրեն:

Ճարահատյալ գնաց սկեսրայրի մոտ, պատմեց նրան իր կրկնվող երազի մասին: Երկուսով եկան, քանդեցին ձերուհու մատնանշած տեղն ու... խաչքար դուրս եկավ: Այն դրել էին գոմի պատի մեջ ու շարել:

Խաչքարը մաքրեցին, հանեցին, դրեցին դրսի պատի տակ: Բայց այդ գիշեր ծերունին նորից եկավ ու դժգոհեց:

-Ախր ինձ ավելի վատ տեղ բերեցիք: Տարեք հին տեղը, բայց լուսամուտ բացեք, որ լույս տեսնեմ:

Խաչքարը տեղափոխեցին հին տեղը, մատուռ կառուցեցին: Եվ այդ ժամանակից ի վեր ծերունին դադարեցրեց իր գիշերային այցելությունները:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՐԿԵՑ ՄԱՆԿԱՆԸ

Կոստանը տկար ու թույլ էր ծնվել: Սակայն գնալով նրա վիճակը վատանում էր: Երբ լրացավ քառասունքը, մանուկը կապտեց և սևացավ: Զգալով, որ երեխան կարող է չուտով այն աշխարհ գնալ, բարեպաշտ հայրը որոշեց մկրտել տալ նրան: «Գոնե որպես քրիստոնյա մահանա և դրանով փրկվի», - մտածեց նա: Սուրբ Էջմիածնից քահանա հրավիրեց՝ որոշելով երեխային հանձնել Տիրոջ հոգածու ձեռքը:

Քահանան մկրտեց երեխային և, ով հրաչք, կարճ ժամանակ անց անցավ նրա մարմնի կապտությունը, երեխան նորից կյանքի վերադարձավ: Սակայն նախախնամության կամքով թույլ ու հիվանդոտ ծնվեց նաև Կոստանի երեխաներից մեկը: Թեև տղան արդեն չորս տարեկան էր, բայց ո՛չ խոսել էր կարողանում, ո՛չ - քայլել:

-Քո հայրը ժամանակին մկրտել տալով քեզ փրկեց, ինչու՞ դու էլ նույնը չես անում: Ինչու՞ ես մկրտությունը հետաձգում,- նրան հանդիմանեց վանահայրը:

Սակայն Կոստանը պատճառաբանում էր, թե կնունք անելու միջոց ու հնարավորություն չունի, չի կարողանա այդքան մարդ հրավիրել...

-Աստծո համար քո բացած սեղանը ոչ մի նշանակություն չունի, բեր երեխային մկրտենք, գորություն կիջնի վրան, կառողջանա,- իրենն էր պնդում վանահայրը:

Վերջապես հայրը երեխային բերեց մկրտելու: Մկրտելու հենց հաջորդ առավոտյան նախ երեխայի լեզուն բացվեց, հետո ամրացան ոտքերը և նա սկսեց քայլել ու վազել:

ՀԱՇՄԱՆԴԱՄ ՏՂԱՅԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ երկրաշարժից հետո էր: Վազգեն Վեհափառն Արցախի թեմի առաջնորդ Պարգև Սրբազանի հետ զրուցում էր վեհարանում, երբ լուր տվեցին, թե՝ Լենինականից (այժմ՝ Գյումրի) մի երեխա են բերել, որի ոտքերը երկրաշարժից հետո թուլացել են: «Ձեր աղոթքն են խնդրում», - ասացին:

-Թող ներս բերեն,- ասաց Վեհափառը:

Ծնողները, երեխայի երկու թևերից բռնած, ներս բերեցին: Երեխայի ոտքերը թույլ էին և ասես քարշ էին գալիս հատակին:

Վեհափառն աղոթեց հիվանդի համար, հույս տվեց ծնողներին և ճանապարհեց:

Մեկ շաբաթ անց լուր ստացվեց Գյումրիից, թե երեխայի ոտքերն ամրացել են և նա արդեն քայլում է:

-Փառք քեզ Աստված,- հայացքը երկինք հառելով՝ շշնջաց Վեհափառը,- փառք քեզ, որ լսեցիր տկարիս աղոթքն ու բժշկեցիր երկրաշարժի հասցրած մի վերքը ևս:

ՀԱՅԿ ՉՈՂՐԱԲՅԱՆ

ք. Էջմիածին

ՍԵՂԱ ՏԱՏԻ ԽԱՉԸ

Տատս գրեթե ութսուն տարեկան էր: Թե ասեմ՝ ջերմ հավատք ունեւր առ Աստուած, ճիշտ չի լինի: Նույնիսկ չգիտեւր՝ իրեն մանուկ հասակում մկրտե՞լ են, թե՞ ոչ: Սակայն չեմ կարող չպատմել այն արտառող դեպքը, որ կատարվեց նրա հետ: Ամեն անգամ քնելիս Սեղա տատս սարսափահար վեր էր թռչում՝ իր տեսած երազից կամ տեսիլքից սահմուկած: Մշտապես նրան այցելում էր մի մղձավա՞նջ ասեմ, թե՞ երազ: Իբրև թե ինչ-որ մարդիկ ինչ-որ երեխայի են գլխատում և նրա կառափը նետում են մոխիրների մեջ: Ամեն անգամ նույնը կրկնվում էր և սարսափի էր մատնում խեղճ կնոջը: Տեսնելով, որ նա շատ է տանջվում ու տառապում, ես, որ դեռևս դպրոցական էի, սովորական փայտից մի խաչ սարքեցի, այն տարա «Սուրբ Հակոբ» եկեղեցի և խնդրեցի, որ Տեր Գաբրիել քահանան օրհնի: Հետո խաչը բերեցի և փակցրեցի տատիկիս մահճակալի գլխավերևում: Դրանից հետո տեսիլքները դադարեցին: Մի անգամ, երբ նա քնած էր, փորձի համար վերցրի խաչը և հեռացրի: Եվ, այ քեզ զարմանք, նա սկսեց անհանգիստ շուռուժուռ գալ, խոսել երազում, հետո սարսափահար վեր թռավ քնից: Դարձյալ նույն մղձավանջն էր տեսել: Իմանալով, որ հեռացրել եմ խաչը, խնդրեց, որ այն փակցնեմ իր տեղում: Այդ օրվանից ի վեր ոչ ոք չէր համարձակվում ձեռք տալ Սեղա տատի խաչին, քանզի այն պահպանում էր նրա խաղաղ ու հանգիստ քունը:

ՍԵՄՐՈՊ ԱՇՈՒՐՅԱՆ

ՀԱՎԱՏՈՎ ԱՂՈԹԸԸ ԲՈՒԺՈՒՄ Է, ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՊԱՆՈՒՄ

Այս պատմութունը ես լսել եմ մեծերից: Անցած դարի 70-ական թվականներին է եղել դեպքը: Լեռնային Ղարաբաղի Այ-

գեստան գյուղում, խաղողաքաղի ժամանակ ուսուցչուհի էլմիրայի ոտքի վրայի խալը վնասվում է: Արյունահոսությունը դադարեցնելու համար վերքի վրա խաղողի տերև են դնում՝ առանց մտածելու, որ տերևը սրսկած է: Տերևից թուլյնը ներծծվում է արյան մեջ և սկսվում է արյան վարակում: Հիվանդությունն այնքան է սրվում, որ ուսուցչուհուն չեն կարողանում բուժել Ղարաբաղում և տեղափոխում են այն ժամանակվա ԽՍՀՄ մայրաքաղաք՝ Մոսկվա: Նրա աղջնակը, որ շատ փոքր էր, մնում է գյուղում: Աղջիկը ոչ մի անգամ չէր տեսել, թե մարդիկ ինչպես են աղոթում, չգիտեր աղոթքի գորության մասին, սակայն մանկական միամիտ սրտով ամեն օր խոսում էր Տիրոջ հետ և նրան խնդրում, որ առողջացնի մորը: Թեև կնոջ վիճակն անհուսալի էր, սակայն նույնիսկ բժիշկները զարմացան, երբ նա առողջացավ:

Երբ մայրը վերադարձավ, աղջնակը գրկեց նրան և ականջին շշնջաց.

-Մայրիկ, գիտե՞ս, ես ամեն օր աղոթում էի Աստծուն, որ նա քեզ բուժեր ու դու առողջացար:

Ուսուցչուհին, որ անհավատ էր, կամ ինչպես կոմունիստական հասարակարգում էին ասում՝ աթեիստ, զայրացավ դստեր վրա.

-Աստված չկա: Ինձ ոչ թե Աստված է բուժել, այլ՝ բժիշկը:

Դրանից մի քանի օր չանցած՝ նրա վիճակը կրկին վատացավ, և չնայած բժիշկներին բոլոր ջանքերին, լիովին բուժված թվացող հիվանդությունը կրկին գլուխ բարձրացրեց: Եվ դա արդեն անդառնալի էր նրա համար:

Այդպես է. հավատքով արած աղոթքը կարող է բուժել և կենդանություն տալ մարդուն, իսկ անհավատությունը՝ սպանել:

ԴԱԿԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԼՂՀ, գյուղ Այգեստան

ՀՐԱՇՔ ՉԷՐ, Ի՞ՆՉ ԷՐ

2003 թվականի դեկտեմբերի 30-նն էր: Մարդկանցով և բեռներով ծանրաբեռնված միկրոավտոբուսը մեր գյուղից՝ Արարատի մարզի Դարակերտից ուղևորվում էր Երևան: Մարդիկ գնում էին շուկա, Նոր տարվա առևտրի: Եվ ասա հանկարծ ճանապարհի կեսին նկատեցինք, որ մեքենան ցնցվեց, և նրա առջևի աջ անիվը տեղից դուրս թռավ ու սլացավ մեքենայից առաջ ընկած: Նույն վայրկյանին բոլորս քարացանք: Վայրկյաններ կան, որ շատ երկար են ձգվում: Չգիտեմ վարորդն ինչ արեց, բայց զգացվում էր, որ նա իրեն կորցրել է:

-Տե՛ր Հիսուս Քրիստոս,- հուսահատ ճչաց մի կին, և այդ պահին մեքենան կանգ առավ: Թե չկանգներ, մարդկային զոհերն անխուսափելի էին:

Անշուշտ, կլինեն մարդիկ, որ կասեն՝ պատահականություն է, կկապեն Փիզիկայի այս ու այն օրենքի հետ, սակայն այդ պահին մեքենայի մեջ գտնվող բոլոր մարդիկ հավատում էին, որ Քրիստոսի անունը փրկեց իրենց: Հրաշք է՛լ, ի՞նչ է՛ր:

ԽԱՉԻԿ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Արարատի մարզ, գյուղ Դարակերտ

ԱՆԾՈՒՆ ՀՐԴԵՅ

Մի օր բանակիս ընկերը՝ Միհրանը, որ նախկին Հոկտեմբերյանի շրջանից էր, այսպիսի զարմանալի դեպք պատմեց:

-Պապիս բախում մի մատուռ կար,- ասաց,- իսկ մատուռի կողքին՝ մի եղևնի: Մի օր պապս որոշեց կտրել եղևնին, որ իր կարծիքով խանգարում էր մատուռին:

Հենց այդ գիշեր սուրբը երազ է գալիս տատին և նրան պատվիրում է պապին ասել, որ ծառը չկտրի: Պապը բանի տեղ չի դնում: «Ով գիտե, պառավն ամսոսում է ծառը, դրա համար

չի ուզում, որ կտրեմ, մեղքը սրբի վրա է գցում», -մտածում է և հաջորդ օրը կտրում է եղևնին:

Եվ հենց հաջորդ օրը սկսում են վառվել տան իրերը: Նախ՝ գորգերը: Ճիշտ է, վառվում էին, բայց ծուխ չէր բարձրանում և հրդեհ չէր բռնկում: Դա մի կերպ հանգցնում են, հետո սկսում են այրվել բազմոցի ծածկոցն ու բարձերը: Միայն պատկերացնել կարելի է մարդկանց սարսափը: Բազում օրեր է տևում հրդեհը: Մարդիկ հանգցնում են, իսկ նա վերսկսվում է այս ու այն տեղում: Մեկ բարձերն են վառվում, մեկ՝ գորգերը, մեկ՝ ծածկոցները, մեկ՝ անկողինը...

Վախեցած պապն սկսում է վերակառուցել մատուռը, կարգի բերել նրա շրջակայքը, նոր ծառ է տնկում, և միայն դրանից հետո է դադարում անձուխ, կապտավուն կրակը:

ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ ՈՏՔԸ

Այս դեպքն ինձ Ռոդա տատս է պատմել: Երբ նա 13 կամ 14 տարեկան աղջիկ է լինում, նրա ոտքը հիվանդանում է: Ոտքը քաշվում էր, և քայլել չէր կարողանում: Եվ դա կարծես թե քիչ էր, անտանելի ցավեր էր ունենում: Այնքան ծանր է լինում վիճակը, որ ոչ մի բժիշկ չի կարողանում բացատրել, թե այդ ցավի պատճառն ինչն է: Նման նոպաներից մեկի ժամանակ մայրը դիմում է Տիրոջը՝ խնդրելով.

-Թող աղջիկս լավանա, ես դռնեդուռ ընկած փող կհավաքեմ, մատաղ կանեմ:

Առավոտյան վեր են կենում և, ա՛յ քեզ հրաշք, աղջկա ոտքն այլևս չի ցավում: Մայրն ամաչում է դռնեդուռ ընկնել, փող հավաքել, մանավանդ, որ ժամանակները վատ էին: Կոմունիստական դաժան հալածանքների շրջանն էր, ուր ամեն մի կրոնասիրության փորձի համար դաժանորեն կարող էին պատ-

ժել: Սակայն երեկոյան ոտքի ցալն ավելի է ուժեղանում, ոտքի ջիւը ձգվում է սարսափելի կերպով...

Գիշերը սարսափահար ու վշտահար եղած մորը երազ է գալիս: Գալիս է մեկը և հանդիմանում է նրան.

- Ինչու՞ ես խոստանում ու չես կատարում:

Առավոտյան իր այդ երազը պատմում է ամուսնուն:

- Եթե խոստացել ես և գիտես, որ կօգնի երեխային, ուրեմն՝ արա,- ասում է նա:

Կինը դռնեդուռ է ընկնում, դրամ է հավաքում, մի աքաղաղ են գնում և երեխային շալակած էջմիածնից ճանապարհ են ընկնում դեպի Օշական՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի:

- Հասանք եկեղեցի,- պատմում է տատս,- բայց եկեղեցու դռները փակ էին, քահանա չկար: Կար մի բաց պատուհան, որից մայրս իր հավաքած փողի ավելցուկը ներս գցեց: Ահա այդ ժամանակ ձիերով եկան Օշականի կոմունիստ ղեկավարները և մեզնից պահանջեցին անմիջապես թողնել ու հեռանալ: Մի խոսքով, հնարավոր չեղավ աքաղաղը մորթել: Մայրս ճարահատված նայեց ու տեսավ, որ եկեղեցու կողքին մի ծեր կին է նստած: Աքաղաղը տվեց նրան ու մենք արագ հեռացանք:

Օշականից հետո մինչև հիմա ոտքս չի ցալում, և մինչև հիմա իմ սեփական ոտքերով եմ քայլում,- ամեն անգամ ասում էր տատս:

ՎՐԵԺ ՍԱՐԳՍՅԱՆ

Ք. Էջմիածին

ՅՐԱՅՐ ԲԱՉԵԻ ՈՒՆՏԸ

Երբ առաջին անգամ Հայաստան եկա, գնացի Արցախ, այնտեղ բազմաթիվ եկեղեցիներ լուսանկարեցի, բայց երբ վերադարձա Կանադա, առողջութունս վատացավ: Բժշկական հետա-

գոտուլթյունը ցույց տվեց, որ զուլյգ թոքերս հիվանդ են քաղցկեղով: Ինձ ապրելու համար տվեցին տաս օր: Հասկանալի է, թե ինչ կմտածի մարդը, որին ապրելու համար մնացել է ընդամենը այդքան ժամանակ: Հագար ու մի բան է անցնում մտքովդ, նորից արժեվորում ես կյանքդ:

Եվ ահա այդ օրերին ինձ քիմիական բուժում նշանակեցին: Ապրիլի 23-ին՝ իմ ծննդյան օրը, «քիմիա» ընդունեցի: Հասկանում էի, որ ես փրկուլթյուն չունեմ և հույսս միայն Աստված էր: Հենց այդ ժամանակ էլ պայատիս պատին դամած խաչի առաջ ուխտ արեցի. «Եթե ես այս նեղ տեղից դուրս գամ, ուխտ եմ անում լուսանկարել աշխարհի բոլոր երկրներում տարածված հայկական եկեղեցիները»: Եվ Աստված լսեց ինձ:

Դժվար բուժում տարա, շատ ցավեր քաշեցի, բայց ի դարմանս բժիշկների, բուժվեցի: Արդեն քանի տարի է, որ բժիշկների տված «10 օրը» շարունակվում է: Ես եղել եմ աշխարհի 43 երկրներում, Արցախում, Արևմտյան Հայաստանում, լուսանկարել եմ հայկական բազմաթիվ եկեղեցիներ, հրատարակել լուսանկարների ալբոմներ: Հույս ունեմ, որ Խաչի ու Խաչյալի զորուլթյամբ կկարողանամ լուսանկարել մնացած եկեղեցիները նույնպես:

ՀՐԱՅՐ ԲԱՉԵ (ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Կանադա, Մոնրեալ

Հայաստանի Հանրային հեռուստատեսության
2005թ. ապրիլի 19-ի առալոտյան հաղորդումից

ՀԻՍՈՒՍԻ ԱՂՈԹՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

-Իմ կյանքում առաջին անգամ այդ ճմուռնը ես տեսա մարդու սարսափը և հրճվանքը նրա: Ես շատ էի տեսել, թե ինչպես են վախենում մարդիկ, վախեցել էի նաև ինքս, բայց այդպիսի սարսափ, որ գրված լինի մարդու աչքերի մեջ և բռնած լինի նրա

ողջ էությունը, ես չէի տեսել: - Իր պատմությունն այսպես սկսեց Հայոց բանակի պագը: - Ծառայում էինք Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանում: Մեր դիրքերը գտնվում էին թշնամուց մոտ 300 մետր հեռավորության վրա: Բլրի ստորոտին հողատնակն էր, իսկ մի քիչ վերև՝ խրամատը, որտեղ երկու ժամը մեկ հերթափոխի էին կանգնում զինվորները: Բայց պատմությունս թշնամու մասին չէ, այլ ուրիշ բանի:

Տղան էջմիածնի շրջանից էր, վեց ամսվա ծառայող: Վերջացրել էր հերթափոխը խրամատում, մեկ ժամ էլ ժամապահ պիտի կանգներ հողատնակի մոտ, հետո գար հանգստանալու: Կանգնած էր հողատնակի մոտ, մենք ներսում նստած զրուցում էինք, մեկ էլ լսեցինք, որ նա դրսում ինչ-որ մեկի հետ խոսում է.

- Գնա, - ասում է, - թե չէ կկրակեմ...

«Ո՞վ պիտի լինի», - անհանգստացա ես, և քանի որ դիրքի պատասխանատուն էի, անմիջապես ելա հողատնակից:

Ոչ ոք չկար, բայց զինվորը խոսում ու առաջ էր գնում, մեկ սպառնում էր, գենքն ինչ-որ մեկի վրա պահում, մեկ ինքն էր նահանջում... Հաստատ ինչ-որ բան կատարվում էր հետը և հաստատ ինչ-որ անտեսանելի բանի կամ անտեսանելի մեկի հետ կռվում էր: Մոտեցա նրան, բռնեցի թևից, իսկ նա ասես այս աշխարհում չէր, շարունակում էր սարսափած նայել ինչ-որ մեկի ուղղությամբ: Թափահարեցի նրան .

- Ի՞նչ է պատահել, արթնացիր, ի՞նչ եղավ քեզ:

- Հը՞, - վերջապես սթափվեց նա, - տե՛ս, էլի եկել է:

- Ո՞վ:

- Մի ծերունի կա՝ սև շորերով, կնճռոտ ճակատով, հաճախ գալիս է իմ հետևից: Հիմա էլ կանգնած է, չե՞ս տեսնում:

Ես նայեցի շուրջս և ոչ մի ծերունու չտեսա:

- Ու՞ր է:

- Ահա՛, - մատն առաջ մեկնեց նա, - չե՞ս տեսնում:

-Լավ, ի՞նչ է ուզում, - հասկանալով, որ ինչ-որ անտեսանելի բանից վախեցել է՝ հարցաքննեցի ես:

-Ասում է՝ ինչ ես կանգնել էստեղ, արի տանեմ աշխարհի ամենալավ տեղերը ման տամ: Տանեմ քեզ ծնողներիդ մոտ: Չե՞ս ուզում:

-Ձե՛մ գալիս, - ասում եմ, - վախենում եմ, - իսկ նա առաջ է գալիս, ուզում է բռնել: Մի քիչ առաջ նույնիսկ ինքնաձիգը վրան պահեցի, ասացի՝ կկրակեմ, գնա, իսկ նա միայն հռհռաց վրաս: Ա՛յ, տե՛ս, կանգնած մեզ է նայում, - դարձյալ մատը առաջ մեկնեց նա, - չե՞ս տեսնում:

Զինվորի աչքերի մեջ սարսափ կար, անտանելի սարսափ: Նրան նայողը չէր կարող կասկածել, որ աչքին ինչ-որ բան է երևում, և այդ «ինչ-որը» մադու տեսք ունի: Տղան սարսափելի վախենում էր, նույնիսկ՝ իրեն կորցնելու աստիճանի:

-Դու մկրտվա՞ծ ես, - հարցրեցի նրան:

-Հա՛, - գլխով արեց նա:

-Տերուսական աղոթքը գիտե՞ս:

- Ըհը՛:

-Այդ մարդը մենակ ժամապահ եղած ժամանա՞կդ է գալիս, թե՞...

-Այս էլ որքան ժամանակ է, հաճախ հայտնվում է: Ուրիշ ժամանակ էլ...

-Դե որ կգա, սկսիր աղոթել: «Հայր մերն» ասա, կամ Հիսուսի անունը տուր, խաչակնքիր և կամ Հիսուսական աղոթքն ասա:

-Էդ ո՞րն է:

-Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Բարձրյալ Աստծո, ողորմա ինձ՝ բազմամեղիս:

-Լավ, - գլխով արեց գինվորը:

Անցավ մի որոշ ժամանակ: Հաջորդ անգամ դարձյալ լսվեց նրա ձայնը, կոպում էր ինչ-որ մեկի հետ, զայրացած սպառնում: Ակնհայտորեն կորցրել էր իրեն: Դարձյալ դուրս նայեցի հողատնակից:

-Հը՞, - հարցրեցի:

-Էլի եկել էր:

-Մոռացե՞լ ես ասածս: Աղոթիր, հենց որ աչքիդ կերևա:

Չանցած մի որոշ ժամանակ, լսեցի նք, որ բարձր ձայնով աղոթում էր. «Հայր մեր, որ յերկինս ես...», հետո՝ «Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Բարձրյալ Աստծո...»: Ահագին ժամանակ աղոթում էր:

Ես սաստեցի հողատնակում նստած տղաներին.

-Ձայն չհանեք, թող աղոթի, թող ինքը հաղթահարի իր վախը: Վրան չծիծաղեք:

Երբ հերթափոխ եղավ, և նա եկավ հողատնակ, աչքերը փայլում էին:

-Հը՞, - ժպտացի ես:

-Բա չե՞ս ասի, ավագ ջան, - ժպտաց պայծառ, - հենց էդ ծերունին եկավ ու սկսեց ինձ համոզել, որ իր հետ գնամ, սկսեցի աղոթել: Երբ սկսեցի աղոթել, նա սկսեց հետ-հետ գնալ, հետո, երբ «Հիսուսական» աղոթքն սկսեցի, մի տեսակ վախեցած կուչ եկավ: Երկու ձեռքով բռնեց գլուխը ու սկսեց խնդրել.

-Մի բոպե լռիր: Դրա անունը մի տուր: (Քրիստոսին ի նկատի ունենալով):

Իսկ ես հո գիժ չէի՞, որ դադարեցնեի: Ավելի բարձր էի ասում ու գնում էի դեպի նա: Թե առաջ ես էի փախչում, հիմա ինքն սկսեց փախչել, բայց անընդհատ ասում էր, որ դադարեցնեմ, լսեմ իրեն, որ այդ աղոթքն էլ, Հիսուսն էլ ինձ փրկել չեն կարողանա: Բայց ես աղոթում էի, և նա վախեցած կուչ էր գալիս ու հեռանում էր ինձանից: Հա՛, քո դեմ էլ էր խոսում: «Էդ

տղան ո՞վ է, - ասում էր, - որ քեզ սովորեցնում է: Դու նրան մի՛
լսիր»: Բայց այնքան աղոթեցի, մինչև գնաց, կորավ:

Ես գիտեի աղոթքի, Քրիստոսի գորավոր ուժի մասին, բայց
այս դեպքն ինձ ավելի համոզեց դրանում:

Դիրքերից իջանք: Զորամասում դարձյալ հանդիպեցի զին-
վորին:

-Հը՞, էլի գալի՞ս է, - հարցրեցի նրան:

-Հա, մեկ-մեկ գալիս է, բայց երբ Հիսուսի անունը տալիս եմ
կամ հենց «Հիսուսական» աղոթքն ասում եմ, չքանում է: Բայց
չի դադարում սպառնալուց, թե ինքն էլի կգա, որ ես իրենից
պրծում չունեմ: Բայց հիմա արդեն չեմ վախենում նրանից, -
ժպտաց զինվորը:

-Երբ արձակուրդ գնաս, մտիր եկեղեցի, պատմիր քահանա-
յին և թող նա գլխիդ համապատասխան աղոթքը կարդա, - նրան
խորհուրդ տվեցի ես, - ասաց ավագը, հետո հարցական նայեց
ինձ, - ճի՞շտ եմ վարվել:

-Այո՛, - ասացի ես:

ԱՍՏՎԱԾ ԲՈՒԺԵՑ ԵՐԱԿՆԵՐԻՍ ԽՅԱՆՈՒՄԸ

Ես Մասիսից նոր էի Սևան տեղափոխվել: Դեռևս չգիտեի,
որ Սևանում գործող եկեղեցի կա, և չնայած նրան, որ հավա-
տացյալ էի, եկեղեցի չէի գնում: Մի օր հարևանուհիս պատմեց,
որ Սևանա վանքը վերաբացվել է, որ համայնք կա, որ ամեն կի-
րակի եկեղեցում Ս. Պատարագ է մատուցվում:

-Արի այս կիրակի գնանք Պատարագի,- ասաց:

-Կգամ,- պատասխանեցի,- բայց ոտքի երակների լայնացում
ունեմ, չգիտեմ՝ կկարողնա՞մ բարձրանալ եկեղեցի, չգիտեմ՝ ի
վիճակի կլինե՞մ այդքան ժամանակ ոտքի վրա կանգնելու:

-Արի, գուցե Աստված խղճա և քեզ բժշկություն տա,- իրենը պնդեց հարևանուհին:

Մի կերպ իջա իններորդ հարկից, մեծ դժվարությամբ բարձրացա եկեղեցի: Պատարագի ողջ ընթացքում ոտքս ցավում էր: Առանց այն էլ ուռել էր և, չնայած օգտագործածս բազում դեղերին, որևէ կերպ չէր անցնում ցավը: Մտածում էի, թե Պատարագից հետո վիճակս ավելի կվատանա:

Մի կերպ դիմացա մինչև Պատարագն ավարտվեց, հետո քահանան շուրջառի տակ բժշկության աղոթք կարդաց, որին նաև ես մասնակցեցի: Վերադարձա տուն: Չգագցի, թե ինչպես իջա Սևանի թերակղզու աստիճաններով: Հասա շենք, հանգիստ բարձրացա իններորդ հարկ և հանկարծ գլխի ընկա, որ ոտքս այլևս չի ցավում:

Չմոռանամ ասել, որ դեպքը տեղի է ունեցել 2001թ., Խաչվերացի Պատարագից հետո:

Հիմա ես այլևս ո՛չ երակների լայնացում ունեմ, ո՛չ խցանում: Փառք Աստծուն իր հրաշալի բուժման և ամեն ինչի համար:

ԱՆԱՅԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ք.Սևան

ՓՐԿԵՑ ԱՍԾՈ ԱՆՈՒՆԸ

Դեպքը կատարվել է Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղում, 2004 թվականի աշնանը: Որոշել էի խեցեգետին բուժել: Հասկանալի է, թե որքան աշխատատար գործ է դա: Հաճախ ինքս էի աշխատում բանվորների հետ, փորձում վերացնել այս կամ այն անսարքությունը, լրացնել այս կամ այն կիսատ գործը: Այդ օրը փչացել էր լուսավորության լամպը: Որոշեցի ինքս փոխել: Աստիճանը հարմարեցրի ավազանի վրա դրված տախտակ-

ների վրա, բարձրացա, տեսա՝ անսարքությունը լամպից չէ: Քանդեցի կոթառը, և այդ պահին չհասկացա՝ ինչ կատարվեց: Զգացի, որ հոսանքը խփեց, և ես, ձեռքով բաց լարը բռնած, ընկա ջրավազանը:

Հաստատ և հստակ զգացի, որ մեռնում եմ: Աչքիս առջևից անցավ փոքր երեխաս և ուրիշ ոչինչ: Վայրկյանի մեկ տասնե-րորդական մասում հասցրեցի ասել «Աստված»:

Զգացի, որ մահացած եմ, հայտնվել եմ մի այլ աշխարհում: Մի տեղում, որ երկրի վրա չէ: Հիմա այդ ամենը պատմել կամ նկարագրել չեմ կարողանում:

Հետո, երբ արթնացա, առաջին հարցս այն էր, թե. «Ախր ես մեռած էի, ո՞նց կենդանացա»:

Մինչև հիմա էլ չեմ կարողանում հասկանալ, թե ոնց այդպես եղավ: Նախ, որ ձեռքով բռնած էլեկտրական հոսանքի լիցքերը դուրս եկան ոչ թե ոտքերիցս, այլ մի ձեռքի միջով մտան և մյուսով դուրս եկան: Ախր բոլորին է հայտնի, թե էլեկտրականութունը ջրի մեջ որքան վտանգավոր է: Մյուս զարմանքը. ինձ հետ կատարվածը տեսնելով՝ հորեղբորս տղան իրեն նետել է ավազանը, բայց հոսանքահար չի եղել:

Հիմա, երբ հետադարձ հայացքով նայում ենք, ասում ենք պատճառն այն է եղել, որ նա ինձ ջրից հանելիս ուսերիցս չի բռնել, այլ՝ ոտքերիցս ու գոտկատեղիցս: Ես հասկանում եմ՝ կարելի է գիտական տարբեր բացատրություններ տալ կատարվածին, բայց մի դեպքի համար թվացյալ պատահականությունները շատ չե՞ն արդյոք:

Ինչ էլ որ լինի, իմ «մահացած» ժամանակ տեսածն ու ինձ հետ կատարվածը, իմ հրաշալի փրկությունը ես վերագրում եմ իմ մտքում Աստծո անունը տալուն և Նրա ողորմածությանը:

Նախքան այս դեպքը ես հավատում էի, բայց ոչ այնքան խորը: Հավատս ավելի շատ մակերեսային էր, ինչ թաքցնեմ,

նաև՝ կասկածանքով շողախված, բայց հիմա ես գիտեմ, որ Նա է տնօրինում բոլորիս կյանքը և դժբախտություն պահին միայն Նրա անվան հիշատակությունն էլ բավական է փրկվելու համար:

ԱՐԱՄ ԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճաշեն

ՔԱՅԱՆԱՅԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1994 թվականին էր: Մեր սեփական մեքենայով գալիս էինք Ապարանից: Գնացել էինք Արարատյան դաշտի շոգից մի քիչ հանգստանալու, ժամանակ անցկացնելու: Էջմիածնի ճանապարհին ավտովթար տեղի ունեցավ: Սակայն վթարը սովորական չէր: «Զիլ» մակնիշի բեռնատարը անցավ մեր «Ժիգուլու» թափքի վրայով:

Դեպքն արտառոց էր: Մեքենան ճխլվել, գրեթե հավասարվել էր գետնին, սակայն հրաշքն այն էր, որ մեզնից ոչ մեկին ոչինչ չէր պատահել: Միայն հորս շրթունքն էր մի քիչ ճղվել:

Մեր մեքենան այլևս անպետք էր օգտագործելու համար: Այն թողեցինք հենց ճանապարհի վրա և մի այլ մեքենայով հասանք տուն:

Ոչ միայն ես ու մեքենայի մեջ գտնվող մեր ընտանիքի անդամները, այլև դեպքին ակնատես մարդիկ նման հրաշքի պատճառ համարում էին այն, որ մեքենայի մեջ էր նաև մեր ընտանիքի քավորը՝ Տ. Ստեփանոս քահանա Մելիքյանը: Ես չգիտեմ՝ նա ի՞նչ աղոթք էր շնչացել ճանապարհ ընկնելուց առաջ կամ վթարի պահին, բայց հավատացած եմ, որ Տերը պահպանեց նրան և նրա հետ էլ մեր ընտանիքը՝ վերահաս մահից:

ԱՐՏԱԿ ԳԱՐԻԵԼՅԱՆ
ք. Էջմիածին

ԻՍ ԱՂՈԹԸ ՓՐԿԵՑ ԻՆՁ

Ծառայում էի Հայոց բանակում՝ Տավուշի Մարզի Շամշաղի նի տարածաշրջանի Թոռուզի զորամասում: 2006 թվականի օգոստոսի 2-ին էր: Ամեն ինչ հանգիստ էր ու խաղաղ, կարծես թե անհանգստացնող բան չկար, բայց կարծես մեկն ինձ ասելիս լինեք՝ աղոթիր: Հիանալի բնություն էր, գունագեղ ծաղիկների ծով, թռչունների դայլայլ: Ընկերոջս հետ նստած էինք ծառերի հովանու տակ.

-Շատ խաղաղ է ամեն ինչ, արի աղոթենք,- առաջարկեց ընկերս:

Աղոթեցինք երկուսով, հետո նա գնաց: Ես մնացի մենակ, բայց իմ ջերմ ու գաղտնի աղոթքը կարծես թե չէր դադարում: Աղոթեցի երկար: Եղավ մի պահ, որ մարմինս սկսեց փշաքաղվել ու մի անսովոր ուրախություն պարուրեց ինձ: Ես աղոթում էի իմ անվտանգ ծառայության համար, խնդրում էի, որ Աստված ինձ անփորձանք տանի, հասցնի իմ ծնողներին ու հարազատներին: Ասենք, ո՞վ չգիտի, թե ինչ կխնդրի գինվորն Աստծուց:

Հետո գնացինք հերթապահության: Եկավ գիշերը, ժամապահը մնաց իր դիրքում, իսկ մենք քնեցինք: Առավոտյան արթնացա կրակոցների ձայնից: Առաջին պահ գլխի չընկա, թե ինչ է տեղի ունեցել, իսկ հետո արդեն հասկացա եղելությունը: Ժամապահը, Աստված գիտե, թե ինչու, հոգեկան անհավասարակշիռ վիճակում կրակ էր բացել սեփական դիրքերի ու իր ընկերների վրա: Իմ կողքին պառկած երկու գինվոր մահացել էին, իսկ երրորդը ծանր վիրավորվել էր: Երբ ուշադիր նայեցի, տեսա, որ իմ վարտիքը մի քանի տեղից ծակվել է: Գնդակները ծակել, մաղ էին դարձրել շորերս, բայց ինձ չէին վնասել: Ում պատմես՝ չի հավատա, իսկ ես վստահ եմ, որ նախորդ օրվա իմ ջերմ աղոթքը փրկեց ինձ: Մի տաս օր անց ես վերջացրի իմ ծառայության

ժամկետը և տուն գնացի: Իմանալով իմ հրաշալի փրկության մասին՝ ծնողներս մատաղ արեցին:

ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
Արարատի մարզ, գյուղ Մխչյան

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԲԱՌԸ՝ «ԽԱՉ»

Ով եղել է նախաերկրաշարժյան Գյումրի-Լենինականում, գիտի, որ նրա բնակիչների մեծ մասն աստվածամերժ էր: Բացառություն չէր նաև մեր ընտանիքը: Սակայն մի դեպք պատահեց, որն ստիպեց իմ ծնողներին ապավինել Աստծո զորությանը և հասկանալ, որ Նրա համար չկա անհնարին ոչինչ:

Ահա պատմությունը: Ես երկու տարեկան եմ եղել, երբ մի օր, բուժքույր տատիկիս տանը, մեծերի աչքից հեռու, գտել եմ դեղերը և սկսել եմ խաղալ նրանց հետ: Հետո կերել եմ ճնշումն իջեցնող դեղահաբեր: Ոչ թե մեկ կամ երկու հաբ, այլ բավականաչափ շատ: Ու երբ ինձ հիվանդանոց են հասցրել, արդեն շատ ծանր վիճակում եմ եղել: Գործի են անցել բժիշկները: Սակայն նրանք համոզված չէին, թե ես կապրեմ:

- Եթե նույնիսկ երեխան առողջանա էլ, դժվար թե նորմալ մարդ լինի,- տխրությունը ասել էր բժիշկը:

Ինձ միայն մի քանի օր հետո են վերակենդանացման բաժանմունքից տեղափոխում պալատ և մորս թույլ են տալիս, որ խնամի ինձ: Մի քանի շաբաթ անց միայն կարողացել եմ խոսել և առաջին բառը, որ արտասանել եմ եղել է «ինչը»: Մորս վկայությունը երեք բառ եմ ասել՝ «ինչ», «մամ», «ջուր»...

Վերջին երկուսը հասկանալի են, բայց երկու տարեկան երեխան ի՞նչ գիտի, թե ինչ է խաչը: Բայց արի ու տես, որ գիտի: Աստված գիտի, քանզի Տիրոջ ճանապարհներն անքննելի են:

Տեսնելով իմ սերը խաչի նկատմամբ՝ տատիկիս խորհրդով որոշում են հիվանդանոցից դուրս գրելուց հետո մկրտել ինձ:

Մի այլ զարմանալի երևույթի մասին ևս: Մի ամսից ինձ դուրս են գրում հիվանդանոցից և բերում են տատիկիս տուն: (Ասեմ, որ մենք ու տատիկենքս ապրում էինք նույն շենքի տարբեր բնակարաններում): Հասկանալի է, թե ինչպիսի ուրախություն պիտի լիներ իմ առողջանալը բուրբի համար: Ինձ բազմաթիվ խաղալիքներ են նվիրում, բայց ես ոչ մի խաղալիքի վրա ուշադրություն չեմ դարձնում և շարունակ մորս փեշը քաշելով՝ հասկացնում եմ, որ ինձ տանի մեր տուն: Զարմացած մայրս գրկում է ինձ և կատարում ցանկությունս: Որքան մեծ է լինում նրա զարմանքը, երբ ես մտնում եմ իմ սենյակ, բարձրանում մահճակալի վրա, ուր դրված է լինում Տիրամոր նկարը, և համբուրում եմ այն: Այս բոլորից հետո միայն հանգստանում եմ ու սկսում եմ խաղալ իմ նոր խաղալիքներով: Ասեմ, որ մեր տանն այդ նկարը եզակի էր, մեր տանը սրբապատկերներ չկային, քանի որ, կրկնեմ, մերոնք կոմունիստական գաղափարների հետևորդներ էին:

Իմ նման վերաբերմունքն ավելի է խորացնում մերոնց համոզմունքն ինձ մկրտելու հարցում և 1987 թվականի ապրիլի 12-ին մկրտում են: Այսպես քրիստոնեական հավատքը մուտք գործեց մեր ընտանիք, իսկ ես փոքր տարիքից որոշեցի նվիրվել ինձ մահից փրկող Աստծուն և ամբողջ կյանքում ծառայել նրան:

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՊԱՏԱՐԱԳ

2002 թվականի հոկտեմբերի 3-ին էր: Կլիներ կեսօրվա ժամը երեքը-երեք անց կեսը: Կանգնած էի Գյումրու Ս. Յոթվերք եկեղեցու բակում: Հանկարծ լսեցի, որ եկեղեցու ներսից երգեցողություն ձայն է գալիս: Հիշում եմ՝ Ս. Պատարագի սկզբի հատ-

վածն էր՝ «Խորհուրդ խորինը»: Լսվում էր նաև քչոցների ձայնը, հնչում էին զանգերը: Առաջին պահ կարծեցի, թե ինձ թվացել է, քանի որ ես էի ժամկոչը և ես պետք է զանգահարեի, իսկ ես դբսում կանգնած էի: Զայները շարունակվում էին:

Ստիպված ներս մտա՝ տեսնելու համար, թե ո՞վ է երգում: Սակայն ներսում ամեն ինչ հանդարտ ու հանգիստ էր: Ներսում մարդ չկար: Դուրս եկա, և դարձյալ շարունակվում էր երգեցողությունն ու քչոցների ձայնը, զանգերի ղողանջը: Շուտով եկավ իմ օգնականն ու հարցրեց.

-Ո՞վ է քաշում զանգերը:

Ես նրան պատմեցի եղելությունը: Հետո պարզվեց, որ զանգերի ձայնը լսել են նաև եկեղեցու դիմաց գտնվող ոսկու շուկայի աշխատողները, նաև՝ եկեղեցու պահակ Մարգարիտ մամը, որն ապրում էր հարևանությունը:

Երբ այդ մասին հարցրեցինք ավագ լուսարար Տեր Թաթուլ քահանա Հակոբյանին, պատասխանեց, թե Ավետարանական խոսքի համաձայն գուցե այդ օրը երկնքում ուրախություն է եղել ինչ-որ առիթով և այդ ուրախություն ձայները լսելի են եղել նաև երկրի վրա, տվյալ դեպքում՝ Ս. Յոթվերք եկեղեցում: Հետագայում այդ նույն տեսակետը հաստատեց նաև Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը:

ԲԱՑՎԵՑ ԶԱՄՐԻ ԼԵՉՈՒՆ

Այս դեպքը նույնպես տեղի է ունեցել Սուրբ Յոթվերքում, 2001 թվականին: Քահանան մի համր տասներկու տարեկան տղայի էր մկրտում: Դրոշմի ժամանակ հանկարծ եկեղեցու լույսերն անջատվեցին և ի գարմանս բոլորի տղան բարձր ձայնով կանչեց.

-Վա՛յ, լույսերն անջատվեցին: Ուրեմն իմ մկրտությունը չընդունվեց:

Առաջին պահ բոլորի ուշադրությունը լույսերն էին, հետո հանկարծ գլխի ընկան, որ համրը խոսեց:

Ինչ խոսք, լույսերի անջատվել կամ չանջատվելը բնավ էլ չի խոսում մկրտության ընդունված կամ ընդունված չլինելու մասին, սակայն փաստ էր, որ Մկրտություն ու Դրոշմի սուրբ խորհուրդը բացեց տասներկուամյա համրի լեզուն:

ԷԴԳԱՐ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Ք. Գյումրի

Ո՞Վ ՍԹԱՓԵՅՐԵՑ ԹՄՐԱՄՈՒՆ

- Գիտե՞ս, որ ես մի ժամանակ թմրամոլ եմ եղել,- մի օր անկեղծացավ ծանոթս, ու ես զարմացած նայեցի նրան:

- Թմրամո՞լ:

- Այո, - գլուխը դրական շարժեց նա և տեսնելով իմ թերահավատությունը՝ ժպտաց,- պատմեմ՝ լսիր: Երկար տարիներ տառապում էի այդ ախտով: Սկզբում հաճույքի համար էի ծխում, հետո արդեն հրաժարվել չէի կարողանում: Հաշիշի ու թմրադեղի էի տվել ողջ եղած-չեղածը, կորած մարդ էի ու չգիտեի անելիքս: Երբ ծխում էի, մոռանում էի աշխարհը, իսկ երբ սթափվում էի, նորից սկսում էի մտածել, թե որտեղի՞ց գտնեմ նոր չափաբաժին, որ կոտրատվող մարմնիս պահանջը հագեցնեմ:

Մի գիշեր ընկել էի ծանր վիճակի մեջ: Ուզում էի սրսկվել, բայց թմրադեղ չունեի: Ուզում էի քնել ու չէի կարողանում, ցանկանում էի մոռանալ ու չէր ստացվում: Գիտեի՝ թմրաբաժին կարելի է ճարել Քանաքեռից, բայց Հրազդանից մինչև Քանաքեռ որքա՞ն ճանապարհ է... Բացի ճանապարհի հեռավորությունից, փող էլ չկար:

Շատ մտածեցի, վերջը կարծես թե գտա հնարը: Վերցրի կնոջս միակ զգեստն ու ճամփա ընկա դեպի Քանաքեռ: Գնում էի ասես օդի միջով, չէի հասկանում արածս, ամբողջ ուշքս ու միտքս տեղ հասնելն էր ու նոր չափաբաժին ստանալը: Քանի՞ ժամ գնացի, Աստված գիտե: Ո՛չ վախենում էի, ո՛չ անհանգստանում: Ո՛չ ծարավ էի, ո՛չ քաղցած: Մի ցանկոթյուն ունեի՝ թմրադեղ: Երկար ճանապարհ կտրելուց հետո հասա, բայց պարզվեց, որ... չկա:

Ով գոնե մոտիկից տեսել է թմրամոլի տառապանքը, կհասկանա, թե դա ինչ էր նշանակում ինձ համար: Աշխարհն ասես փուլ եկավ գլխիս: Մոլոր քայլերս դարձյալ ուղղեցի դեպի տուն: Քայլում և անիծում էի իմ բախտը: Ճանապարհին, երբ արդեն նոր-նոր բացվում էր լույսը, հանկարծ մի գորոթյուն լուսավորեց ինձ: Դա ինչ-որ տարօրինակ, վերերկրային բան էր: Մի ակնթարթում լուսավորվեց միտքս: Բա որ կնոջս վերջին շորը տանում էի թմրադեղով փոխելու, կինս ի՞նչ պիտի հագներ: Հանկարծ մի մեծ ու անասելի ամոթ զգացի և... միանգամից կորավ թմրադեղ ընդունելու ցանկոթյունս: Այդ օրվանից մինչև հիմա այլևս ոչ մի անգամ թմրադեղ չեմ ընդունել: Բացի այդ, այդ վերերկրային ներշնչման շնորհիվ ես նաև աստվածավախ ու հավատացյալ դարձա: Դու տեսած կա՞ս, որ թմրամոլը կարողանա այդքան հեշտությամբ հրաժարվել իր արատավոր սովորությունից: Մարդիկ բժիշկների դռներն են մաշում, մարդիկ վաճառում են ունեցածներն ու տալիս են բժշկի, բայց թմրամոլությունից ազատվել չեն կարողանում, իսկ ես, Աստծո ողորմածությամբ, հրաժարվեցի այդ վտանգավոր սովորությունից և եթե այսօր չպատմեի, նույնիսկ դու չէիր իմանա, որ ես մի ժամանակ թմրամոլ եմ եղել:

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների
դոկտոր

Ս ԿՈՒՅԱԸ ԲՈՒԺԵՑ ՀՈՒՓՍԻՄԵ ԱՂՁՆԱԿԻՆ

Հայտնի է, որ «Սուրբ Հռիփսիմե» վանքում են ամփոփված Կուլյսի մասունքները: Ո՞վ գիտե, դարերի ընթացքում քանի-քանի հրաշալի բժշկումներ են կատարվել նրա գերազմանի մոտ: Այդօրինակ բժշկությունները շարունակվում են նաև այսօր:

Բոլորովին վերջերս Կուլյսի գերեզմանին այցելեց մի աղջնակ: Ինչ-ինչ պատճառներով բռնվել էր երեխայի լեզուն, և նա զրկվել էր խոսելու ընդունակութունից: Աղջիկն ու մայրը եկան, աղոթեցին Սուրբ Հռիփսիմեին, մոմ վառեցին, նրա բարեխոսությունը խնդրեցին և... արդեն երեք օր համրության դատապարտված երեխան խոսեց: Ավելացնենք, որ աղջկա անունը նույնպես Հռիփսիմե էր:

ԸՈՒՅՐ ԱՍՏԴԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Հայաստանի Հանրային հեռուստաալիք
«360 աստիճան» լրատվական հաղորդման
2006թ. մարտի 5-ի թողարկումից

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԱՏԱՂԸ

Այս պատմությունն ինձ պատմել է Արսեն անունով մի տղա, որ ապրում էր կարծեմ նախկին Սևանի շրջանի Ցամաքաբերդ գյուղում:

-Ծնողներս արդեն երեք աղջիկ ունեին և նոր երեխայի էին սպասում,- այսպես սկսեց իր պատմությունը նա, - 1962 թվականն էր: Մայրս հղի էր, և հասկանալի պատճառով, ծնողներս շատ էին ուզում, որ տղա ծնվի: Մատաղ են խոստանում Սևանա վանքին: Մատաղի օրը մեր ողջ գերդաստանը գալիս է եկեղեցի: Հայտնի է, որ խորհրդային այն տարիներին վանքը, մասնավորապես Սուրբ Առաքելոց եկեղեցին, թանգարան էր:

Նրանք բարձրանում են եկեղեցի, իրենց ուխտն անելուց հետո իջնում են ներքև, լճի ափը և որոշում են ճաշակել մատաղը: Հայրս որոշում է սովորական ձևով եփելու փոխարեն խորոված անել մատաղի միսը:

Միսը կրակին դնելուց երկու րոպե չանցած՝ հայտնվում են երկու կանայք: Հայրս և բոլոր բարեկամներս վկայում են, որ կանայք իջնելիս են եղել վերևից՝ կղզու գագաթից: Բայց մերոնք գիտեին, որ վերևում որևէ մարդ չկա... Դա իր հերթին: Կանայք նաև տարօրինակ հագուստներ են ունեցել. երկար սպիտակ սավաններ, և շատ թախծոտ ու վշտահար դեմք: Նրանց աչքերն ասես ճպուռոտ են եղել. լացի՞ց, թե՞ մի այլ բանից:

-Այս ի՞նչ եք անում,- հանդիմանում են նրանք, - բա մատաղը խորոված կանեն: Այս ծուխն առ Աստված է բարձրացել...

-Ոչինչ, քույրիկ, - կես կատակ-կես լուրջ պատասխանում է Հայրս,- ի՞նչ տարբերություն, թե ինչպես կուտենք գառան միսը: Դուք էլ համեցեք:

«Տեսնես որտեղի՞ց իմացան, որ մենք մատաղ ենք արել», - մտածում է մայրս, հետո գլխի ընկնելով, որ ինչ-որ բան այն չէ, այս կանայք շատ տարաշխարհիկ տեսք ունեն, հարցնում է.

-Քույրիկ, դուք հաստատ կիմանաք: Այս մեկն է՞լ է աղջիկ:

-Ձէ, այդ մեկը տղա է,- պատասխանում են նրանք:

Իսկ մերոնց իրենց հետ սեղան նստելու հորդորներին պատասխանում են.

-Մեր աչքերը ծխից ու արցունքից փակված են, լվացվենք, նոր:

Մոտենում են լճին, երեսներին ջուր են քսում և մերոնց ապշահար հայացքի առջև՝ անհետանում:

Դրանից հետո ծնվում եմ ես: Մինչև այսօր ապրում եմ աշխարհում: Այդ դեպքը մինչև հիմա հիշում ու պատմում են ոչ միայն իմ ծնողները, այլև բոլոր նրանք, ովքեր մասնակցել են

այդ տարօրինակ մատաղին և ականատես են եղել այդ հրաշ-
քին,- ասաց նա:

ՎԱՐԴԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Կոտայքի մարզ, գյուղ Գողթ

«ՄԱՇՏՈՅՆԵՐԻ» ԲՈՒԺԻՉ ԶՈՒՐԸ

Երկու տարի առաջ էր, ձմեռնամուտին: Որոշեցի մեքենայի հովացման համակարգի մեջ ջրի փոխարեն անտիֆրիզ լցնել: Զուրը թափեցի, փորձեցի համապատասխան խտուրթյան լուծույթ պատրաստել: Տարողության միջից փողրակով քաշեցի հեղուկը և... մի քիչ բերանս լցվեց: Ես ընդհանրապես զզվող չեմ, բայց բերանիս մեջ մի տտիպ քաղցրություն զգացի: Տհաճ էր, բայց բանի տեղ չդրեցի, շարունակեցի գործս և մի քանի րոպե անց ողջ մարմինս պատեց ալերգիկ ցանով:

Բժշկի դիմեցի: «Ալերգիա է», - ասացին և հենց հիվանդա-
նոցում ներարկում արեցին, որից, սակայն, ավելի վատացա և սկսեցի դողացնել: Ճիշտն ասած, ասեղից վախենում եմ, այդ դողն էլ մյուս կողմից: Բժիշկներն իրար խառնվեցին, մի կերպ դողը կտրվեց, բայց ցանը չանցավ և վիճակս չթեթևացավ: Ասեմ, որ մոտոս մի փոքր մրսածություն էլ կար:

-Արի երևան ուղարկենք,- ասացին Սևանի բժիշկները:

Ոչինչ չասացի, մեքենան ուղիղ «Մաշտոցներ» քչեցի: Ասում են դարեր առաջ Մաշտոց հայրապետն այդտեղ ճգնել ու օրհնել է այդ ջուրը: Եվ այն շատ ու շատ հիվանդների է օգնում: Մտքիս մեջ Աստծուն խնդրեցի բուժել ինձ, մոմ վառեցի: Հետո մերկացա, և չնայած ցրտին ու իմ մրսածությանը, Մաշտոցների օրհնված ջրից մի դույլ վրաս լցրեցի: Սրբվեցի, հագա շորերս և... հիվանդությունն ասես դանակով կտրեցին. տաս րոպե հետո անցավ ու անցավ:

* * *

Հաջորդ տարի նույնը աղջկաս հետ պատահեց: Ի՞նչ գործ էր արել, չգիտեմ, զգվել էր: Մարմինը լրիվ կարմիր ցանով էր պատվել: Տարանք հիվանդանոց:

-Պետք է կաթիլային միացնենք,- ասացին:

Եկանք, դեղեր առանք, բուժքույր կանչեցինք: Երեխան մի կուրս ընդունեց, կարծես թե լավացավ, բայց սրսկումներն ավարտելուց երկու օր անց վիճակն ավելի վատացավ: Մայրն իրար անցավ:

-Արի էլի հիվանդանոց տանենք,- ասաց:

-Արի,- ասացի,- բայց իմ իմացած հիվանդանոցը:

Նորից տարա «Մաշտոցներ»: Չնայած կնոջս մտավախուժյանը, թե երեխան կմրսի, դարձյալ Մաշտոց Եղիվարդեցու օրհնած աղբյուրի ջրից լցրեցի աղջկա վրա և... հիվանդուժյունը չքացավ:

Ես բժշկուժյանը դեմ չեմ, բայց իմ գլխով անցածին ու աչքով տեսածին չեմ կարող չհավատալ: Չեմ կարող չհավատալ Մաշտոց Եղիվարդեցու աղբյուրի գորուժյանը:

ՕՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սևան

ՓՈՔՐԻԿ ԹԱԹՈՒԼԻ ԹՈՒՉՔԸ

Իջևանցի 13-ամյա Գոհար Օթարյանին հանդիպեցինք Դիլիջանի մանկական առողջարանում, 2006 թվականի ապրիլին: Նրանց հավատալոր ընտանիքն ուժ երեխա ունի: Նրանք հավատում են Աստուծուն, ապրում քրիստոնյայի կյանքով և Աստված պահպանում է նրանց: Հաճախ է ողորմածաբար ներում և հաճախ է փրկում չարից ու փորձանքից:

-Իսկ այն դեպքը, որ տեղի ունեցավ անցած տարի եղբորս՝ երկու տարեկան Թաթուլի հետ, իսկական հրաշք էր,- ժպտաց աղջիկը:- Այդ օրը ես խաղում էի շենքի բակում: Կարծես մեկն ինձ ասաց. «Հապա վերև նայիր»: Նայեցի և ի՞նչ: Սարսափեցի: Փոքրիկ Թաթուլը բարձրացել էր մեր իններորդ հարկի բնակարանի պատշգամբի լուսամուտին ու ներքև էր նայում: Ահից չկարողացա ձայն հանել, իսկ երեխան ընկավ: Ինձնից անկախ վազեցի ընդառաջ և թևերս պարզեցի: Երեխան հանգիստ, ասես չէր ընկել այդքան բարձրությունից, պառկեց թևերիս վրա: Առաջին պահ չհասկացա, որ հրաշք կատարվեց: Պատկերացրեք իններորդ հարկից, մոտ 25-27 մետր բարձրությունից 5-6 կիլոգրամանոց ինչ-որ բան ընկնի և դուք փորձեք բռնել: Նախ չեք կարողանա, հետո էլ եթե նույնիսկ բռնեք, ցավ կզգաք: Մի խոսքով: Ո՛չ ինձ բան պատահեց, ո՛չ երեխային: Տարանք Երևան, ստուգեցին, պարզվեց, որ առողջ է:

Անցել է մեկ տարուց ավելի ժամանակ, փոքրիկ Թաթուլը առողջ և ուրախ վազվզում է, իսկ լսողները չեն հավատում, որ նա 9-րդ հարկից ներքև է ընկել ու ողջ է մնացել Աստծո ողորմածությամբ:

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Բ. ԱՉՆԱՎՈՒՐՅԱՆ
Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի
4-րդ լսարանի սաներ

ՀԻՍՈՒՄԻ ԱՐՑՈՒՆՔԸ

Դեպքը տեղի է ունեցել 2000 կան 2001 թվականին: Քեռիս՝ Տեր Պարթև ավագ քահանա Աշուրյանը, Հիսուսի մի մեծադիր ու գեղեցիկ նկար ունի: Պատկերված է Քրիստոսը՝ փշե պսակը գլխին:

Մեծ պահքի հենց առաջին առավոտյան, երբ նա մոտենում է նկարին, որ աղոթի, նկատում է, որ Հիսուսի աչքերի մեջ ինչ-

որ հեղուկ է առաջացել: «Արցունքը» հավաքվում է աչքերի աղբյուրակի մեջ, բայց չի հոսում:

Այդպես լինում է Մեծ պահքի ամբողջ ընթացքում, իսկ դրանից հետո վերանում է:

Սակայն այդ չհոսող, աչքերի մեջ հավաքված արցունքի մասին ոչ միայն Տեր Պարթևն է վկայում, այլև այդ հրաշքին ահանատես եղած ուրիշ մարդիկ ևս:

ՅՐԴԵՅԻՑ ՅԵՏՈ

2004 թվականի դեկտեմբերյան մի օր Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում հրդեհ բռնկեց: Դասարանում գրված էր նավթի վառարան, տղաները չարուժյուն էին արել, նավթը հոսել էր, հետո բռնկել էր նախ վառարանը, հետո՝ հատակը, վարագույրները... Մի խոսքով իսկական հրդեհ...

Անմիջապես նրանց օգնության հասան բարձր դասարանների աշակերտները: Աշակերտներին դուրս հանեցին, հանգրեցին կրակը, կոտրեցին պատուհանների ապակիները, որպեսզի ծուխը արագ քաշվի: Բոլոր պատերը սևացել էին, պատել մրի հաստ շերտով, բացի գրատախտակի վերևում կախված Քրիստոսի նկարից: Ո՛չ կրակը, ո՛չ ծուխը, ո՛չ մուրը չէին մոտեցել նրան, և նկարի թուղթը պահպանել էր իր նախնական սպիտակ-մաքրուժյունը: Բոլորը նայում էին նկարին ու զարմանում, թե ինչպես է եղել, որ հրդեհի բոցերի ու ծխի միջից այն դուրս է եկել այդպես մաքուր ու անարատ:

ԻՆՉՈՐ՞ ԵՐ «ԼԱԼԻՍ» ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸ

Մի քանի տարի առաջ է կառուցվել նախկին Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղի «Ս. Աննա» եկեղեցին: Գեղեցիկ կա-

ուսլյց է, սակայն, քանի որ գյուղում ծխական քահանա չկա, այնտեղ կանոնավոր կերպով ժամերգություններ ու արարողություններ չեն կատարվում: Եկեղեցում Սուրբ Պատարագ էր մտուցվել միայն օծման ժամանակ:

Մի անգամ Մալիշկայում եղած ժամանակ եկեղեցի է մտնում Եղեգնաձորի հոգևոր հովիվ Տեր Պարթև ավագ քահանա Աշուրյանը և նկատում, որ խորանում գտնվող Մանկան ու Կույսի նկարից արցունք է հոսում: Առաջին պահ չի հավատում աչքերին: Նայում է ավելի ուշագիթ և համոզվում է, որ նրանց աչքերի մեջ ինչ-որ հեղուկ է լճացել:

Մտածում է, որ դրա պատճառը, հավանաբար, Պատարագ չմատուցելն է: Առաջիկա կիրակի օրը եկեղեցում Սուրբ Պատարագ է մատուցում և արարողությունից անմիջապես հետո «սրբվում է» Տեր Հիսուսի և Սուրբ Կույս Մարիամի արցունքը:

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԱԼՅԱՆ

Արմավիրի մարզ, գյուղ Ոսկեհատ

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՉՐԻՆ

Հայրս՝ Աղասի Բարաքյոզյանը, հավատավոր մարդ է: Նրա կարծիքով աշխարհում չկա ոչինչ, որ տեղի ունենա առանց Աստծո կամքի: Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդներ են նաև մյուս բարեկամներս: Իսկ Աստված միշտ էլ օգնում է նրանց, ովքեր հավատում և իրենց հույսը դնում են Իր, Սուրբ Տիրամոր և մյուս սրբերի բարեխոսության վրա:

Սակայն որքան էլ հավատավոր լինի մարդը, լինում են պահեր, որ կասկածում է: Իմ կարծիքով հրաշքները երբեմն տրվում են, որպեսզի մարդկանց հավատն ամրանա, և կասկածանքի որդը երբեք գլուխ չբարձրացնի նրանց հոգում:

Դեպքը տեղի է ունեցել 1999 թվականի մայիսին: Հայրս պապիկիս ու քեռուս երկու որդիների հետ գնում էր «Զվարթնոց» օդանավակայան: Գնում էին Ռուսաստանից եկող քեռուս դիմավորելու: Գյումրի - Զվարթնոց ճանապարհին, Օշականի մոտ, Հայրս սկսում է քեռուս տղաներին՝ էդգարին ու էդվարդին պատմել այդ սուրբ վայրի՝ Օշականի մասին: Պատմում է Սուրբի կենսագրությունը, հեռվից ցույց է տալիս եկեղեցին, որի մեջ ամփոփված են նրա մասունքները: Մի խոսքով շեղում է ուշադրությունը և արգելադրում է միայն այն ժամանակ, երբ մեքենան իր մեծ մասով հայտնվել էր անդնդախոր ձորի վրա: Եթե երկրային տրամաբանությունամբ առաջնորդվելու լինենք, ապա մեքենան պիտի ընկներ ձորը: Սակայն ինչ-որ մի ուժ նրան պահում էր ձորի վրա: Միայն հետևի անիվներով ձորապուկի ժայռին հենված՝ մեքենան մնում էր կանգնած: Հավաքվում են գյուղացիները, բայց ոչնչով չեն կարողանում օգնել ջուր կտրած ուղևորներին, քանզի վախենում են, որ մի անհաջող շարժումը կարող է անդառնալի հետևանքների հասցնել:

Վերջապես հզոր մեքենա են գտնում, զգուշությունամբ նրանից կապում «Ժիգուլին» և քաշելով փրկում անդունդը գլորվելուց:

Ո՞րն է հրաշքը: Այն, որ մինչև օգնական մեքենա գտնելը, մինչև օգնություն հասնելը մեքենան ուղևորներով, մազից կախված մնում է անդունդի եզրին: Հրաշքը նրան այդպես պահող ուժի գոյությունն է:

ՉԱԲԱՐ ԲԱՐԱԶՅՈՅԱՆ

ք. Գյումրի

ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ ԲԱՂՑԿԵՂԸ

Մեր հարևանուհին՝ տիկին Մանուշը, հավատացյալ կին է, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հետևորդ: Փորձում է ապրել

պատվիրանները պահելով, ամեն կիրակի մասնակցում է Սուրբ Պատարագին, տանը առանձնական աղոթքներ է անում:

Վերջերս, անսպասելի կերպով, նրա ճակատին մի մեծ խալ էր առաջացել, որ օրեցօր մեծանում էր: Հետո խալն սկսում է արյունահոսել: Բոլորը, այդ թվում և ինքը՝ Մանուչը, գիտեին, որ դա քաղցկեղ է: Կարծեմ նույնն էին հաստատել նաև բժշկական ուսումնասիրությունները:

Հավատացյալ մարդուն նման դեպքում ի՞նչ է մնում աղոթքից բացի: Աղոթում էր տիկին Մանուչը, Տիրոջը խնդրում, որ այդ ցավը վերցնի իրենից:

Եվ ահա մի օր աղոթելով գնում է դեպի եկեղեցի, և ինքն էլ չիմանալով ինչպես, ձեռքը տանում է ճակատին և քաշում, պոկում է չարորակ գոյացությունը: Մի քիչ անց գլխի է ընկնում իր արածը և սարսափում է: Չէ՞ որ նման դեպքերում խորհուրդ չի տրվում ուռուցքին ձեռք տալ: Տուն վերադառնալուց հետո մոտենում է հայելուն՝ պոկված վերքն ուսումնասիրելու համար և զարմանքից քարանում է. ճակատին ոչ միայն վերք, այլև՝ սպի չկար:

Հիմա էլ կա տիկին Մանուչը, ապրում է Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղում և ամեն օր փառք է տալիս Աստծուն, որ իր երեխաներին անմայր չթողեց և հրաշալի կերպով բժշկեց իրեն:

ՎՈՒՈՂՅԱ ՆԱԶԱՐՅԱՆ
Գեղարքունիքի մարզ, գ. Ծովազարդ

ՔԱՂՑԿԵՂԸ ԲՈՒԺԵՑ ՄԱՍՆԱՏՈՒՓԸ

Այս դեպքն ինձ պատմել է Հայ եկեղեցու պատմությունն ուսուցչուհի Ռուզաննա Ավետիսյանը, 1995 թվականին, երբ միա-

սին մասնակցում էինք Արարատյան Հայրապետական թեմի կազմակերպած կրոնի ուսուցիչների դասընթացներին:

«Քույրս հիվանդ էր քաղցկեղով,- ասաց Ռուզաննան,- բժիշկներն այլևս հույս չէին տալիս: Մենք՝ ես և մյուս քույրիկս, հերթով խնամում էինք հիվանդին: Մի օր հիշեցի, որ դասընթացներում մեզ հետ սովորող աղջիկներից մեկը պատմեց, թե ինչպես Մատթեոս Ուռհայեցին ժամանակին բուժվել է Գյումրիի Սուրբ Յոթվերք եկեղեցում աղոթելուց հետո: «Խեղդվողը ձեռքը փրփուրներին է դրում», - մտածեցի հուսահատ և ինձնից հեռացրի Յոթվերք գնալու միտքը: Հետո, հիվանդի կողքին նստած, մի փոքր նիրհեցի և կես-քուն կես-արթուն պարզորոշ լսեցի մի ձայն, որ ասաց.

-Բեր Յոթվերք եկեղեցու մասնատուփը, թաթախիր ջրի մեջ, ապա այդ ջուրը խմեցրու հիվանդին:

Ես սթափվեցի քնից, բայց մտածեցի. «Ուռհայեցու մասին պատմածի ազդեցություն տակ այսպիսի երազ տեսա»: Լուսացավ, թվաց, թե օրվա հոգսերի հետ կմոռացվի նաև այդ երազ-տեսիլքը, բայց ոչ միայն այդ, այլև հաջորդ օրերին լսածս խոսքերն ամեն ըոպե կենդանի ու կառչուն, զրնգում էին ականջներիս մեջ: Ինչ էլ որ անում էի, չէի կարողանում դրանցից ազատվել:

Ի վերջո որոշեցի գնալ Գյումրի: Առանց որևէ մեկին ասելու գնացի Գյումրի, հարցուփորձ անելով գտա Յոթվերքը, հանդիպեցի քահանային, պատմեցի ամեն ինչ: Նա համբերությամբ լսեց, լռեց երկար ժամանակ, իսկ հետո ասաց, որ ինքն ինձ հետ պիտի գա հիվանդի մոտ:

-Բայց ախր ես գաղտնի եմ եկել, բացի այդ ո՛չ հիվանդը, ո՛չ էլ նրա ամուսինը հավատացյալ չեն կամ աչքի չեն ընկնում ջերմեռանդու թյամբ:

-Ախր ես ինչպե՞ս կարող եմ մասնատուփը վստահել յուրաքանչյուր խնդրողի,-թեևերն անօգնական տարածեց քահանան:

Երկար խնդրեցի, խոստացա հաջորդ օրն անպայման վերադարձնել: Վերջապես բարի քահանան գիշեց:

Երբ տեղ հասա, տեսա՝ քույրս քնած է: Չցանկացա արթնացնել: Մասնատուփը դրեցի սեղանին, կողքին՝ բաժակով ջուրը: «Հենց արթնանա, մասնատուփը կլթաթախեմ ջրի մեջ ու կտամ, որ խմի»,- որոշեցի ու նստեցի հիվանդի կողքին: Հոգնած էի և չիմացա, թե ինչպես նստած տեղս ննջեցի:

Արթնացա քրոջս տնքոցից: Վեր կացա, որ մասնատուփը թաթախեմ ջրի մեջ: Երբ մոտեցա սեղանին, ապչեցի: Դեռևս ալիքվում էր բաժակի ջուրը, իսկ մասնատուփը թաց էր: Ակնբերևաբար մի անտեսանելի ձեռք ինձնից առաջ այն թաթախել էր ջրի մեջ:

Երկար մտածելու ժամանակ չունեի. բաժակով ջուրը մոտեցրի հիվանդի շուրթերին: Այդ պահին ինձ համակել էր մի անբացատրելի երկյուղ: Ե՛վ սարսուռն էի, և՛ հավատում, որ Աստված անպայման օգնելու է քրոջս:

Հաջերդ օրը խոստացածիս նման մեկնեցի Գյումրի, վերադարձրի մասնատուփը և ամեն ինչ պատմեցի քահանային:

-Ամեն ինչ լավ կլինի,- ժպտաց քահանան: Ես չհարցրի, բայց ենթադրեցի, որ նա աղոթել է քրոջս համար:

Տուն վերադարձա: Առաջին շաբաթվա ընթացքում ոչ մի փոփոխություն չէր նկատվում: Հիվանդը պառկած էր՝ ասես անկենդան, բայց հետագայում սկսեց կենդանության նշաններ ցույց տալ. սկսեց ուտել, զրուցել, իսկ գիշերները քնում էր հանգիստ: Բոլորը կարծում էին, թե դա մահվանից առաջ տեղի ունեցող երևույթական առողջացում է: Մի բան, որ տեղի է ունենում հիվանդներից շատերի հետ: Իսկ ես հավատում ու չէի հավատում, որ մասնատուփն օգնել է նրան, բայց իմ արարքի մասին ոչ ոքի չէի պատմում: Իսկ քույրս օրեցօր լավանում էր:

- Գուցե մի անգամ է՞լ ստուգման տանենք,- դիմեցի ամուսնուն:

Համոզվեց: Ստուգելուց հետո բժիշկը ցնցվեց.

-Ձեր հիվանդն ապաքինվում է,- ասաց,- հրաշք է կատարվել:

Անցել է երկու տարի, քույրս լիովին առողջացել է, և ես առաջին անգամ քեզ եմ պատմում այս մասին», - իր պատմությունն այսպես ավարտեց Ռուզաննան:

«ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ» ԵԿԵՂԵՑՈՒ ՅՐԱՇԵԸ

1988թ.: Լեփ-լեցուն էր Արմավիրի մարզի վերաբացված «Սուրբ Սահակ» եկեղեցին: Բայց ժողովրդի մեջ առանձնանում էր սփյուռքահայերի մի խումբ: Նրանք նաև նկարահանում էին Սուրբ Պատարագը: Քարոզի ժամանակ պատարագիչ քահանան՝ Տեր Մաշտոցը, դիմելով ժողովրդին՝ ասաց.

-Հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր այստեղ՝ այս փոքրիկ, բայց զորավոր եկեղեցում ներկա է նաև մեր բարերարը՝ ամերիկահայ Մարգար Սամանյանը, որի միջոցներով վերանորոգվել է այս եկեղեցին: Պարոն Մարգարն այստեղ է եկել, որպեսզի իր գոհուլթյունը հայտնի Տիրոջը՝ իր որդու բժշկության համար:

Իսկ ի՞նչ էր տեղի ունեցել: Մարգարը մեկ տարի առաջ իր երազում տեսել էր, որ մանկուց ի վեր անդամալույծ իր որդին կարող է բժշկվել Հայաստանում, Տանձուտ գյուղի եկեղեցում: Հույսով լցված նա զանգահարում է Այգեչատ գյուղում ապրող իր բարեկամներին և հարցուփորձ է անում Տանձուտ գյուղի ունրա եկեղեցու մասին: Իր սերնդակից մարդիկ հետաքրքրվում

են, բայց եկեղեցին չեն գտնում: Սակայն Մարգարը, իր տեսիլքին հավատալով, խնդրում է ավելի լավ հետաքրքրվել:

Ի վերջո, Այգեչատ գյուղի մի բնակչուհի՝ 85-ամյա Ծաղիկ մայրիկը վկայում է, որ գյուղը, իրոք, եկեղեցի է ունեցել, սակայն այն հետագայում վերածվել է թունաքիմիկատների պահեստի: Ինքը՝ տիկին Ծաղիկը, լավ գիտեր եկեղեցու տեղը և ցույց է տալիս հետաքրքրվողներին:

Անմիջապես հեռաձայնում են Մարգարին: Նա որդու հետ գալիս է Հայաստան: Առաջին հինգ օրերին նա որդու հետ գիշերում է եկեղեցում: Հետաքրքրասեր հայացքներից խուսափելու համար եկեղեցի էին գալիս ուշ երեկոյան, իսկ վաղ առավոտյան վերադառնում էին: Մարգարի վկայությամբ, արդեն հինգերորդ օրը որդին իր ոտքով է վերադառնում Այգեչատ:

Ի գոհություն Աստծո և ի վկայություն իր որդու բժշկության՝ նա որոշում է վերանորոգել ու վերաբացել եկեղեցին և ամեն տարի մատաղ բաժանել:

Անդամալույծ տղայի բժշկությունը հրաշք էր: Նրա հիվանդությունը բժշկել չէին կարողացել Ամերիկայի բազմահմուտ բժիշկները, իսկ Աստված նրան ոտքի կանգնեցրեց Իր ողորմածությամբ, Տանճուտ գյուղի Սուրբ Սահակ եկեղեցու միջոցով:

ՀԱՍՄԻԿ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

Արմավիրի մարզի Արտաշար
գյուղի միջնակարգ դպրոցի
Հայ եկեղեցու պատմության ուսուցչուհի

ԴԻՎԱՅԱՐ ԵՂԱԾ ՍԻՐԱՅԱՐԸ

Դեպքը տեղի է ունեցել 2002 թվականին: Արմավիրի մարզի Արտաշար գյուղի բնակիչ Ս.Մ.-ն տանը մենակ էր ծեր տատիկի հետ: Տղան նստել էր ննջասենյակում և տխուր մտածում էր իր արգելված սիրո մասին: Ինչ-ինչ հանգամանքներ դեմ էին նրա

սիրուն, և տղան շատ մտահոգ ու տխուր էր: Հանկարծ նրան թվաց, թե դրսից ինչ-որ մեկն իրեն ձայն է տալիս: Դուրս եկավ պատշգամբ: Մթի մեջ նշմարեց մուգ շորեր հագած ինչ-որ մեկի կերպարանքը, որ կանչում էր իրեն: Մարդը հայտնեց, թե փողոցում նրան է սպասում իր սիրած աղջիկը քրոջ հետ: Տղան նույնիսկ անծանոթին չհարցրեց, թե ինքն ով է ու հետևեց նրան:

Իսկ անծանոթը նրան հայտնում էր, թե իբր ընկերուհին իրեն կանչել է առերեսման, և զարմացած ու տարակուսած տղան փորձում էր բացատրություններ գտնել: Նա փորձում էր անծանոթին ապացուցել, որ ինքը վատ բան չի արել...

Այդ նույն փողոցով, քրոջ տանից գալիս էր հարևանը: Նա զարմանքով նկատեց, որ պատանին մթի մեջ կարծես զրուցում է ինքն իր հետ: Ինչ-որ մեկին բացատրում, ապացուցում է: Հարևանը մոտեցավ ու տեսավ, որ պատանին իրոք զրուցում է անտեսանելի ինչ-որ մեկի հետ:

-Ո՞ւմ հետ ես խոսում,- հետաքրքրվեց:

Տղայի աչքերը կարծես բացվեցին և զգաց, որ ինքը մենակ է, բայց երբ փորձեց հետ դառնալ տուն, անծանոթը փակեց ճանապարհը և պինդ բռնեց ձեռքից: Սարսափահար եղած տղան նրա ձեռքից մի կերպ պոկեց իր դաստակն ու վազեց տուն: Նրա սարսափն ավելի մեծացավ, երբ զգաց, որ անծանոթը հետապնդում է իրեն և իր հետ մտնում է տուն: Տղան նետվեց ննջասենյակ, փակեց դուռը, բայց անծանոթը նրան նետեց մահճակալի վրա և սկսեց խեղդել:

Թոռան անմարդկային գոռոցից սարսափահար եղած տատն սկսեց օգնություն կանչել: Հարևանի տանից վազելով եկան ծնողները, բայց տղան նրանց չէր ճանաչում: Իրեն կորցրած մայրը վազեց հորաքրոջ տուն: Հորաքույրներն աստվածավախ կանայք են, նաև՝ դպրոցի Հայ եկեղեցու պատմության ուսուցչուհիներ: Երբ նրանք մտան սենյակ, տղան բոլորի մեջ միայն

նրանց ճանաչեց և խնդրեց, որ նրանցից բացի մյուս բոլորը դուրս գան:

-Այս սև մարդուն պոկեք կրծքիս վրայից,- հորաքույրներին խնդրեց նա:

Հասկանալի է, որ տղային բանտել էր չար ուժը և ոչ մի կերպ չէր ցանկանում հանգիստ թողնել: Աղջիկները խնդրեցին բերել տղայի մկրտության խաչը և նրան պատվիրեցին, որ իրենց հետ ասի Տերունական աղոթքը: Սակայն պատանին բառերը մոռացել էր, ոչ մի կերպ հիշել չէր կարողանում: Բավական ժամանակ անցավ, մինչև որ նա կարողացավ հեգել աղոթքի բառերը: Ամեն ինչ նրան տրվում էր դժվարությամբ, և աղոթքն ստացվում էր կցկտուր, հեռասպառ, մի կերպ... Աղոթքի ավարտին տղան բացեց աչքերը և հայտնեց.

-Սև մարդն իջել է կրծքիս վրայից, բայց նստած է ոտքերիս վրա և սպառնում է:

Այդժամ հորաքույրն սկսեց կարգալ նարեկի ԽԱ գլուխը.

-Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնյալ Հորդ ահա՛վորի անքնին ծնունդ, որ տկարանա առ ի քեն եւ ոչ ինչ...

Տղան հանգիստ էր, բայց գունատ: Ավարտից հետո նստեց և հայտնեց, թե մարդը գնացել է, բայց սրառնացել է վերադառնալ 40 օրից:

Հորաքրոջ խորհրդով և ուղեկցությամբ հաջորդ օրը պատանին գնաց Սուրբ Սարգիս եկեղեցի, որտեղ Տեր Վարդանը համապատասխան աղոթք կարդաց, և նա վերջապես ազատվեց դևի ցանցերից:

ԱՂԱՆԴԱՎՈՐ ԴԻՎԱՅԱՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Դեպքը տեղի է ունեցել 2001 թվականին, Երևանի Հարավ-արևմտյան թաղամասի շենքերից մեկում, որտեղ ապրում էր մի աղանդավոր ընտանիք: Նրանց որդին Աստվածաշունչը թևի տակ փորձում էր բուժել գյուղից եկած ազգականուհիներին: Ճիշտ է, ազգականուհիները չէին դժգոհում իրենց առողջությունից, սակայն տղան չէր դադարեցնում իր «հրաշագործությունները»: Նա խոսում էր ինչ-որ խառնիճաղանջ լեզվով, ապա փորձում էր ապացուցել, թե ինքը Հիսուսն է:

Ազգականները նրան գյուղ տարան՝ մտածելով, թե այնտեղ փոքր-ինչ կհանդարտվի: Նրանք աղանդավորներ չէին և մտածում էին, թե խաղաղ միջավայրում տղան խելքի կգա: Բայց գյուղում նրա վիճակն ավելի վատացավ: Տղան սկսեց թավալվել գետնին, հայհոյել, ապա քարեր հավաքելով՝ սկսեց նետել տարբեր ուղղություններով՝ քշելով ինչ-որ անհայտ ուժերի:

Անհանգստացած ծնողները նրան Երևան բերեցին, հոգեբույժ հրավիրեցին: Բժիշկը ոչ մի կերպ չկարողացավ պարզել, թե հիվանդության պատճառն ինչն է:

Բժշկությունից հույսները կտրած՝ նրանք չգիտեին անելիքները: Վերջապես ազգականուհին խորհուրդ տվեց դիմել քահանային:

-Աղանդավոր երիտասարդների մեջ այդպիսի դեպքերը հազվադեպ չեն,- ասաց քահանան և խոստացավ այցելել հիվանդին: Երբ հաջորդ օրը քահանան եկավ, տեսավ, որ հիվանդի շուրջը հավաքված են աղանդավոր «եղբայրները» և իրենց խառնալեզվով աղոթում են: Սակայն դրանից տղայի վիճակն ավելի է վատանում: Նա նույնիսկ փորձեց իրեն ցած նետել պատշգամբից: Աղանդավորները փորձեցին խանգարել քահանային, նրան թույլ չտալ աղոթք կարդալ: Նրան դուրս հրավիր-

րեցին: Ի վերջո տղայի հորեղբոր միջամտությամբ քահանային հաջողվեց ազատվել աղանդավորներից: Նա օրհնեց տունը, ապա աղոթեց: Այդ ամբողջ ընթացքում տղան հանդարտված և ուշադիր հետևում էր քահանային: Ասես գիտակցություն էր գալիս վրան և սկսում էր հասկանալ աղոթքի բովանդակությունը:

Հետո քահանան տանեցիներին ու հիվանդին խորհուրդ տվեց հանապազ աղոթել՝ կարդալով «Նարեկ» և «Կիպրիանոս», քանզի մեկ աղոթքով հնարավոր չէ լիովին առողջացնել նման ծանր դիվահարությամբ տառապող մարդուն:

Քահանան մոտ մեկ շաբաթ ամեն օր այցելեց հիվանդին, աղոթեց նրա համար: Իսկ երկու ամիս անց, երբ տղան դարձյալ դիմեց հոգեբույժի, մեծ եղավ բժշկի գարմանքը, քանզի նախկին հիվանդությունից հետք անգամ չէր մնացել:

Այսօր այդ երիտասարդն ամուսնացած է, ունի շատ լավ ընտանիք և աղանդավորական ախտից հրաժարվելով՝ դարձել է Հայ Առաքելական սուրբ եկեղեցու հետևորդ:

ՀՐԱՅՐ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ
Արմավիրի մարզ, գյուղ Արտաշատ

ԻՄ ՈՂՋ ՄԱՍԸ ՀՐԱՇԲ Է

- Դեռևս մանուկ հասակից ես հավատում եմ Աստծուն, - այսպես սկսեց իր պատմությունը գոմաճորցի Տոլիկ Մայիլյանը, - պատանի հասակում հրապուրվել էի լուսանկարչությամբ և բազմաթիվ այլ նկարների շարքում սիրում էի Քրիստոսի նկարներ բազմացնել: Եվ Քրիստոսը երկու անգամ ինձ փրկել է ստույգ մահից:

Առաջինը 1994 թվականին էր, երիկամների հիվանդութիւնն ստացաւ: Սեւանում բավական ժամանակ բուժվեցի, հետո զնացի Երևան, պրոֆեսորը հետազոտեց, նայեց ինձ:

-Ո՞ւմ հետ ես եկել,- հարցրեց:

-Մենակ եմ,- ասացի.- եթէ ասելիք ունեք, ինձ ասացեք, քանի որ ես գիտեմ իմ հիվանդութիւնը:

-Դե որ այդպէս է,- ասաց,- ձեզ ապրելու համար երկու ամիս ժամանակ է մնացել:

Հասկանալի է, թէ այդ դեպքում մարդն ինձ զգացմունքներ կունենա: Եկա տուն, մերոնց ոչինչ չսացի, հետո գործով թաթարատան գնացի: Որոշեցի գոնե մի քիչ գումար կուտակել, որպէսզի երեխաներն անհայր մնալիս շատ չխեղճանան: Հենց թաթարատանում էլ, պրոֆեսորի ասած ժամանակ, աջ երիկամս դադարեց գործելուց: Վիճակս անտանելի էր. շտապ օգնութեան մեքենան եկավ: Հենց այդ ժամանակ էլ զարմանալի տեսիլք տեսա: Տեսա սեփական թաղումը: Տեսա, թէ ինչպէս ինձ լողացրին, դրեցին դազադի մեջ, հետո ինձ թաղում էին, և ես ուղեկցում էի սեփական դազադը: Չէ, կլինիկական մահ չեմ տարել, բայց չգիտեմ, թէ դա ինչ էր: Նույնիսկ նայում էի, թէ ովքեր են եկել իմ թաղմանը, առանձին մարդկանցից նեղանում էի: Ախր ես այսինչի կամ այնինչի համար այսքան բան եմ արել ու նա իմ թաղմանը չի եկել... Գիտակցութիւնս տեղն էր, կարծես հիվանդը ես չէի: Ինչու է: Հասցրին հիվանդանոց, երիկամիս վրայի ուռուցքները մաքրեցին և ես, որ մահամերձ էի, ապրում եմ՝ արդեն 11 տարի:

-Երկրորդ անգամ փրկվեցի այս տարի: Գրեթէ մահամերձ պառկած էի «Էրեբունի» բժշկական կենտրոնում: Երկու ինֆարկտ էի տարել, արյունս 85 տոկոսով մակարդվել էր: Եկան զանազան պրոֆեսորներ: Նրանցից մեկն առաջարկեց ինձ կենդանացնել, եթէ աճուկներից ներքև անդամահատեն զույգ ոտ-

քերս: Պատկերացնում եք, թե դա ինչ վիճակ կլիներ ինձ համար: Հրաժարվեցի, քանզի մահը գերադասելի էր:

Մահամերձ էի, երակներիս մեջ գրեթե արյուն էլ խաղում: Գիշեր էր: Պառկած էի «բռքսում»: Քնած չէի, ցավ չէի զգում, մահվան էի սպասում: Այդ գիշեր մոտս մի բժիշկ նստեց: Հերթապահում էր: Ամեն ինչից երևում էր, որ սպասում էր իմ վերջին, իսկ ես պառկել ու հիշում էի իմ բանակային տարիները: Ես Ադրբեյջանից բռնագաղթված եմ: Բանակային տարիներս անց եմ կացրել Հայաստանում, ծառայել եմ Էջմիածինում: Ամեն կիրակի գնում էի Մայր տաճար, Պատարագին մասնակցելու: Մի անգամ նույնիսկ հրամանատարներն ինձ խիստ նկատողություն տվեցին եկեղեցի գնալու համար, սակայն հո մարդու հոգուն չե՞ս հրամայի: Հիշում էի այդ օրերը...

Ապրեցի մինչև առավոտ: Առավոտյան հերթապահ բժիշկը գնալուց առաջ նայեց ինձ ու.

-Ո՞վ գիտե, գուցե թե բախտդ բերի,- ասաց,- աշխարհում բժշկությունն ամեն ինչ չի կարող բացատրել և ամեն ինչ չի կարող բուժել:

Գնաց, իսկ ես պառկած եմ: Մենակ չեմ, նաև ուրիշ հիվանդներ կան, որոնք նույնպես ծանր վիճակում են: Հանկարծ մի ձայն եմ լսում: Զայնը հաստատ այս երկրային չէր: Հանդարտ էր, հսկտակ: Ես խոսողին չէի տեսնում, բայց գիտեի, որ ասում են ինձ համար:

-Հինգ ըոպե հետո այս մահճակալին պառկած ծերունին պիտի մեռնի, դրանից հետո մյուս մահճակալին պառկած տղամարդը, հետո հերթը քո մահճակալինն է:

Զի ասում «Հերթը քոնն է», ասում է «Քո մահճակալինն է»:

Այդ ժամանակ ես ուշադրություն չդարձրեցի այդ նրբերանգի վրա, բայց չանցած հինգ ըոպե, պալատում պառկած ծե-

ըրունին մահացավ: Մի տաս ըոպե անց մահացավ նաև մյուս մահճակալին պառկած տղամարդը: Հերթը կարծես թե «իմ մահճակալին» էր: Այդ ժամանակ առանց տեղյակ լինելու իմ լսած ձայնի մասին, մերոնք մասնագետ բերեցին, որը համապատասխան գոնդով պիտի մաքրեր խցանված երակներս:

-Ախր արդեն երրորդ անգամն եք ինձ բերում այս հիվանդի մոտ,- դժգոհեց նա,- ես ոչ մի հնարավորություն չունեմ նրան օգնելու: Ցույց տվեք գոնե մի երակ, որ ես կարողանամ աշխատել:

Մի խոսքով, որոշեցին դարձյալ ինձ տանել տոմոգրաֆիայի: Տարան, ստուգեցին: Ի՞նչ պարզեցին, չգիտեմ, բայց ետ բերեցին «բոքս»: Տեսա՝ իմ մահճակալին ուրիշ հիվանդ է պառկած: Ինձնից ավելի ծանր վիճակում գտնվող մի կին էր: Եվ՝ մահացավ նա: Ախր ինձ ասել էին. «Հերթն այս մահճակալինն է»...

Տեսնելով, որ չեմ մեռնում, ինձ «բոքսից» պալատ տեղափոխեցին: Արյունս՝ քարացած կամ լերդացած, ինչպես կուզեք՝ ասեք, վիճակս՝ դարձյալ անհուսալի: Պառկած եմ մահճակալին և հանկարծ զգում եմ, որ թևս թացանում է: Չեմ հասկանում՝ ինչ է, հետո մի կերպ գլուխս թեքում եմ և տեսնում, որ թևիս մեջ դրած խողովակից (կադետր) արյունը կաթում է գետնին: Իմ լերդացած արյունը, որ ուր որ է սրտի կանգի պատճառ էր դառնալու, սկսել է ջրիկանալ: Աստծո հրաշք չէ՞, ի՞նչ է հապա: Տեսնելով այդ բժիշկներն իրար խառվեցին՝ նորից սկսեցին պայքարել կյանքիս համար, բայց այս անգամ արդեն հաստատ հույս ունենալով, որ փրկվելու եմ:

Ամեն մարդու չեմ պատմում այս: Շատերը չեն հավատում, ոմանք կասկածանքով են լսում իմ պատմությունը, սակայն ես հո գիտե՞մ, որ վերևում Աստված կա և նա է որոշում, թե ում տանի և երբ տանի:

ՍԵՎ ԽԱՉԵՐ՝

ՍՊԻՏԱԿ ՎԵՐՆԱՇԱՊԻԿԻ ՎՐԱ

2005 թվականի Խաչվերացին հաջորդող մեռելոցի օրն էր: Սովորականի նման զնացի դասի: Ինձ մոտեցավ հինգերորդ դասարանի աշակերտուհիներիցս մեկը՝ Ստելլա Հունանյանը և վերնաշապիկը ցույց տալով՝ ասաց.

- Գիտե՞ք ինչ է եղել:

- Ի՞նչ, - հետաքրքրվեցի ես:

- Երեկ մայրս լվաց վերնաշապիկս և վրան սև խաչեր հայտնվեցին: Մտածեցինք՝ երևի ինչ-որ մեկը չարածճիռված է արել, կամ գուցե թե փռած տեղը ծիտիկներն են կանգնել վրան: Մայրս նորից լվաց վերնաշապիկը և... այ քեզ հրաշք, խաչերը ոչ թե վերացան, այլ ավելացան: Հիմա արդեն սպիտակ կտորը զարդարող սև խաչեր կային վերնաշապիկի ոչ միայն կրծքի ու թիկունքի, այլ նաև թևերի վրա:

Դա քիմիական կամ որևէ բնական նյութ չէր, այլ անհայտ մի բան: Ասես նույն ձեռագիրն էր գրել դրանք: Թե՛ աղջիկը, թե՛ շրջապատի մարդիկ և թե՛ ես հավատում ենք, որ այդ խաչերն անձեռակերտ են և մեզ հիշեցնում են խաչի սուրբ խորհուրդը և Խաչյալի մշտական կենդանի ներկայությունը Նրան հավատացողների կյանքում:

ԸՆԱՐԻԿ ԸՈՉԱՐՅԱՆ

Գեղարքունիքի մարզի Լճաշենի միջնակարգ դպրոցի
Հայ եկեղեցու պատմության ուսուցչուհի

ԻՆՉՈՒ ԷՐ ԾԵՐՈՒՆԻՆ ՊԱՏՎԻՐՈՒՄ ՄԱՏԱՂ ԱՆԵԼ

Երբ ավարտեցի իՄ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, ինձ նշանակեցին Ապարանի շրջանի խուլ գյուղերից մեկում աշխատելու: Չէի ցանկանում գնալ այդ քրդաբնակ գյուղը, շատ էի մտածում այդ մասին: Գիշերվա մի ժամի աչքերս բացեցի և տեսա մի սևամորթ մարդու: Կանգնել էր ու ձեռքին բռնած տեր ողորմյան էր քաշում: Ճիշտն ասած մտքովս անցավ, թե մոռացել, դուռը բաց եմ թողել և օտար մարդ է մտել տունը: Վախեցա: Սակայն դրսից մի ձայն լսվեց, ինչ-որ մեկը, որ սպիտակ շորեր էր հագել և երկար, սպիտակ մորուք ուներ, դիմեց սև մարդուն.

-Հապա դուրս արի այդտեղից:

Իմ զարմացած հայացքի տակ սև մարդը դուրս եկավ սենյակից ու նրա փոխարեն ներս մտավ սպիտակ ծերունին: Նա եկավ, կռացավ մահճակալիս վրա և ժպտալով ասաց.

-Աղջիկ ջան, եթե ուզում ես, որ քո գործերին հաջողութուն լինի և եղբայրդ անփորձանք մնա, պիտի գնաս Դարալագյազ և մատաղ անես այնտեղ:

Այլևս քնել չկարողացա մինչև առավոտ: Առավոտյան տեսիլքի մասին պատմեցի եղբորս կնոջը և մեքենա վարձելով՝ գնացինք Եղեգնաձոր: «Սուրբ Խաչ» եկեղեցում մատաղ արեցինք, վերադարձանք տուն: Երկու օր հետո նախարարութունից նամակ ստացա, որի մեջ հայտնում էին, որ ինձ գործուղել են Մասիսի շրջանում աշխատելու: Բացի այդ, եղբայրս մատաղ անելու օրը Երևանում չլինելու պատճառով ազատվել էր շատ մեծ փորձանքից:

Ավելացնեմ, որ այդ հրաշք տեսիլքը տեսել եմ 1979 թվականի հոկտեմբերի 11-ին:

ԻՆՉՊԵՍ ՅՐԱԺԱՐԿԵՑԻ ՍԵՎ ՄՈԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳՐԵՐԻՑ

1998 թվականի սեպտեմբերի 13-ին էր: Երևանի մետրոյի Երիտասարդական կայարանի գրավաճառի մոտ մի գիրք տեսա՝ «Սև մոգուլթյուն» վերտառուլթյամբ: Շատ հետաքրքրեց և առանց հետևանքներին հասու լինելու գնեցի: Հետաքրքիր էր: Ինչքան չլինի՝ գաղտնի գիտելիքներ է պարունակում: Սակայն գրքի ընթերցանության ժամանակ վախի մի ահավոր հարված ստացա: Գիրքը կարդալիս մի ահավոր հոգեկան վիճակի մեջ ընկա: Թվում էր, այլևս ինքս ինձ գտնել չեմ կարողանալու, սակայն մի ձայն, որ գալիս էր իմ ներսից, ասես ուղղություն էր ցույց տալիս ինձ:

«Քեզ մի՛ կորցրու», - ասես մեկը շշնջում էր իմ ականջին:

Այդ ձայնի թերազդանքով ես ցանկացա ձեռքս առնել Աստվածաշունչը: Ես տանը Նոր կտակարան ունեի, սակայն որքան էլ զարմանալի էր, փնտրեցի ու չգտա այն: Ձեռքս առա Մանկական Աստվածաշունչն ու սկսեցի ազահորեն կարդալ այն:

Առավոտյան վիճակս նորից վատացավ: Կարծեցի՝ աշխարհի վերջն է: Այդ ժամանակ նորից նույն ձայնն ինձ հրամայեց, որ տանը որքան մոգական գրականություն կա, այրեմ:

«Դրանք հանիր տանից և թող ամուսինդ ու տղադ այրեն», - ասում էր այդ ձայնն ինձ: Գրքերը դանդաղորեն էին այրվում: Գրեթե մեկ ժամ տևեց, մինչև դրանք կրակի բաժին դարձան: Այդ օրը տեսիլքի մեջ տեսա Աստվածամորը՝ որ երևաց կիսադեմով, արծաթափայլ կամարների մեջ և լսեցի, թե ինչպես նույն ձայնն ասում է. «Քո հովանավորն Աստվածամայրն է: Մի վախենա, քեզ ոչինչ չի պատահի»:

Եվ իրոք, որոշ ժամանակ անց ինձ մոտ ամեն ինչ կարգավորվեց, սակայն այդ ամենի բացատրության կարիք էի զգում: Զգում էի, որ հոգևոր իմաստով անգրագետ եմ: Սկսեցի եկեղեցի

Հաճախել, մասնակցել Սուրբ Պատարագներին, երգել եկեղեցու երգչախմբում... Փառք Տիրոջը, որ ինձ խղճաց և բացեց իմ հոգևոր աչքերը:

ԻՆՉՊԵՍ ՏԵՍԱ ՔՐԻՍՏՈՍԻՆ

2005 թվականի հունվարի 30-ի առավոտյան էր: Իմ ննջաբանի պատուհանի մոտ մի հրե գունդ տեսա: Կարծես արեգակն իջած լիներ այդտեղ: Հետո աչքերիս առաջ յոթ գույներ բացվեցին աննկարագրելի պայծառությամբ և այդ լուսերի մեջ հայտնվեց Տեր Հիսուս Քրիստոսը, որը վարդագույն թիկնոց ուներ և աղոթում էր:

Ո՞Ր ԿՈՐԱՆ ՈՒՌՈՒՑՔՆԵՐԸ

2000 թվականի մայիսի 30-ին Մամոզրաֆիայի կենտրոնում ստուգման ենթարկվեցի: Բժիշկները տարբեր մեծության մի քանի ուռուցքներ հայտնաբերեցին և առաջարկեցին անհապաղ վիրահատել: Իհարկե, հրաժարվեցի և ապավինեցի Աստծուն: Այսօր այդ ուռուցքների հետքն անգամ չկա: Ինչո՞ւ հրաժարվեցի: Շատ պարզ պատճառով: Մի՞թե մեռած Ղազարոսին հարություն տվող Աստված չէր բուժի իմ ցավերը:

* * *

Իմ կյանքում մանր ու մեծ այլ հրաշքներ նույնպես եղել են: Ես հիմա գիտեմ, որ նախքան Տիրոջը ճանաչելը ես ինձ էլ չեմ ճանաչել: Եվ եթե տարիներ առաջ մեկն ինձ ասեր, թե իմ կյանքը այսպես կփոխվի, չէի հավատա:

ՎԵՆԵՐԱ ՉԱԶԱՐՅԱՆ

Մասիսի քաղաքապետարանի մշակույթի
և սոցիալական բաժնի աշխատակցուհի

Ո՞Վ ԷՐ ԻՆՁ ՏԱՆՈՂԸ

1999 կամ 2000 թվականի օգոստոսն էր: Աշխատում էինք Ռուսաստանի Կրասնոյարսկի երկրամասի Ատամանովկա գյուղում: Ամեն տարի օգոստոսի երկրորդ կիրակի օրը նշվում է Շինարարների օրը: Այդ անգամ էլ նշեցինք: Ճիշտն ասած ես խմել չեմ սիրում և մշտապես բավարարվում եմ մեկ-երկու բաժակով: Այդ անգամ նույնպես մե՞կ, թե՞ երկու բաժակ շամպայն խմեցի: Ավարտվեց զբոսախնջույքը, եկա հանրակացարան: Փորձեցի պառկել, մի քիչ հանգստանալ, սակայն զգացի, որ վատ եմ զգում: Աչքիս սկսեցին երևալ տարբեր էակներ: Նրանք սև էին հագել, մի տեսակ վախենալու էին և քաշում էին թևիցս, թե՛ արի:

Եթե չար ուժեր են հարձակվում վրադ, անմիջապես զգում ես այդ ու հասկանում, որ նրանք այս աշխարհից չեն և քեզ լավ տեղ չեն տանում: Դրանց մեջ հատկապես աչքի էր ընկնում մեկը, որ մեռած պապիս կերպարանքն ուներ.

-Արի,-քաշում էր թևիցս,- արի տանեմ:

-Ո՞ւր գամ,- լալիս էի,- ես ախր շատ երիտասարդ եմ:

Շրջապատի մարդիկ գիտեին, որ ես խմող չեմ և իմ վատ զգալը ալկոհոլի արդյունք չէ: Տեսնում են, որ շատ վատ եմ ու լուրը հասցնում են եղբորս, որը նույն գյուղում էր: Լսելով այդ մասին նա վազելով հասնում է: Այն եմ հիշում, որ նա ինձ համոզում էր, ամեն կերպ ցանկանում դուրս բերել այդ վիճակից: Չնայած պետք է խոստովանեմ, որ թե՛ նա, թե՛ ես հոգևոր գիտությունից հեռու էինք և նույնիսկ մկրտված չէինք: Բժիշկ են բերում, սրսկում ու ինձ հազիվ հանում են այդ վիճակից:

Բժշկական ինչ տերմին ուզում ես, օգտագործիր, միևնույնն է, ես հասկացա, որ ինձ հետ պատահածը հիվանդություն չէր, իսկ եթե հիվանդություն էլ էր, ապա՝ հոգևոր: Այդ վիճակից ել-

նելուց հետո ես ուխտ արեցի Հայաստան գալուս պես մկրտվել:
Եվ կատարեցի ուխտս:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԵԳԱՎՐՅԱՆ
Լոովա մարզ, գ. Լեոնավան

ՄԱՅՍԵՂԱԿԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Սիրիայի Զուք գյուղում ապրող ալաուի ուղղության պատկանող մի մարդ, որի անունը Հասան էր, յոթ տարի զավակ չէր ունենում: Երկար մտածելուց հետո նա որոշում է, որ իրեն զավակ կարող է պարգևել միայն Քրիստոսը և երգվում է զավակ ունենալու դեպքում նրան մկրտել քրիստոնեական կարգով:

Աստված լսում է նրա աղերսանքն ու ուխտը, և Հասանը երկու տարի անց զավակ է ունենում: Սակայն մահմեդական գյուղում որտեղի՞ց հայ քահանա, որ Հասանը մկրտել տա իր զավակին: Տեսնելով այս՝ նա վերցնում է երեխային, գնում գետ և նրան երեք անգամ ջրի մեջ թաթախելով՝ ասում.

-Ինչպես որ հայ քահանան է ասում մկրտության ժամանակ և ավելի:

Մեկ տարի անց քրիստոնյա ուխտավորների մի խումբ էր անցնում իրենց գյուղից և գնում դեպի Մարմադիա, ուր գտնվում էր Սուրբ Աստվածածին եկեղեցին: Հասանը տեսնելով, որ նրանց հետ քահանա կա, մոտեցավ նրան և խնդրեց, որ նա իր որդուն մկրտի՝ ինչպես պահանջում է քրիստոնեության օրենքը: Ուխտավորները և քահանան նրան առաջարկեցին միանալ իրենց և գնալ Սուրբ Աստվածածին, որտեղ էլ կմկրտեն երեխային:

Երբ հասան եկեղեցի, քահանան պատրաստվեց մկրտության, բայց հազիվ էր սկսել մկրտության շարականը, երբ ավա-

զանի ջուրն սկսեց եռալ, և ապշահար քահանան մի ձայն լսեց, որն ասում էր, թե երեխան իր հոր հավատով արդեն մկրտված է:

Ձարմացած ներկաներին Հասանը պատմեց ողջ եղելու թյուրունը: Բոլորը փառք տվեցին Աստծուն նրա կատարած հրաշքի համար:

ՄԱՐԴՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս դեպքը տեղի է ունեցել 1994 թվականին Սիրիայում՝ Դամասկոս քաղաքի Տուելա փողոցում: Այդ փողոցում ապրող 48 տարեկան բարեպաշտ մի մարդ մահացավ: Եվ քանի որ հավատացյալ քրիստոնյա էր, տարան եկեղեցի և դրեցին խորանի առաջ, բայց երբ քահանան սկսեց թաղման կարգ կատարել, նա վեր կացավ ու նստեց դագաղում:

- Տեսա Քրիստոսին նստած իշխանության Աթոռի վրա, - ասաց նա, - Նա ինձ պատվիրեց գնալ Հորան նահանգի գյուղերից մեկը, որտեղ մի մարդ կա և անընդհատ հալածում է Քրիստոսին: Նա ինձ պատվիրեց, որ գնամ և նրան ետ կանգնեցնեմ իր չար գործերից, իսկ երեք օրից հետո պիտի մեռնեմ նորից:

Մարդիկ մի պահ չհավատացին նրա ասածին, բայց նա վեր կացավ, գնաց Տիրոջ պատվի համար տեղը, հետո վերադարձավ: Երբ որդի օրվա երեկոյան իր բարեկամների և ընտանիքի անդամների հետ ճաշեց, ապա ննջեց ի Քրիստոս:

ՏԻՐԱՄՈՐ ՆԿԱՐԸ

Մի պառավ կին ցանկացավ Սուրբ Աստվածամոր վանքին մի թիթեղ ձեթ նվիրել: Նա ուխտ էր արել իր ոտքով բարձրանալ մինչև վերև՝ մոտ 150 աստիճան, դրա համար էլ թիթեղը շալակեց և սկսեց բարձրանալ, սակայն մինչև կեսին հասավ, հոգնեց: Թիթեղը դրեց աստիճանների վրա, բայց ամանից մի քիչ ձեթ ծո-

րաց: Շուտով ձեթը ներծծվեց և երևաց Սուրբ Աստվածածնի նկարը: Զարմացած կինը շարունակեց ճանապարհը, հասավ վանք և վանահորը պատմեց եղելությունը: Հոգևորականներն իջան, տեսան նկարը և որոշեցին այն շրջապատել փոքրիկ պատով: Մինչև այժմ էլ կա նկարը: Եթե փորձես մատով կպչել այդ տեղին, կթվա, թե ձեթ է բխում:

ԱՂՋԿԱ ԲՈՒԺՈՒՄԸ

Սիրիայի Սերմայա վանք եկավ անդամալույծ մի աղջիկ: Նա Հորդանանից էր և եկել էր բուժվելու հավատով: Նա քահանայի առաջ կարդաց «Հավատամքը», ստացավ նրա օրհնությունը, հետո, ի գարմանս ներկաների և հատկապես իրեն ճանաչողների, կանգնեց սեփական ոտքերի վրա և սկսեց քայլել: Նա իր անդամալույծի սայլակն ու հենակները թողեց վանքում: Դրանք մինչև օրս էլ պահվում են այնտեղ: Պահպանվում է նաև աղջկա ձեռքով գրված վկայությունը իր հրաշալի բուժման մասին:

ԹՈՎԱՄԱՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Սիրիա, Դամասկոս

ՀԱՎԱՏԱ ԵՎ ԿՓՐԿՎԵՍ

2004 թվականի աշնանն էր: Քրոջս տղան Մոսկվա պիտի գնար: Շատ վաղ պիտի դուրս գար Սևանից՝ ժամանակին օդանավակայան հասնելու համար: Այդ էր պատճառը, որ ցայգալույսին դուրս եկա մեր տանից, որպեսզի գնամ նրան ճանապարհհեղու: Իսկ նրանց տունը մեր տանից մի թաղամաս այն կողմ է և ուղեկցողի կարիք չկար: Դուրս եկա տանից, մեր շենքից մի քիչ հեռացա և թափառող շներին ոհմակը շրջապատեց ինձ: Հաչում են կատաղած, կարմրած աչքերով նայում են ինձ: Թվում է՝ ուր որ է պատառ-պատառ են անելու:

Դա այն ժամանակն էր, երբ դեռ նոր-նոր էի եկեղեցի գնում: Շատ էի աղոթում, քանզի վերջապես հասկացել էի, որ մարդու հույս-ապավենն Աստված է:

Շների հարձակումը տեսնելով՝ ես մեխվեցի տեղումս: Նրանք շրջապատեցին ինձ ու սկսեցին հաչել: Ես համրացած նայեցի շուրջս, բայց փողոցում ոչ ոք չկար:

-Տեր Աստված,- մրմնջացի ես,- մի մարդ չկա՞, որ օգնի ...

Շուրթերիս շարժումը տեսնելով շներն ավելի գազազեցին և հատկապես՝ նրանց առաջնորդ գամփուր: Տեսնելով դա՝ ես սարսափած շնջացի:

-Տեր Աստված, Դո՛ւ փրկիր ինձ:

Եվ, այ քեզ հրաշք, ասես մի անտես հրամանի ենթարկվելով՝ շները հեռացան: Կանոնավոր շարք կազմած գնացին նախ մյուսները, իսկ ամենավերջում՝ գամփուր:

Հիմա, տարիներ անց մտածում եմ. իզուր էէ, որ ասել են. «Հավատա և կփրկվես»:

ԱՐԱՔՍՅԱ ՄՈՒՆԱԴՅԱՆ

Ք. Սևան

ԻՍ ՀՐԱՇՔԸ

Երեկոյան քնելուց առաջ սիրում եմ առանձնանալ, որպեսզի տեղի ունենա իմ հոգու հանդիպումն Աստծո հետ, որը կայանում է միայն առանձնական աղոթքի միջոցով: Աստծո Արքայ-յուկոթյունը խնդրելուց, ինչպես նաև իմ կյանքում նորանոր հաջողություններ ունենալու համար հոգուս խորքում կուտակված մի շարք ցանկություններ կատարելու աղերսանքով Բարձրյալ Աստծուն դիմելուց հետո ցանկանում եմ, որպեսզի աստվածային առաջնորդությամբ բոլորը հասնեն իրենց բարի նպատակների իրականացմանը: Հավատում եմ, որ մեր խնդրանքն Աստված ի-

բականացնում է համաձայն իր խոսքի. «Եթե ձեզանից երկուսը միաբանվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկատարվի նրանց համար իմ Հոր կողմից, որ երկնքում է, որովհետև ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ» (Մատթ., 18:19):

Աղոթքս ուղեկցվում է նաև Ավետարանական ընթերցումներով, որը նպաստում է աղոթական բարձրագույն վիճակին հասնելուն: Դրա արդյունքը կարող է լինել նաև երազը կամ տեսիլքը: Իմ կյանքում դա կարելի է որակել որպես Աստվածատեսույթյուն:

Այդ օրը նույնպես աղոթքս ավարտելուց հետո գնացի քնելու: Բավական խոր քնի մեջ երազ կամ տեսիլք տեսա: Տեսա մի կամուրջ, որի հակառակ կողմից Աստված ինձ ձայն էր տալիս. «Արթու՛ր, արի ինձ մոտ»: Հետևելով ձայնի ուղղությանը՝ առաջ գնացի կամուրջի վրայով, սակայն դեռ վերջին չհասած՝ բազալտե սալիկներով երեսպատված մի եկեղեցի նշմարվեց: Այն ամբողջությամբ պատված էր ամպերով՝ կարծես խորհրդաշնչելով Աստծո փառքը:

Եկեղեցու առաջ երկար, սպիտակ շապիկով կամգնած էր Հայր Աստված: Նա, ինձ մոտ կանչելով, ասաց. «Ինչ որ կյանքում ցանկանաս, ես կտամ քեզ»: Նախ զարմացա այս խոսքերից, ապա՝ շփոթվեցի, փորձեցի հասկանալ Նրա այդ ասածի իմաստը: Սակայն այդ պահին ոչինչ հասկանալ չկարողացա և քնից արթնացա:

Ինձ համար դա հրաշք էր, քանզի հրաշալի զգացողությունն էր. ինչ-որ շատ մեծ ու շատ լավ մի բանի հաղորդակից լինելու զգացողություն, որը ոչ մի բանի հետ համեմատելի չէ և նկարագրել չի լինի մարդկային բառերով:

Այդ երազ-տեսիլքից անցել է մի քանի տարի, և կատարվել են իմ մի քանի ցանկությունները՝ կապված իմ հոգևոր կյանքի, աստվածաբանությունից ասպարեզում իմ կողմից կատարվող ու-

սումնասիրութիւնների, ինչպէս նաև իմ անձնական հավատքի դաշտում ձեռք բերած հաջողութիւնների հետ: Դրանք յուրատեսակ խթան են հանդիսանում առավելագույնս ընկղմվելու աստվածաճանաչողութիւն մեջ: Դա հնարավորութիւն է տալիս ավելի մերձենալ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, ապա՝ փառավորել և խոստովանել Սուրբ Երրորդութեանը, Գրիգոր Լուսավորչի խոստովանանքի համաձայն, թե. «Իսկ մեք փառաւորեցուք, որ յառաջ քան գյավիտեանս, երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յավիտեանս յավիտենից. ամեն»:

ԱՐԹՈՒՐ ՅԱՎՈՒՅԱՆ

Աստվածաբանութեան մագիստրոս

ՏԻՐԱՄՈՐ ՅՐԱՇԱԼԻ ԵՐԵՎՈՒՄՆԵՐԸ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ

1990թ. մայիսի 21-ին ես տեսա Տիրամորը: Բայց նախքան բուն պատմութեանն անցնելը փորձեմ նախապատմութիւնը տալ: Երբ 1988թ. երկրաշարժից հետո Տիրամայրը երևաց Մասիսի շրջանի Սայաթ նովա գյուղում, և մարդիկ ուղղակի հերթ էին կանգնում, որ մտնեն ու տեսնեն, ես ինքս շատ վրդովված էի և ասում էի, թե մի՞թե հավատը նշաններով է: Բայց ես չէի հասկանում, որ այդ երևումները ոչ թե տեսնել-հավատալու համար են, այլ ինչպէս աղոթքով են հաղորդ լինում Տիրոջը, այնպէս էլ այս ձևով: Սա էլ Աստծո հետ հաղորդակցվելու մի ձև է: Այո, արտակարգ իրավիճակներում, երբ իր զավակներին մեծ վտանգ է սպառնում, Աստված իր առավել մեծ հայտնութեամբ է ներկայանում, և Երկնային դռները բացվում են: Դռներ, որոնք սովորական ժամանակ չեն բացվում:

1990 թվականին Հայաստանը շատ ծանր վիճակում էր: Շրջափակում, էլեկտրաէներգիայի հովհարային անջատումներ,

ցուրտ, հացի պակաս... Ահա այս ժամանակ ես Տիրամորը խնդրեցի, որ երևա ինձ ու գորավիզ լինի: Եթե 1988 թ. չէի հավատում երևումին ու մերժում էի, հիմա ինքս էի խնդրում: Ես շատ եմ սիրում Նրան, որպես մաքրության, համեստության և սրբության տիպար, և Նա շատ անգամ է օգնել ինձ:

Խնդրեցի. «Տիրամայր, ես կարոտեմ եմ քեզ: Մարդկային այս տառապանքների մեջ իրապես ես Քո մայրական գուրգուրանքի կարիքն ունեմ: Շատ եմ ամոսոսում, որ չեմ եկել Սայաթ Նովա ու չեմ հանդիպել Քեզ»: Եվ, զարմանալի բան: Մի քանի օր անց իմ աշխատակցուհիներից մեկը, որ ապրում է Խոր Վիրապի գյուղերից մեկում, հայտնեց, թե մի քանի օր առաջ (մարտի 15-ից հետո) ժամը 13 անց կեսից մինչև ժամը 16-ը ամբողջ ճաճանչով նախ Մասիսն է ողողվել և ապա չրջակա գյուղերից բոլորը տեսել են Տիրամոր պատկերը երկնքում: Այնքան հզոր է եղել լույսը, որ ոմանք կարծել են, թե Թուրքիայի սահմանից են ինչ-որ բան թողել Հայաստանի վրա:

Ես աշխատակցուհուս բան չասացի, բայց մտածեցի, թե Աստված նրա միջոցով հայտնեց ինձ: Սակայն մտածում էի. «Լավ, ես իմացա, բայց ինչպե՞ս հասնեմ Խոր վիրապ»: Դա այն ժամանակն էր, որ բենզին չկար, ավտոմեքենաները կանգնած էին: Ես սրտագին խնդրեցի Տիրամորը, որ օգնի: Եվ, զարմանալի բան՝ ուղիղ 5 անգամ, առանց գումար ծախսելու ես գնացի և եկա:

Առաջին հանդիպումը շատ զարմանալի էր: Քանի որ շատ հեռուն չեմ տեսնում, մտածում էի, թե ինչպե՞ս պիտի նշմարեմ: Անմիտ էի, չգիտեի, որ երբ հոգու աչքերով ես տեսնում, մարմնի աչքերը ոչինչ են: Հասանք տեղ և հայացքս Մասիսին հառեցի: Ոչ մի բան չկար: Մտանք եկեղեցի, աղոթեցինք, մոմ վառեցինք: Ժամը մոտ 16-ն անց կես էր, երբ հասանք: Ուղեկիցներս գուրս եկան, և ես նեղվեցի՝ մտածելով. «Երևի ես արժանի չեմ, որ Դու ինձ երևաս, Տիրամայր»: Ուղեկիցներս ակնապիշ նայում էին

Մասիսին: Ես դարձյալ մտա եկեղեցի և մոմովաճառից երգելու թուլլտովություն խնդրեցի: Սկսեցի փառաբանության երգեր երգել: Արդեն պիտի վերջացնեի, երբ նկատեցի, որ ուղեկիցներս ներս մտան և մի տեսակ այլայլված են:

Երգս ավարտեցի, դուրս եկա և ապշեցի: Ամբողջ Մասիսը պատվել էր աներկրային լույսով, ամպերը մի կողմ էին գնացել և այդ լույսից աչքերդ չէին կկոցվում: Լույսն այդ մաքրամաքուր ու ոչ սովորական էր:

-Շնորհակալ եմ,- շնջացի,- այս լույսի համար էլ եմ շնորհակալ:

Արդեն ժամանակն էր դուրս գալու, որովհետև պետք է վանքի դարպասը փակեին: Բայց ես և ուղեկիցներիցս մեկը ոտքներս կախ էինք գցել: Եվ հանկարծ երևաց, խոշորացավ նախ ուրվագծով, ապա՝ ավելի ու ավելի հստակ: Այստեղ հասկացա այն, որ ասում են՝ մտքովդ անց կացրի՛ր՝ արդեն գործեցիր: Տիրամոր ոտքերի մոտ կիսալուսին էր ուրվագծվում: «Սա երևի այն կիսալուսինն է, որի մասին ասվում է Հայտնության գրքում. «Եվ երկնքում մեծ նշան երևաց. մի կին արեգակն իր վրա առած, լուսինն՝ իր ոտքերի տակ և իր գլխի վրա մի պսակ՝ տասներկու աստղերից» (Հայտնություն 12.1):

Սակայն դեռևս չէի արտաբերել, հագիվ անցել էր մտքովս, երբ Տիրամոր պատկերը մի քանի անգամ խոշորացավ և հստակ երևաց կիսալուսինը: Կարծես նա հաստատում էր, որ ճիշտ եմ մտածում: Եվ ապա երևաց Հայր Աստծո գահը ճերմակաթուր լույսերի մեջ, որը բառերով նկարագրել անկարող եմ: Նա նստած էր կիսադեմով: Տիրամայրը գնում ու գալիս էր: «Երևի նա նկատի ունի, որ ինքը բարեխոս է մարդկանց և Աստծո միջև», - մտածեցի ես, և Տիրամայրն իր ընթացքն ավելի արագացրեց, ասես հաստատելով իմ միտքը:

Ապա Մասսյաց գագաթին երևաց մի մեծ խաչ: Մեծ, սև խաչ, որ կարծես ասում էր, որ ծանր նեղությունների միջով պի-

տի անցնենք, բայց Աստված պահպան է մեզ: Խաչի զորության քաջալերանքն զգուժ էինք առարկայորեն:

Արդեն ուշ էր: Սահմանապահները նկատել էին, որ մենք ակնապիչ նայում ենք Մասիսին և մեզ վրա լույսեր էին գցում, նաև վերը նշված դարպասի փակվելու ժամանակը վաղուց էր անցել: Մենք ստիպված էինք հեռանալ:

Ամբողջ սիրտդ ու հոգիդ կապված է Մասիսին և նրա վրա երևացող Սուրբ Պատկերին: Դու կարծես հասկանում ես, թե Պայծառակերպության ժամանակ Պետրոսն ինչն^ո էր ասում. «Տեր, լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք...» (Մատթ., 17.4):

Ձէի ցանկանում վերադառնալ քաղաք, քանի որ այնտեղ՝ Խոր Վիրապում Աստվածածնի ներկայությունն էր: Հետո երբ գնում էինք, նորից ողջ հասակով երևաց Տիրամայրը, որ կարծես ուղեկցում էր մեզ: Եվ նրանից սեր էր ճառագում: Մեծ, մաքուր, գեղեցիկ մայրական սեր:

Եվ ես հասկացա, որ անսպասելիությունից ես նույնիսկ չեմ խոնարհվել Նրան: Փնտրեցի և գտա Նարեկացու՝ Տիրամորը նվիրված աղոթքը: Եվ երբ հաջորդ անգամ գնացինք, ես Խոր Վիրապի պարսպի տակ ծունկի եկա ու կարդացի այն:

Այս անգամ նորից տեսնք Նրան՝ մանկան հետ, կիսալուսնի ուղեկցությամբ: Հետո սև ձիավոր անցավ: Ավելի ուշ իմացանք, որ դա սուրբ Գևորգն էր:

Դրանից հետո մղում առաջացավ Նորագավթի «Սուրբ Գևորգ» եկեղեցի գնալու: Սուրբ Գևորգի տոնին Նորագավթի «Սուրբ Գևորգ» եկեղեցի գնացինք նույն խմբով և բոլորս մեկ մարդու նման կանգնեցինք այն նկարի առջև, ուր պատկերված է Տիրամայրը: Դա ասես նույն պատկերն էր, ինչ մենք տեսել էինք Մասսյաց գագավթին:

Այս ամենից հետո ես կարծես թե հասկացա, որ Տիրամայրն ուղղում է պատվեր տալ ինձ: Հաջորդ երեւման ժամանակ նա օվալաձև ամպի սյունով պոկվեց, կտրեց, անցավ Մասիսի ստորոտի հովիտը և մոտենում էր ինձ: Ես շնչահեղձ եղա: Երևի թե պատրաստ չէի: Նա զգաց այդ և հուշիկ հեռացավ մյուս ուղղությամբ:

Ես վշտացա, քանզի ի զորու չեղա Նրա պատգամն ընդունելու: Բայց Նա այն ինձ հաղորդելու այլ ձևեր գտավ: Մի քանի տարի անց իմ ձեռքն ընկավ «Տիրամոր երևումները 20-րդ դարում» տեսաերիզը: Եվ ցանկացա թարգմանել այն: Եվ այնպես ստացվեց, որ մեր ընտանիքը ցանկացավ տեսամագնիտոֆոն գնել: Ես նախ նեղվեցի. չէ՞ որ շատ պակասութուն կար և կարծես թե դրա ժամանակը չէր: Բայց հանկարծ միտքս եկավ, որ ես ցանկանում էի թարգմանել տեսաերիզը: Հետո փոքրիկ տեսաստուգիա ստեղծվեց, և ես թարգմանեցի: Այն, ինչ չկարողացա ընդունել 1990 թվականին, ստացա հետագայում այդ տեսաերիզի միջոցով:

Շնորհակալ եմ Տիրամորիցս իր բարեխոսության համար և գոհութուն եմ հայտնում Աստծուն, որ տառապանքի ուղիների մեջ մեզ չլքեց և խաղաղության հասցրեց: Օրհնյալ է իր կամքը: Ամեն:

ՍՈՒՐԲ ՆԵԿՏԱՐԻՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾ ՊԱՏԿԵՐԸ

2005 թվականի հունիսի սկզբներին, երբ գտնվում էի Բեյրութում, առիթ ունեցա հանդիպելու Հայ Առաքելական եկեղեցու հեկորդ մի խումբ կանանց: Նրանցից մեկի տանը հյուրընկալվելիս ես հայտնվեցի Երևանից Բեյրութ հարս գնացած և այնտեղ հաստատված մի կնոջ կողքին: Մենք շատ արագ մտերմացանք և սկսեցինք ջերմորեն զրուցել: Զրուցյի ընթացքում

պարզվեց, որ խեղճ կինը հիվանդ գավակ ունի: Դիմել է գրեթե բոլոր կլինիկաներին, հատուկ ուխտագնացի զգեստով, ծոմով ուխտի է գնացել տարբեր վայրեր, սակայն բժշկության հնար չի կարողացել գտնել էպիլեպսիայով տառապող որդու համար: Իր գրույցի մեջ նա նշեց նաև սուրբ Նեկտարիոսի մասին¹:

Նրա հրաշքների մասին պատմող գիրքը ծանոթներից մեկը տվել է իրեն, որ ծանոթանա, սակայն փոքրիկ տղան երբ տեսել է գիրքը, իսկույն կառչել է դրանից, մորն աղաչելով, որ այդ գիրքը թույլ չտա տանել: Սակայն գիրքն ուրիշինն էր, և մայրն այն պահել չէր կարող:

Ես նրան ասացի, որ ունեմ և՛ սրբի նկարը, և՛ Սուրբ Նեկտարիոսի եկեղեցուց բերած յուղ, ու խոստացա Երևան հասնելուն պես դրանք երեխային ուղարկել: Կինը հայտնեց, որ իր քույրերը Երևանում են ապրում, սակայն հեռու են հավատքից:

Երբ Երևան վերադարձա, պատրաստեցի օրհնյալ յուղը, ինչպես նաև Սուրբ Նեկտարիոսի սրբապատկերը: Այն վաղուց էր ինձ մոտ, սակայն մի կողմ էի դրել, ասես ինչ-որ ձևով զգալով, որ այն իմը չէ և նախատեսված է ուրիշի համար: Զանգահարեցի կնոջ քրոջը: Երևի նրա համար շատ տարօրինակ էր, որ իրեն ինչ-որ յուղ են փոխանցում, որպեսզի այն ուղարկի Բեյրութ:

Անցավ որոշ ժամանակ, և հանկարծ ինձ զանգահարեց բեյրութեցի կնոջ Երևանում ապրող քույրը: Նրա ձայնը լրիվ այլ երանգ ուներ այս անգամ: Հրաշք էր տեղի ունեցել: Փաթեթը բավական դժվարությամբ տեղ էր հասել: Այն տանող անձը չէր ցանկացել սուրբի եկեղեցուց բերած յուղը տալ ըստ պատկանելվույն, և միայն համառ ջանքերի շնորհիվ էին կարողացել այն

¹ Սուրբ Նեկտարիոսը Հունական Ուղղափառ եկեղեցու սրբերից է: Նրա սրբապատկերից ծորացող յուղը բուժիչ հատկություն ունի, որ հաճախ օգտագործվում է հավատացյալների կողմից.- Լ. Բ.:

վերցնել նրա ձեռքից: Մի խոսքով, երբ այն հասել էր փոքրիկ տիրոջը, երեխան գրկել էր սրբապատկերը և խնդրել էր մորը, որ իրեն թույլ տա քնելուց առաջ համբուրել Սուրբի նկարը... Մայրը թույլատրել էր, սակայն շուտով մոտ էր վազել երեխայի զարմացած ձայնից.

-Մայրիկ, նկարը թաց է...

Պարզվել էր, որ նկարն սկսել է յուղ ծորալ: Հիմա արդեն նրանց հերթն էր, այդ սրբապատկերից ծորացած յուղից ինձ էլ ուղարկելու... Հիմա երեխան աստիճանաբար բուժվում է: Այդ հրաշքի պատճառով այդ կնոջ անհավատ քույրերը նույնպես դարձել են առ Աստված և հավատքի ուղին են բռնել:

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

«Առաքելությունն Հայաստան»

բարեգործական կազմակերպության աշխատակցուհի

ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ ՕԳՆԵՑ ԻՆՁ

Տարիներ առաջ անակնկալ կերպով հիվանդացա: Ես, որ մարդիկ էի, և երբևէ չէի պատկերացնում, թե կարող եմ ֆիզիկական տկարություն ունենալ, անդամալույծ դարձա: Բժիշկների խստորոշումը վերջնական էր՝ փոքր ուղեղի մազանոթի դեֆորմացիա: Բացի նրանից, որ խախտվել էին օրգանիզմիս բազմաթիվ ֆունկցիաները, նաև անտանելի ցավեր էի ունենում: Մոտ վեց ամիս գրեթե վայրկյան չկար, որ ես առանց ցավերի լինեի: Արդեն ցավազրկող դեղերն էլ չէին օգնում: Եվ այդ ժամանակ ինձ օգնություն հասավ «Տերունական աղոթքը»: Նախքան հիվանդությունս ես հավատում էի Աստծուն, բայց այդ հավատքն այդքան զորեղ չէր: Մի անգամ վերահատուկությունից առաջ խնդրեցի, որ ինձ այցելի քահանան: Այն ժամանակվա իմ մտածելով. «Խեղդվող մարդը ձեռքն անգամ փրփուրին է գցում»: Եկավ քահանան, աղոթեց և խորհուրդ տվեց ցավերի

ժամանակ աղոթել: Ես քնելուց առաջ երեք անգամ ասում էի «Հայր մերը», ու ցավերը թուլանում էին, իսկ երբ յոթ անգամ էի ասում «Տերունականը», այդ գիշեր հանգիստ քնում էի: Չեմ ասի, թե առավոտյան ցավ չէի ունենում, ցավը միշտ կար: Առավոտյան ու ցերեկն աղոթքն այդքան չէր օգնում, որքան՝ գիշերը:

Հայաստանում բժիշկները փորձեցին բուժել: Ինչ-որ չափով բուժեցին, առանձին ֆունկցիաներ վերականգնվեցին, բայց ոչ լրիվ և հարկ եղավ Մոսկվա մեկնել՝ վիրահատություն: Իսկ մենք այլևս ոչինչ չունեինք՝ ո՛չ ոսկեղեն, ո՛չ խնայողություն: Նույնիսկ մի դեղահաբ գնելու հնարավորություն չկար: Ումից էլ որ պարտքով փող էինք ուզում, չէին տալիս: Բայց զարմանալի բան. ասես մի գորավոր ձեռք այնպես կարգավորեց, որ անհրաժեշտ գումարը շատ կարճ ժամանակում հավաքվեց: Նույնիսկ այն մարդիկ, որ առաջ պարտքով փող չէին տալիս, հիմա տվեցին անվերադարձ, օգնության կարգով: Գումար ստացանք նաև արտասահմանից, այնպիսի մարդկանցից, որ անգամ երևակայելն անհնարին էր:

Հասանք Մոսկվա, բայց ես վիրահատություններից առաջ սարսափում էի: Թվում էր, որ հենց գա այն պահը, երբ հանկարծ չտեսնեմ հարազատներին դեմքերը, կմեռնեմ, միամզամից կանգ կառնի սիրտս: Սարսափում էի, բայց ցույց չէի տալիս:

Վիրահատության օրը ինձ դրեցին սայլակի վրա, բերեցին, հասցրեցին վերելակի մոտ: Գերագույն ճիգերով ինձ տիրապետեցի.

-Ամեն ինչ լավ կլինի,- ասացի, սակայն միայն Աստված գիտեր, թե որքան վախեցած, որքան հուսահատ և որքան տխուր էի ես:

Երբ մտքրին վերելակի մեջ, հանկարծ վրաս մի մեծ հանգստություն իջավ: Նայում եմ՝ վերելակի մեջ ինձնից և ուղեկցողից բացի այլ մարդ չկա, բայց ես զգում եմ, որ կա: Կուզեք՝ ուժ

ասեք, կուզեք՝ զորություն, կուզեք՝ անտեսանելի ինչ-որ բան:

«Երևի ինքնաներշնչում է», - մտածեցի, սակայն հասկացա, որ նման ինքնաներշնչում լինել չի կարող: Տարան վիրահատարան, միացրեցին համապատասխան տվիչները, փողրակները: Արտիս ձայնը լսվում է բարձր, նաև ես եմ լսում ներքին լսողությամբ: Վիրահատարանի քույրերը զարմացած իրար են նայում և ինձ: Ինչ էլ որ լինի, վիրահատությունից առաջ մարդու սրտի զարկերն արագանում են, նյարդերը՝ լարվում: Իսկ ինձ մոտ ամեն ինչ գերազանց էր:

-Ինչ ինքնատիրապետում ունի,- շշնջում են նրանք իրար՝ չհասկանալով, որ ես չեմ տիրապետում ինքս ինձ, այլ՝ Ուրիշը: Ինչ-որ մի գորավոր Ուժ հանդարտություն էր իջեցրել վրաս:

Վիրահատությունը շատ հաջող ընթացք ունեցավ: Նույնիսկ բժիշկներն էին խոստովանում. թե իրենք վստահ էին վիրահատության հաջող ընթացքի վրա, բայց չէին սպասում, թե ամեն ինչ այսքան բարեհաջող կընթանա: Վերականգնումը նույնպես շատ արագ ընթացավ ու վերադարձա Հայաստան: Ճիշտ է, լրիվ վերականգնվելու համար բժիշկներն ինձ ժամանակ են տվել, բայց ես հուսով եմ, որ Աստծո ողորմածությամբ լիովին կառողջանամ:

Մինչ հիվանդությունս, վիրահատությունս և ինձ այցելած Ուժի կամ զորության հետ հանդիպումս, ես հարգանք ունեի Աստծո և կրոնավորների նկատմամբ, բայց խոր հավատ չունեի: Վերելակի մեջ և նաև հետո, ես հասկացա, որ Ստոված կա և Նա մեր նեղության մեջ միշտ մեր կողքին է: Հետո, երբ Հայաստան եկա, նաև միտովեցի Տեր Մինաս քահանայի ձեռքով և հիմա փորձում եմ ապրել աստվածահաճո կյանքով: Ես ինձ հետ կատարվածը հրաշք եմ համարում կամ ավելի ճիշտ՝ Աստծո մեծ ողորմություն:

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍԻՅԱՆ
p.Սևան

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԴԱՐՁԻ ԵԿԱ ԵՍ

Փոքր տարիքում առանձնակի հավատքով աչքի չեմ ընկել, սակայն հիշում եմ, որ երբ մայրս հաց էր թխում, առաջին լավաշը թոնրից հանելիս միշտ խաչակնքում էր ու ասում «Գրիգոր ավետարան»: Ումի՞ց էր լսել: Երևի սեփական մորից, կամ տատից, և ասում էր ամեն անգամ: Իսկ դա ինձ գայրացնում էր, և ես հաճախ էի հանդիմանում նրան այդ «հետամնացության» համար:

Անցան տարիներ, ես մեծացա, ուսում առա, բայց խորհրդային երկրի շատ երիտասարդների նման ես նույնպես չզնացի աստվածգիտության ճանապարհով: Մկրտված էլ էի, բայց նման մկրտությունը արդեն կարծես ձևական էր ինձ համար: Ավելին, սկսեցի սուրճի բաժակ նայել: Երբ գործընկերներիցս կամ հարևանուհիներիցս մեկը սուրճ էր խմում, շուռ էր տալիս բաժակն ու մեկնեմ էր ինձ:

-Նայի՛ր:

Նայում էի և հաճախ ճիշտ էի գուշակում: Կարող էի մեկին ասել ասենք. «Ամուսինդ այսօր կգա Ռուսաստանից» և դար: Բանը հասել էր այնտեղ, որ երբ որևէ մեկը չէր ցանկանում ինձ բաժակ նայել տալ, գայրանում էի: Սակայն պետք է ասեմ նաև, որ գիշերները անհանգիստ էի: Վեր էի թռչում, կամ կանչում էի ամուսնուս, տանեցիներին, որ ինձ փրկեն: Հաճախ էի հանդիմանում ամուսնուս. «Ինձ խեղդում են, իսկ դու ձայնս չես լսում»:

Հիմա գիտեմ, որ սուրճի բաժակով գուշակություններ անելը կամ գուշակությունն առհասարակ, դիվական բան է: Իսկ այն ժամանակ իմ երազում, կամ հաճախ էլ՝ իրականության մեջ, լուսամուտից տուն էր մտնում մի սև, տձև, ոչ մի բանի չնմանվող բան և սկսում էր տանջել ինձ: Կա՛մ կախվում էր լուսամտիցից ու սկսում էր ճոճել, կա՛մ սկսում էր խեղդել ինձ: Մի ան-

գամ նույնիսկ բանը հասավ այնտեղ, որ սկսեցի ամուսնուս ձայն տալ, որ փրկի ինձ: Հիշում եմ՝ այդ անգամ նաև «Աստված» կանչեցի, բայց չխաչակնքեցի: Լինում էր, որ լուսամուտից մտնում և լուսամուտից էլ դուրս էր գալիս: Ես տեսնում էի, բայց ուրիշ ոչ ոք չէր տեսնում: Գիտեի, որ խելագար չեմ, հոգեպես նորմալ վիճակում եմ, սակայն... Ես վախենում էի մենակ տուն մտնել, կարծես նա կենդանի, իրական պատվում էր իմ հետևից ու շնչում: Մի խոսքով, բոլոր հարազատներս իմացան, որ հիվանդ եմ: Մի անգամ իմ հայրենիքից՝ Ջավախքից եկավ հարազատներիցս մեկը, որը խորհուրդ տվեց քնելուց առաջ խաչակնքվել, սակայն չարեցի:

Կարծես այդ ամենը քիչ էր, որոշ ժամանակ անց, երբ լողանում էի և ինձ օգնում էր տեգրոջս աղջիկը, իմացա ինձ համար մի սարսափելի բանի մասին: Այդ օրերին սկսել էի ուժեղ ծակոցներ զգալ թիկունքիս շրջանում և մենակ գործ անել չէի կարողանում: Եվ սարսափեցի, երբ նա ասաց.

-Աչխեն, թիկունքիդ ուռուցք կա... Մեծ ուռուցք:

Միանգամից ինձ վատ զգացի: Իմ վիճակին ավելացավ այն, որ այդ «ինչ-որ բանը» կամ ավելի ճիշտ՝ դեռ, պատվում էր հետևիցս և անընդհատ ինձ հիշեցնում, որ ես շուտով մեռնելու եմ: «Դու շուտով մեռնելու ես», «Վաղը քո վերջին օրն է»...

Այդ ժամանակ ընկերուհիս, որ նաև մոտիկ հարևանուհիս է, Հոգեգալստական աղանդի հետևորդ էր: Տեսնելով վիճակս՝ ինձ համոզեց, որ գնամ իրենց ժողովարանը: Հատկապես այն ժամանակ, երբ բժշկության աղոթք են անում: Ամուսնուցս գաղտնի գնացի մի քանի անգամ: Հետո ամուսինս իմացավ և ասաց, որ եթե հավատքի պիտի գնամ, ապա ավելի լավ է գնամ մեր պապերի փորձած ճանապարհով, այսինքն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցի:

Իմացա, որ Տեր Մինաս քահանա Մարտիրոսյանն ամեն շաբաթ քարոզներ ունի, նախ՝ Սևանի Գեղարվեստի դպրոցում, ա-

պա՝ մշակույթի տանը: Գնացի քարոզների, իսկ երկու ամիս անց նրա մոտ անհատական խոստովանություն ունեցա: Պատմեցի իմ ֆիզիկական, հոգևոր վիճակի և ցավերի մասին:

Չմոռանամ ասել, որ նույնյակ որոշել էի վիրահատություն գնալ:

-Աչխեն,- ասաց Տեր Մինաս քահանան,- դա կյանքի ու առողջության հարց է, դրա համար էլ ես չեմ կարող քեզ ասել, թե մի՛ գնա վիրահատության, սակայն զգուժ եմ, որ հավատք ունես: Ամեն անգամ, Պատարագից հետո, եթե նույնիսկ ես մոռանո՞մ, հիշեցրու, որ բժշկության աղոթք կարդամ:

Ես մի տեսակ ուրախությունը եմ նշում, որ Սևանի «Սուրբ Առաքելոց» եկեղեցում բժշկական աղոթքները կարծես թե ինձանով սկզբնավորվեցին:

Մի քանի աղոթքից հետո ցավերն անցան, անցավ իմ սարսափը: Անցել է ինը տարի: Հիմա էլ կա ուռուցքը, սակայն այն այլևս այդքան չի անհանգստացնում ինձ: Ես հաստատ գիտեմ, որ Աստված պահում է բոլոր նրանց, ովքեր հավատում են Իրեն և ապավինում են Իր գործությանը:

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ՄԱՅՐՍ՝ ՆՈՐԱԴԱՐՁ

Ծեր ծնողներ ունեմ, որոնք ապրում են Զավախքում: Նրանք իրենց երիտասարդության շրջանում աչքի չեն ընկել առանձնահատուկ հավատքով: Այնպես, ինչպես խորհրդային շրջանի շատ ու շատ մարդիկ:

Սակայն վերջին տարիներին մեծ վիշտ տեսան: Հայոց բանակում, դժբախտ պատահարի հետևանքով, զոհվեց նրանց սիրելի թոռնիկը՝ Մերուժանը: Թե պապիկն ու տատիկը որքան էին

սիրում իրենց թոռնիկին, գիտեն շրջապատի բոլոր մարդիկ, և թվում էր, թե այդ մեծ վշտին չեն դիմանա: Սակայն...

Այդ մենք՝ քրիստոնյաներս գիտենք, որ մահ չկա, դրա համար էլ այս աշխարհից հեռացածներին անվանում ենք «ննջեցյալ», իսկ անհավատ մարդու համար շատ ավելի դժվար է համակերպվել վշտի հետ: Սակայն զարմանալի բան տեղի ունեցավ՝ ավելի գործուն դարձավ ծնողներին հավատքը:

Մայրս այդ տարիքում եկավ Սևանի վանք և մկրտվեց, որպեսզի մահվանից հետո արժանանա իր թոռնիկի տեսությանը: Այսինքն հավատում է «Անմահ մահով մեռնելու» իրողությանը:

Բացի սա, մի զարմանալի դեպք էլ տեղի ունեցավ: Եղբայրս երկու որդի ուներ, որոնցից մեկը հիվանդ էր: Երբ եղբայրը զոհվեց, նա առողջացավ, իսկ մայրս անընդհատ հարձակումների է ենթակրվում չարի կողմից:

Մի անգամ նա նույնիսկ պատմեց, թե ինչպես սատանան հաճախ միտք է բերում, թե.

-Մերուժան թոռնիկդ մահացել է, իսկ դու ապրում ես: Ո՞ւմ է հարկավոր քո կյանքը: Ավելի լավ է՝ գնաս, կախվես:

Եվ նա, այդ նորագարձ, յոթանասուներեքամյա կինը, արտորանքով ամեն անգամ համբուրում է խաչը և նրանով հեռու է վանում այդ կործանարար միտքն իրենից, քանզի գիտի, որ միայն Աստծո ողորմածությամբ է հնարավոր փրկվել: Հիմա և՛ հայրս կա, և՛ մայրս ու Տիրոջը հավատալով, նրան ապավինած, դիմանում են ծանր վշտին, և այդ տարիքում աշխատում են՝ աշխարհին ու իրենց ապացուցելով, որ միայն կենդանի հավատքով կարող է փրկվել մարդը:

ԱՇԽԵՆ ՌԵՎԱԶՅԱՆ
ք. Սևան, ուսուցչուհի

ԻՆՁ ՓՐԿԵՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ

Եղավ այնպես, որ մեր ընտանիքում անախորժությունն առաջացավ: Ամուսինս Ռուսաստանում էր, ես՝ Հայաստանում: Անընդհատ Աստված էի կանչում, սակայն դեռևս գործնական հավատք չկար: Հոգեվիճակս ծանր էր, սկսեցի մղձավանջային երազներ տեսնել, հաճախ այդ մղձավանջները կատարվում էին հարթմնի: Ես հասկանում էի, որ սա ինչ-որ անսովոր բան է: Ոչ այն է՝ երազներ էի տեսնում, ոչ այն է՝ տեսիլքներ: Մի անգամ, օրինակ, վիշապի տեսքով եկավ, ես սարսափահար վեր թռա...

Կամ կարող էի երազում տեսնել, որ ինչ-որ բան գալիս է կատվի տեսքով, հետո փոխվում, դառնում է կին: Մի անգամ, երազում այդ կնոջը տանից դուրս հանեցի, դուռը փակեցի, իսկ նա ձեռքը գցեց, բռնեց ինձ ու սպառնաց.

-Մեկ է, քեզ բռնելու եմ...

Դրանք սովորական երազներ չէին: Հոգեբանները գուցե թե հազար ու մի բացատրություն գտնեն նման իրավիճակների համար, բայց ես գիտեմ, որ դրանք կապված էին չար ուժերի հետ: Վախենում էի, այնքան էի վախենում, որ սկսեուրս ստիպված եղավ տեղափոխվել մեր տուն:

Եղավ այնպես, որ մի անգամ էլ արթուն վիճակում տեսիլք տեսա: Քնած էի ննջասենյակում՝ որդուս ու սկեսրոջս հետ: Հանկարծ արթնացա: Զգացի, որ վերմակը վրայիցս քաշում են: Նախ թվաց, թե երազ է, բայց հետո հասկացա, որ իրականություն է, մանավանդ, երբ տեսա, որ իմ մահճակալի մոտ մի գեղեցկուհի է կանգնած՝ ոսկեգուլյն մազերով:

«Տեր Աստված, - մտածեցի,- Քեզ այդքան կանչեցի ու Դու եկա՞ր», - հետո հարցրեցի.

-Քեզ կարո՞ղ եմ մի հարց տալ:

-Տո՛ւր,- ասաց:

Բնական է, որ ընտանիքի մասին հարցրեցի:

-Մի տարի էլ չանցած՝ ամեն ինչ կկարգավորվի,- ասաց:

-Քո մասին կարո՞ղ եմ բոլորին պատմել,- հարցրեցի:

-Կարող ես,- ասաց,- բացի նրանից,- կողքիս քնած սկեսրոջս ցույց տվեց նա:

Ես այդ ժամանակ չհասկացա, թե ինչու է հատկապես սկեսրոջս մատնացույց անում, բայց հիմա ենթադրում եմ՝ ինչու: Բանն այն է, որ ես այն ժամանակ գնում էի աղանդավորների հավաքին: Մտածում էի, որ եթե ուզում ես Աստծուն ճանաչել, ապա կարևոր է, թե որտեղ կճանաչես Նրան: Իսկ սկեսուրս դեմ էր դրան: Նա ասում էր՝ եթե ուզում ես Աստծուն դառնալ՝ գնա Հայ Առաքելական եկեղեցի:

Իսկ այդ տեսիլքին անդրադառնալով՝ ասեմ, որ այդ աղջիկը գնաց, Հյուրասենյակից ինչ-որ բան բերեց ու քսեց իմ և քնած տղայիս դեմքին: Նորից եմ կրկնում՝ այս ամենը ես տեսնում էի հարթմնի: Հետո նորից հարցրեցի նրան, թե ինքն ո՞վ է, ու նա պատասխանեց.

-Ես ձեր աշխատանքի տեղի Նաթելայի բարեկամի աղջկա՝ Սուսանի հոգին եմ:

Ես Սուսաննային չեմ ճանաչել, բայց առավոտյան զանգահարեցի գործընկերուհուս և նա ասաց, որ նման մահացած բարեկամ ունեն:

Իսկ այն գիշեր ես դարձա սկեսրոջս կողմը և զարմացա, որ նա մեր խոսակցության ձայնից չի արթնացել ու ձայն տվեցի.

-Մամա, վեր կաց, տե՛ս, թե ով է եկել...

Եվ իմ կանչից հետո այդ տեսիլքը չքվեց:

Այս երևույթի մեկնաբանությունը ես տալ չեմ կարող, չգիտեմ՝ ինչպես բացատրեմ, սակայն գիտեմ, որ երբ զգացի, թե իմ հաճախած «եկեղեցին» ընդամենը աղանդավորների խումբ է, գնացի Հայ Առաքելական սուրբ եկեղեցի: Այդ օրվանից ի վեր

անցել են տարիներ, ու նման մղձավանջային երազներ ու անհասկանալի տեսիլքներ չեմ տեսնում այլևս:

Հիմա որդիս մեծացել է և ցանկանում է հոգևորական դառնալ՝ Հայ Առաքելական Եկեղեցու միջոցով Աստուծոն ու մարդկանց ծառայելու համար:

ԼԱԼԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Սևանի այրադագ գործարանի աշխատակցուհի

ԱՂՈԹՔԻ

ՉՈՐԱՎՈՐ ՈՒԺԸ

2005 թվականի օգոստոսի 14-ին էր՝ Մարիամ Աստվածածնի տոնի օրը: Եղբորս կինը, որ հղիության յոթներորդ ամսում էր, հանկարծ վատ զգաց ու նրան հիվանդանոց տարան: Պարզվեց, որ երեխան ժամանակից շուտ է աշխարհ գալու: Բարդությունից խուսափելու համար կատարվեց «Կեսարյան հատում»: Մոր կյանքը փրկված էր, բայց երեխան շատ վատ վիճակում էր: Բժիշկները ոչ մի հույս չէին տալիս նրան: Սակայն մեր ընտանիքը հույսը դրել էր Աստծո ողորմածության վրա:

Ես այդ ժամանակ ծառայում էի «Սուրբ Շողակաթ» եկեղեցում և ամեն օր Տիրոջն աղերսում էին երեխայի փրկության համար: Սակայն երեխայի վիճակն օրեցօր վատթարանում էր: Բժիշկները ենթադրում էին, թե երեխան կմահանա մի չորս-հինգ ժամից:

Մի անդիմադրելի ուժ ինձ ստիպում էր գնալ հիվանդանոց և այնտեղ աղոթել մանկան համար: Ուզում էի ներս մտնել, սակայն բժիշկները թույլ չէին տալիս: Երկարատև խնդրանքներից ու համառությունից հետո, վերջապես ներս մտա և դառն արտասուքներով սկսեցի աղոթել: Բռնել էի իմ մկրտության խաչը և արտասովելով Տիրոջը խնդրում էի, որ կյանք պարգևի երեխա-

յին: Եվ հրաշք կատարվեց, հանկարծ աղջիկը բացեց աչքերը: Կարծես մի ձայն ինձ ասաց, որ նա փրկված է:

Ի պատիվ Սուրբ Աստվածածնի՝ մանկան անունը Մարիամ դրեցինք: Հիմա կա մեր Մարիամը: Ով կամենում է տեսնել նրան, թող գա Էջմիածին քաղաքի Մաշտոցի 30 ա շենք, բնակարան 15:

ԴԱՎԻԹ ՅԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Սևանի Վազգենյան դպրանոցի
առաջին լսարանի սան

ՄՈՐՍ ՏԵՍԱԾ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԵՐԱԶԸ

Մայրս՝ Թամարա Փլիկոսյանը, մի երկու-երեք տարի առաջ հիվանդացավ: Ցավում էր ոտքը: Բազում բժիշկների դիմեցինք, բազմաթիվ դեղեր օգտագործեց, բայց բուժում չգտնվեց:

Մի անգամ նա երազ տեսավ: Պատմում էր, որ տեսել է մի կանաչ դաշտ, որի մեջ, հեռվում մի քարի նստած է եղել մեկը, որն իր կարծիքով սբ. Գայանե կույսն է եղել: Ինչպես է լինում նման դեպքերում. քեզ ոչ ոք բացահայտ չի ասում, թե նա ով է, բայց դու իմանում ես: Մի խոսքով, կույսը մորս իր մոտ է կանչում, իսկ մայրս հրաժարվում է՝ ասելով. «Ոտքս ցավում է, բացի այդ, դաշտն այնքան կանաչ է և խոտն այնպես հավասար է խուզված, որ վախենում եմ՝ փչացնեմ»:

«Արի, մի վախենա»,- համոզում է կույսը, և մայրս գնում է դեպի նա: Հետո շուռ է գալիս ու տեսնում, որ կանաչի վրա իր ոտնահետքերը չեն երևում և խոտը այնպես մաքուր ու անարատ է, ասես անկոխ լինի: Եվ հենց այդ պահին արթնանում է: Իսկ առավոտյան անցնում է ոտքի ցավը, և վերանում է կաղուխը:

ՍԵՎԱԿ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
ք. Էջմիածին, Զվարթնոց թաղամաս

ՏԻՐՈՋ ԵՎ ՏԻՐԱՍՈՐ ԱՆՎԱՆ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դեպքը տեղի է ունեցել 2001 թվականի նոյեմբեր ամսին: Այդ օրը Դամասկոսում հորդառատ անձրև եկավ: Այնպիսի անձրև, որ ճանապարհները կորան ցեխի մեջ, և խիստ դժվարացավ մեքենա վարելը: Անիվները սահում էին ճանապարհի վրա, և արգելակելը խիստ դժվար էր:

Ես «Օպել» մակինչի մեքենայով էի և մոտ 100 կիլոմետր/ժամ արագությամբ սլանում էի մեծ ուղիով: Հանկարծ, երթևեկության բոլոր կանոնները խախտելով՝ դեմս դուրս եկավ մի մեծ բեռնատար: Իմ և նրա միջև հեռավորությունը մոտ 15 մետր էր: Փորձեցի արգելակել, սակայն մեքենան սահեց, և լարձուն գետնի վրա արգելակները չպահեցին: Թվում էր՝ բախումն անխուսափելի է, ամեն ինչ վճռվում էր վայրկյանների ընթացքում: Ես բարձր ձայնով գոչեցի.

-Քրիստո՛ս, Մարիա՛մ, օգնեցեք ինձ:

Եվ հանկարծ մի անտեսանելի ուժ վերացրեց վտանգը՝ մեքենան կանգնեցնելով բեռնատարից մի թղաչափ հեռու:

Ես ջախջախվելուց փրկվեցի տեր Աստծո և Սուրբ կույս Մարիամի ողորմածություն շնորհիվ:

ՌԱՖՖԻ ԲԱՂՂԱԴԼՅԱՆ
Սիրիա, Դամասկոս

ԻՆՉՊԵՍ ԴԻՎԱՐԱՐ ԵՂԱՎ ՏՂԱՍ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ

-Ես այս դեպքը կպատմեմ միայն մի պայմանով, եթե չնչեք իմ ու տղայիս անունները: Երիտասարդ տղա է, ամաչում է, չի ցանկանում, որ իմանան իր հետ կատարվածը, սակայն ես շատ

եմ ուզում, որպեսզի ուրիշներին սա դաս դառնա,- ասաց զրու-
ցակիցս և խոսք առնելով, որ կպահպանեմ իր դրած պայմանը,
պատմեց հետևյալը.

-Տղայիս հետ կատարվածի հիմնական պատճառն իմ կարծի-
քով թերահավատությունն է: Նա հավատում է Աստծուն, բայց
թերահավատ է: Ասենք մարդկային հավատը միշտ էլ պակաս ու
պակասավոր է Աստվածային լիության դեմ: Հո պատահական
չէ՞, որ նույնիսկ մեծ Գրիգոր Նարեկացին ինքն իրեն թերահա-
վատ է համարում: Ինչևէ: Տղայիս մոտ դա ավելի ցայտուն էր
արտահայտվում: Բանակում ծառայելու ժամանակ նրա մոտ հի-
վանդություն ի հայտ եկավ, որը բժիշկներն ակտորոշեցին՝
քունքային էպիլեպսիա:

Սկզբում կարծում էին՝ ստում է, որպեսզի չծառայի, իսկ հե-
տո համոզվեցին, որ չի խաբում: Տարան գինվորական հոսպիտալ:

Հոսպիտալում մի քանի երիտասարդ, հավատքից հեռու
գինվորների նախաձեռնություններով, որոշում են ոգի կանչել:
Սկսում են իրենց «գործը», սակայն ոգին հայտնում է, թե «Ձեր
մեջ մեկը կա, մինչև դուրս չգա, ես չեմ կարող գալ»:

-Ո՞վ է,- հարցնում է գլխավոր ոգեհարցուկը:

Չարը տալիս է տղայիս անունը:

-Ինչու՞:

-Քանի որ նրա համար աղոթող կա և ինձ խանգարում է:

Տղաս դուրս է գալիս ու կանգնում է միջանցքում, սակայն
այս անգամ ոգին պահանջում է, որ նա այդտեղից էլ հեռանա:

Դա ավելի է զրգռում նրա հետաքրքրասիրությունը և հա-
ջորդ անգամ ինքն էլ է միանում ոգեհարցուկին: Ավելին, ինքն է
կանչում: Եվ գալիս է, նույնիսկ անունն է ասում:

-Ես եկել եմ Պակիստանից,- ասում է:

Ցավոք հիմա անունը չեմ հիշում: Ինչևէ, այդ դեպքից հե-
տո նրա վիճակը շատ էր վատացել, և ինձ հոսպիտալից լուր ու-

դարկեցին: Գնացի, բերեցի տուն: Սարսափելի էր, աննկարագրելի և նույնիսկ թշնամուս չեմ ցանկանում տեսնել նման բան: Գիշերվա կեսին վեր էր կացել, նստել անկողնում և ակնհայտորեն խոսում էր նրա՝ այդ ոգու հետ: Մենք փորձում էինք արթնացնել ու չէինք կարողանում: Ես հավատացյալ մարդ եմ և անմիջապես գլխի ընկա, որ երեխան դիվահար է եղել: (Այդ ժամանակ ես չգիտեի եղելությունը: Տղաս հետո պատմեց իրենց «Քաջագործությունը»): Սկսեցի աղոթել՝ փորձելով իմ տկար ուժերով քշել դևին, սակայն...

Երկար տանջելուց հետո, վերջապես դեռ կարծես թե թողեց նրան և խոստացավ.

-Ես անպայման նորից կգամ:

Մի կերպ անց կացրինք գիշերը: Առավոտյան կիրակի էր և տղայիս հետ գնացինք Սևանի «Սուրբ Առաքելոց» եկեղեցի:

Տեր հորը պատմեցի եղելությունը, խնդրեցի նրա աղոթքը: Տեր հայրն աղոթք կարդաց երեխայի գլխին, գնացինք տուն, և նա առանց հանվելու մի կողքի պառկեց ու քնեց ոչ միայն այդ ցերեկը, այլև մինչև մյուս առավոտ:

Ահա այդ պատմությունը: Ես սա պատմեցի բոլոր այն տաքգլուխների համար, ովքեր առանց հասկանալու խաղ են անում սատանայի հետ, իրենց խելքով փորձում են նրան իրենց ծառայեցնել: Նրանք չգիտեն, որ չի կարելի խաղալ կրակի հետ: Պետք է հավատալ Աստծուն և նրա զորությամբ ապրել հավատավոր ու բարի կյանքով, քանզի միայն այդ է գրավականը ոչ միայն երկրավոր, այլև՝ հավերժական կյանքի:

ԻՆՉՊԵՍ ԲԱՐԵԼԱՎԿԵՑ ՄՈՐԱ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մորս աչքերը տարիներ ի վեր տկար էին: Լավ չէր տեսնում, էլ չասենք՝ կարդալ կարողանալու մասին: 2005 թվականի սեպտեմբերի մեկին էր: Ես ընդունելու թյան քննություններ էի հանձնել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Մորս հետ եկանք արդյունքներն իմանալու: Մայրս գնաց «Կաթողիկե»՝ աղոթելու, իսկ ես գնացի ճեմարան:

Նա մտնում է եկեղեցի, մոմ է վառում, իր աղոթքն անում: Հետո եկեղեցում մի ծերունի նրան քարոզթերթիկ է տալիս, որ կարդա: Ծերունին չգիտեր, բայց մայրս հո գիտե՞ր, որ ինքը կարդալ չի կարողանում: Նա վերցնում է քարոզթերթիկն ու փորձում է կարդալ... և ստացվում է: Չգիտես ինչ հրաշքով նրա աչքերի տեսողությունը բարելավվել էր: Այդ օրվանից սկսած՝ մայրս կարդում է, և հիմնականում՝ Աստվածաշունչ: Նա հավատացած է, որ Աստված լսեց իր աղերսանքը և բացեց իր տեսողությունը:

ԱՎԵՏԻՍ ԱՍԱՏՐՅԱՆ

Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի
ատաջին լսարանի սան

«ԶԵՂԱԾ ԲԱՆԸ»

Մայիսյան առավոտը ծաղկած դեղձենու բույր ուներ և եկեղեցու դռանը կանգնած քահանան, արդեն որերորդ անգամ, հիանում էր Արարչի իմաստնությունք և ապրում էր Նրա կողմից իրեն նվիրած հերթական գարունը:

Եկեղեցին դատարկ էր: Քահանան նոր էր ավարտել Առավոտյան ժամերգությունը: Աստծո առաջ իր ծառայությունը կատարել էր բարեխղճորեն: Հետո ի՞նչ, որ եկեղեցում մարդ

չկար, հետո ի՞նչ, որ խորհրդային իշխանություններն արգելու՞մ էին հավատալ Աստծուն:

Բաց դռնից խնկահոտը ելնում, խառնվում էր գարնան ծաղկահոտին և գմբեթի տակ բնավորված ծիծեռնակն ամեն անգամ գարնան երկնքին էր խառնում մի կտուց աղոթք:

Քահանայի հոգին խաղաղ էր և սիրտը ոչինչ չէր անհանգստացնում:

...Կարմիր վզկապով աղջիկը եկավ ասես չուզենալով, կանգնեց, նայեց եկեղեցուն, նրա սեմին հենված քահանային, հետո մոտեցավ: Կանգնեց դեմ-դիմաց և հայացքն ի վեր՝ սևեռեց քահանայի դեմքին.

-Ուսուցիչն ասում է՝ Աստված չկա,- հաստատելու պես ասաց կիսաձայն, ու մինչ քահանան կմտմտար անելիքը, առանց պատասխանի սպասելու ներս մտավ:

Որքա՞ն մնաց ներսում, քահանան չհաշվեց, ի՞նչ արեց այնտեղ, չհետաքրքրվեց: Նա մտքի մեջ ծամծամում էր երկար-բարակ ապացույցների մի շարան հօգուտ Աստծո գոյության:

Աղջիկը դուրս եկավ, դարձյալ կանգնեց քահանայի դեմ-հանդիման ու ասաց.

-Եթե Աստված չկա, էլ ինչու՞ են այդքան խոսում «չեղած բանի» մասին: Չեղած բանի մասին չեն խոսի: Իսկ իրենք խոսում են, ուրեմն...

Ասաց ու զարմանքից քարացած քահանայի հայացքի տակ հեռացավ մի ոտքի վրա թռչկոտելով: Մինչև հիմա էլ ծեր քահանայի աչքերի մեջ նրա փողփողացող ալ վզկապն է, իսկ մտքի մեջ՝ զարմացած հարցը.«Մի՞թե 10-11 տարեկան աղջնակն այդքան իմաստնություն կարող է ունենալ»:

ԾԱՆՈԹԻՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

-Վատահ եմ, որ ականտեսներից շատերն արդեն մոռացել են այս դեպքը,-ժպտաց ծանոթս ու շարունակեց,- իսկ ես մոռանալ չեմ կարողանում: -Աչնան արևոտ առավոտ էր: Օդն այնքան խաղաղ էր, որ ձայները զրնգում էին հազարամյա զանգի նման: Սևան քաղաքի գինվորական կոմիսարիստի դիմաց խոնվել էին զորակոչիկների ծնողներն ու հարազատները: Մենք կանգնած էինք շենքի հետնամասում գտնվող ավտոմեքենաների վերանորոգման արհեստանոցի դիմաց և աչնան առավոտի խաղաղությունն էինք վայելում: Ես խաղում էի աղոթնոցիս հետ և մտքում աղոթում էի Հիսուսական աղոթքով.«Տեր, Հիսուս Քրիստոս, Որդի բարձրյալ աստծո, ողորմիր ինձ՝ բազմամեղիս»: Արդեն սովորություն է դարձել՝ աղոթում եմ մտքում. և՛ մարդկանց հետ եմ, և՛ նրանցից հեռու՝ Աստծո ներկայությամբ: Ինչե՛կ...

Հանկարծ առավոտվա թմբկաթաղանթը պատուվեց տղամարդկային բարձր՝ կռվի ու հայհոյանքի ձայներից: Երկու խմբի բաժանված, նրանք հավաքվեցին գինկոմիսարիատի շենքի հետնամասում՝ սկսած լեզվակռիվը բռունցքներով կամ դանակներով ավարտելու:

-Վե՛րջ,- հուսահատությամբ շնչաց մոտս կանգնած տղամարդը,- առանց արյուն հանելու չեն հանգստանա:

Հագիվ էր այդ ասել, երբ ես անկախ ինձանից, բարձր ու հատուկ ձայնով դիմեցի կռվողներին, որ մեզնից հեռու էին մոտ 50 մետր.

-Խաղաղություն՝ն ձեզ,- ասացի որպես ներքին աղոթքիս շարունակություն:

Դա եղավ ինձնից անկախ, ասես ձայն տվողը ես չլինեի, այլ մեկ ուրիշը... Եվ կռվողների աղմուկը միանգամից դադրեց, հետո, ի գարմանս բոլորիս, թողեցին, հեռացան:

2005 թվականի ապրիլ ամիսն էր, գործող Իջևան էի գնում: Ժամանակ կար և որոշեցի ճանապարհից ձախ թեքվել ու մտնել Հաղարծնի վանք: Գնում էի աղոթելով, նաև՝ զանազան հիշողություններ էին գալիս փաթաթվում աչքերիս: Մեկ էլ ուսանողական տարիներին էի եղել այստեղ: Անտառը նոր-նոր արթնանաւում էր ձմռան քնից, հողն սկսում էր ծիլերին սնել: Արևոտ ու տաք գարնան օր էր: Ճանապարհը տարավ, կանգնեցրեց վանքի մոտ: Սակայն ձնհալի ջրերը քանդել էին ճանապարհի որոշ հատվածը և չգագի, թե ինչպես մեքենայի հետևի անիվները կախված մնացին օդում: Ո՛չ հետ գնալ էր լինում, ո՛չ առաջ: Մի կերպ իջա, փորձեցի անիվների տակ քարեր հարմարեցնել և անցնելով դեպի հետ, չքանդված մասը, վերադառնալ: Չստացվեց, տեղապտույտից սկսեց ծուխ բարձրանալ անիվների ռետիններից:

Իջա, նայեցի, վանքի գմբեթին ու շշնջացի:

-Տեր Աստված, մի՞թե ինձ անօգնական ես թողնելու այս փորձանքի մեջ: Ես հիմա տրակտոր որտեղի՞ց գտնեմ,- ասացի ու ձեռքս հոսաահատված դրեցի մեքենայի վրա: Եվ, ի զարմանս ինձ, մեքենան տեղից պոկվեց, իմ դրած քարերի վրայով հանդարտ ետ գնաց ու կանգ առավ հարթ տեղում: Ես զգացի, որ մի ուժ, ինձնից դուրս գործող ինչ-որ մի ուժ մեքենան հանեց թակարդից: Հիմա որքան էլ որ նկարագրեմ ու բացատրեմ, չեմ կարողանա, սակայն փորձանքից փրկված լինելու այդ քաղցր զգացողությունը մինչև օրս քաղցրորեն խողտացնում է սիրտս:

Գնացել էի հայրենի գյուղ: Մահացել էր քեռիս: Թաղման օրը առատ ձյուն եկավ, ծածկեց ամեն ինչ: Լավ կլինեք, որ այդ օրը համբերեիք և դուրս չգայինք, սակայն գործեր կային և... Թաղումից անմիջապես հետո ճանապարհ ընկանք...

Հասանք Դիլիջան: Դեպի լեռնանցք տանող ճանապարհի վրա հանկարծ մեքենան կորցրեց կառավարումը և սկսեց սահել դեպի ձորը: Մեքենայի մեջ նստած կինս աղեկտուր ճշաց, իսկ ես հազիվ հասցրեցի ասել.

-Աստված...

Մեքենան սահեց և կանգ առավ անդունդի եզրին: Բարեբախտաբար դիմացից որևէ մեքենա չէր գալիս, այլապես բախումն անխուսափելի էր:

Ահա թե ինչպես, վտանգի պահին միայն Աստծո անունը հիշատակելը կարող է փրկարար լինել: Աստված ամենուր է և ամենահաս, միայն թե թերահավատ չլինենք և հարկ եղած պահին օգնության կանչենք Նրան:

Տարիներ առաջ էր՝ ձեռքիս վրա վերքի, թե՞ խալի նման մի բան առաջացավ: Առաջացավ անսպասելի: Սև, անհարթ մակերեսով ինչ-որ վերքանման բան, որ դեպքից-դեպք ասես լցվում էր արյունով, ավելի սևանում: Զգում էի, որ տանեցիները վախենում էին ինձ համար: Մի անգամ բժշկի ցույց տվեցի, նրա դեմքի արտահայտությունից զգացի, որ վտանգավոր բան է և նա ելնելով խալի տեսքից համենայնդեպս լավ բան չի մտածում:

-Երևի երակ է,- ասացի:

-Այդ մասում երակ չկա,- ասաց,- համենայնդեպս ձեռք մի տուր:

Թե անկեղծ լինեմ, ես չէի վախենում, միայն աշխատում էի զգուշ լինել, որպեսզի որևէ բանի չկպչի, քանի որ մի հասարակ բանից արյունահոսություն էր սկսվում: Մի քանի անգամ աղոթեցի, Տիրոջը խնդրելով, որ եթե իրեն հաճելի է, վերացնի այդ չարաբաստիկ խալը: Անցան օրեր, այդ խալ կոչված վերքը ձեռքիս վրա մնաց մոտ երկու տարի: Հետո, չգիտես ինչպես

վերացավ: Նախ սմբեց, հետո կամաց-կամաց վերացավ և հիմա միայն ձախ ձեռքիս վրա մնացած սպին է, որ ինձ հիշեցնում է դրա մասին:

ՍԿԻՅԻ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դեպքը տեղի է ունեցել Աշտարակ քաղաքի Սուրբ Մարիանես եղկեղեցում, 2007 թվականի ամռանը: Այդ օրը կիրակի էր և ես, քանի որ ծառայում էի եկեղեցում, առավոտյան, Պատարագից առաջ գնացի եկեղեցի, որպեսզի ամեն ինչ պատրաստեմ Պատարագի համար: Սակայն երբ հերթը հասավ Սուրբ Նշխարը սկիհի վրա դնելուն, ականատես եղա մի հրաշալի իրողություն: Անցած կիրակի պատարագից հետո մոռացել ու չէին հանգրքել մոմերը: Նրանք վառվել էին, հետո հերթը հասել էր պլաստմասսայե մոմոկալներին, որոնք նույնպես հալվել էին: Մոմակալները դրվում էին սկիհը ծածկող լայն, սինթետիկ կտորի վրա: Հալված մոմը, նաև մոմակալը թափվել էին սկիհը ծածկող կտորի վրա, բայց զարմանալի կերպով այն չէին վնասել, այլ հալվելով նրա վրա մոտ մեկ սանտիմետր հաստությամբ մի շերտ էին գոյացրել: Բոլոր տեսակի տրամաբանական օրենքներն ասում էին, որ պետք է նաև այդ սինթետիկ կտորն այրվեր և պատճառ դառնար հրդեհի, սակայն այն ոչ միայն չէր բռնկել, այլ նույնիսկ նրա վրա որևէ հետք անգամ չէր մնացել: Դա Սուրբ Հաղորդության բաժակի՝ Սկիհի գորությունն էր, որ թույլ չէր տվել, որ իր վրա փռած ծածկոցն այրվեր:

ԳԵՎՈՐԳ ԲԵՇԻՇՅԱՆ

ք. Աշտարակ

ՍՈՒՐԲ ՏԻՐԱՍՈՐ ՏԵՍԻԼԸ

1988 թվականի դեկտեմբերի 7-ի աղետաբեր երկրաշարժի պատճառով որքա՞ն անմեղ զոհեր եղան: Շատերը զոհվեցին, ոմանք՝ զրկվեցին ծնողներից ու հարազատներից, ոմանք՝ երեխաներից: Երկրաշարժի հետևանքով են զոհվել նաև իմ ընկերոջ եղբայրն ու քույրը: Ընկերս ծնվել է երկրաշարժից հետո և չի տեսել իր եղբորն ու քրոջը: Հասկանալի է, որ ծնողները որքան էլ մխիթարվեին նորածին երեխայով, միևնույն է, չէին կարող մոռանալ երկրաշարժի զոհ դարձած իրենց երախաներին:

90-ական թվականների սկզբին ըմկերոջս հայրը՝ Գառնիկը գնացել էր Դիլիջան՝ հանգստանալու: Միջադ էր և ինքը դուրս էր եկալ պատշգամբ՝ հիանալու լեռնային մայրամուտով: Ով եղել է Դիլիջանում, գիտե, թե որքան գեղեցիկ է իրիկնամուտն այնտեղ:

Ձեր մտածում ոչ մի բանի, մանավանդ, կորցրած գավակների մասին, այլ փորձում էր ըմբռնել մայրամուտը: Եվ հանկարծ աչքերի առաջ մի շատ զարմանալի տեսիլք բացվեց: Օդի մեջ հայտնվեց Տիրամայրը, գրկի մեջ՝ փոքրիկ Վահենն ու Աննան:

Նա ամեն անգամ այդ հիշելիս հուզմունք, զարմանք ու հիացմունք է ապրում, սակայն նաև չի կարողանում զսպել ուրախության արցունքները:

ԱՐՄԱՆ ԱԲՐԱՅԱՍՅԱՆ

թ. Գյումրի

ՕՐԻՑ ԿԱԽՎԱԾ

Այս դեպքն ինձ պատմել է ընկերս՝ Արմենը, որ ապրում է Երևանում՝ Նորքի չորրորդ գանգվածում: Նա, երբ ծառայելիս է եղել բանակում, հրաշալի կերպով դարձի է եկել:

-Ծառայում էի Լեոնային Ղարաբաղի հանրապետության Մարտակերտի շրջանում,- պատմում է նա,- նորոգում էինք զորամասի շենքերից մեկի տանիքը: Հանկարծ ոտքս սայթաքեց և տանիքից ցած գլորվեցի: Ներքևում պայթուցիկ նյութեր էին և եթե ընկնեի դրանց վրա, պայթյունն անխուսափելի կլիներ: Այն ոչ միայն իմ կյանքին վերջ կտար, այլև հսկայական ավերածություններ կգործեր: Սակայն հենց այդ ժամանակ հրաշք տեղի ունեցավ: Ում պատմում եմ, չի հավատում, որ ես կախված մնացի ... օդից: Ձեռքս գցեցի և բռնվեցի ինչ-որ բանից, բայց այդ «ինչ-որը» շոշափելի չէր, օդ էր պարզապես: Ականատեսները շատ են: Նրանք իրար խառնվեցին, արագ մոտեցավ կողքին աշխատող ամբարձիչը և ինձ ցած իջեցրեց:

Այդ դեպքը ինձ համար վճռորոշ եղավ: Ես մինչ այդ Աստուծոն չէի հավատում: Դրանից հետո դարձի եկա և հիմա գիտեմ, որ Նրա համար ոչ մի անհնարին բան չկա:

ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՅԸ

Այդ դեպքը նույնպես Արմենն է պատմել: 1996-1997թթ. թվականներին է եղել, երբ նա ծառայելիս է եղել բանակում:

-Այդ օրը,- պատմում է նա,- մեր ջոկը՝ 10 հոգի, գալիս էր դիրքերից: Վերջացել էր մեր հերթափոխը և զորամաս էին գնում: Դիրքերից զորամաս գնալու երկու ճանապարհ կար, մեկը կարճ՝ անտառի միջով, մյուսը՝ շրջանցիկ: Հասկանալի է, որ մենք միշտ կարճ ճանապարհն էինք ընտրում: Ասեմ, որ դա տանիքի դեպքից հետո էր: Ուրեմն այդ անգամ էլ որոշեցինք

անտառի միջով անցնող կարճ ճանապարհով գնալ: Հանկարծ ես ձայն լսեցի.

-Անտառով մի՛ գնա, Արմեն:

Բանի տեղ չդրեցի.«Երևի հոգնած եմ, գիշերը չեմ քնել, դրանից է», - մտածեցի: Բայց նորից ականջիս հնչեց նույն ձայնը.

-Արմեն, անտառով մի՛ գնա:

Դարձյալ բանի տեղ չդրեցի: Երբորդ անգամ ասես մեկը քաշեց շորիցս և ականջիս մեջ գոռաց.

-Ասում եմ՝ անտառով մի՛ գնացեք:

Ես կատարվածից շշմած՝ սկսեցի ընկերներին համոզել, որպեսզի չըջանցիկ ճանապարհով գնանք, բայց խելքի մոտ բա՞ն էր անտառի կես ժամանոց ճանապարհը թողած՝ չըջանցել անտառը և ճանապարհը երկարացնել մի երկու ժամով: Որքան էլ ասացի, թե ինձ հետ ինչ է կատարվել, որքան էլ համոզեցի, բան դուրս չեկավ: Ծիծաղեցին վրաս, ասածս բանի տեղ չդրեցին ու գնացին անտառով, իսկ ես ընտրեցի չըջանցիկ ճանապարհը:

Հիմա այս ամենը պատմում եմ սրտի ցավով, քանի որ իմ ընկերները գնացին անտառով ու... պայթեցին ականի վրա:

ՀՐԱՆՏ ԱՂԱՍՅԱՆ
Երևան,

ԴԱՐՁԻ ԵԿԱԾ ՄԱՅՄԵԴԱԿԱՆԸ, ՈՐԻՆ ՓՐԿԵԼ ԵՐ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Իրաքցի Ահմեդ Ըռուբեին ես հանդիպեցի Եվրոպայում: Նա մահմեդական էր եղել, ջերմառանդ մահմեդական: Ամեն օր Ղուրան էր կարդում ոչ միայն իր, այլև ընկերների համար: Օրերից մի օր իր հայ ընկերներից մեկը նրան արաբերեն թարգ-

մանված մի Աստվածաշունչ նվիրեց: Ահմեդը այն չէր կարողում, բայց Ղուրանի հետ պահում էր պայուսակի մեջ: Լիբանանա-իսրայելական պատերազմի ժամանակ նա «Կարմիր խաչում» էր աշխատում: Իսրայելական ուժակոծությունների ժամանակ «Կարմիր խաչի» բոլոր աշխատակիցները և քրիստոնյաները, մոտ 150 ընտանիք, հավաքվեցին քրիստոնեական եկեղեցում, վստահ լինելով, որ հրեաները եկեղեցին չեն ուժակոծի: Այդ ժամանակ ահա «Հեզբուլահի» գրոհայինները բերեցին, թնդանոթները դրեցին եկեղեցու բակում և սկսեցին կրակ բացել հրեաների ուղղությամբ: Հրեաները տեսան՝ եկեղեցու բակից կրակում են և պատասխան կրակ բացեցին: Եկեղեցին քանդվեց, մեջը գտնվող բոլոր մարդիկ, բացի իրենից ու իր ընտանիքից, գոհվեցին: Ահմեդը այդ հրաշքը վերագրեց Աստվածաշնչի գործությանը: Դրանից հետո մկրտվեց ու քրիստոնյա դարձավ:

Բայց երևի կինը վախեցել էր երեխաների համար: Բանն այն է, որ մահմեդականները շատ վատ են վերաբերվում հավատափոխ եղած, քրիստոնյա դարձած ազգակիցների հետ: Մի քանի օր անց կինը երեխաների հետ հեռացել էր Ահմադից: Գնացել էր գիշերով, գնալուց առաջ նամակ թողնելով.«Եթե ուզում ես մեզ գտնել, իմացի՛ր, մենք Բաղդադ ենք մեկնել»: Չմոռանամ ասել, որ Ահմադը շեյխի որդի էր, հետևաբար նրա պատիժը հավատափոխության համար ավելի խիստ կարող էր լինել: Նա վախենում էր, որ նախկին հավատակիցներն իրեն կսպանեն: Դրա համար էլ հեռացավ Լիբանանից, գնաց Կանադա: Այժմ Ահմադ Ըռուբեյին հաստատվել է Կանադայում: Աշխատում է, դրամ հավաքում, այդ դրամով Աստվածաշունչ է տպագրում և տարածում մահմեդական երկրներում:

-Ինչպես որ Աստվածաշունչն ինձ փրկեց, թող այդպես էլ ուրիշներին փրկի,- ասում է նա:

ԱՐԻՍ ԸՈԹՈՆՅԱՆ
Բելգիա

ԻՄ ՊԱՅՄԱՊԱՆՆ ԱՍՏՎԱԾ Է

1982 թվականի ամռանն էր: Ես նոր էի ավարտել 7-րդ դասարանը, փոխադրվել էի 8-րդ դասարան և ամառային արձակուրդները անց էի կացնում Սևանա լճի ափին՝ հանգստյան տներին մեկում, որի տնօրենն այն ժամանակ հայրս էր: Հանգստյան տան մոտակայքում մի ժայռ կա՝ իսկական արծվաբույն՝ բարձր ու հպարտ: Ժայռի մոտակայքում էլ մի շատ սառնորակ աղբյուր է բխում: Ես ու եղբայրս հաճախ էինք գնում այդ ժայռի մոտ, մագլցում նրա կատարը, մեզ լեռնագնաց երևակայում... Բարձրանում ես ժայռի կատարը, այնտեղից նայում ոտքերիդ տակ փռված աշխարհին, ասես անմիջապես ժայռի ստորոտին ծփացող Սևանին և աշխարհը բոլորովին ուրիշ գույնով է երևում աչքիդ:

Այդ օրն էլ գնացինք մեր սովորական տեղը, բայց այս անգամ ի տարբերություն եղբորս, որ ժայռի գագաթ բարձրացավ անվնաս ճանապարհով, ես որոշեցի դժվար ճանապարհն ընտրել: Բարձրացա ձորի միջով, դժվարությամբ մագլցեցի, համարյա հասնում էի գագաթին... Ձեռքս գցեցի քարին, բայց այն պոկվեց և ես գլորվեցի ներքև՝ ինձ հետ տանելով քարերի հսկայական մի հոսք: Գլորվեցի ձորը՝ մոտ 20-25 մետր ներքև: Վերևից պոկված քարերը լցվեցին վրաս:

Ամբողջ մարմինս սալջարդ էր եղել, բազուկներին վրայի մաշկը պոկվել էր, բայց ոսկորին բան չէր եղել: Եղբայրս տեսավ իմ գահավիժելը, վերևից վազեվազ հասավ ինձ, բարձրացրեց: Նրան, և հետագայում իմ ընկած տեղն ուսումնասիրողներին թվում էր, թե ես ամբողջովին ջարդուխուրդ պիտի եղած լինեմ, սական... Ինձ մի կերպ հանեցին ձորից, հասցրին հանգստյան տուն, վախեցած հայրս ինձ տարավ հիվանդանոց: Ստուգեցին, բայց ոչ մի վտանգավոր բան չգտան: Մարմինս ցավում էր, մաշկս պոկվել էր, բայց ոչ մի կենսական կարևոր օրգանի բան չէր եղել:

Այդ պահից սկսած իմ մեջ կտրուկ ու վճռական փոփոխություն տեղի ունեցավ: Ես սկսեցի հավատալ Աստծուն, և այդ հավատը չի խաթարվել մինչև օրս: Այն ժամանակ, և հիմա էլ, ես հավատացած եմ, որ ինձ փրկողը և իմ պահպանն Աստված է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՅԱՍՅԱՆ

Սևանի գազի գրասենյակի շահագործման բաժնի պետ

ՄԻՆԱՅԻԼ ՏՈԼՍՏՈՅ

ԿԵՆԴԱՆԻ ՄԵՌԱԾԸ (պատմվածք)

Երկաթուղով Նիժնի-Նովգորոդից Մոսկվա վերադառնալիս Վլադիմիր կայարանի սպասասրահի անկյունում նկատեցի մի հոգևորականի, որն ուշադրությունը ինչ-որ գիրք էր կարդում: Ակներևաբար այն աղոթագիրք էր: Ծերունու տեսքը գրավեց իմ ուշադրությունը. ավեհեր մազերը, ձյունի պես սպիտակ մորուքը կարծես հակասում էին սև ու խոշոր աչքերի կենդանի, խոր, ասես պատանեկան հայացքին: Երբ նա վերջացրեց ընթերցանությունն ու փակեց գիրքը, ես նստեցի կողքին ու խոսակցություն բացեցի: Շուտով իմացա, որ նա վարդապետ Գ-ն է, հիմնադիրը մի վանքի, որտեղ նա ճգնում է արդեն երեսուն տարի, իսկ աշխարհիկ կյանքում եղել է լեյբգվարդիական սպա:

- Ինչպե՞ս եղավ, որ Դուք, լինելով գվարդիական գնդի սպա, որոշեցիք վանական դառնալ,- հարցրեցի ես,- ճի՞շտ է, որ Ձեր կյանքում ինչ-որ արտառոց բան է կատարվել:

- Ձեզ հաճույքով կպատմեի իմ կյանքի պատմությունը, կամ այն մասին, թե ինչպես ինձ՝ մեղավորիս, այցելեց Աստծո ողորմածությունը,- պատասխանեց նա,- բայց իմ պատմությունը երկար է: Շուտով կհնչի զանգը, և մենք ստիպված կլինենք բաժանվել: Չէ՞ որ մենք առանձին վագոններով ենք ճամփորդում:

Ես փոխադրվեցի զրուցակցիս վագոնը: Բարեբախտաբար այն ազատ էր, և մեզնից բացի ուրիշ ոչ ոք չկար: Եվ նա ինձ պատմեց հետևյալը.

-Խիղճս տանջում է ինձ և թախիծը պատում է հոգիս, երբ ինձ հիշում եմ անցյալում,- այսպես սկսեց հայր Գ.-ն,- ես ծնվել եմ հարուստ և անվանի ընտանիքում: Հայրս գեներալ էր, իսկ մայրս՝ ծնյալ իշխանուհի: Յոթ տարեկան էի, երբ հայրս մահացավ Լայպցիգի ճակատամարտում ստացած վերքից²: Մայրս ավելի վաղ էր մահացել: Որբիս խնամքն ստանձնեց տատս, որ իշխանուհի էր: Ինձ համար Ֆրանսիացի դաստիարակ վարձեցին, որ Ռուսաստան էր փախել մահապատժից փրկվելու համար: Այդ ինքնակոչ ուսուցիչը որևէ գաղափար չուներ ո՛չ հոգու անմահության, ո՛չ Աստծու, ո՛չ էլ մարդու բարոյական պարտականությունների մասին: Ես ի՞նչ կարող էի սովորել նման ուսուցչից: Ֆրանսերեն խոսել փարիզյան արտասանությամբ, վարպետորեն պարել, իրեն լավ պահել հասարակության մեջ: Ասենք այդ ամենի մասին մտածելն իսկ հիմա սարսափելի է: Տատս և մյուս բարձրաշխարհիկ հարազատներս հիանում էին ինձ նման ճարպիկ տղայով: Նրանցից ոչ ոք չգիտեր, թե որպիսի նողկալի անառակություն և որքան զազրանք էր թաքնված իմ արտաքին գեղեցիկ կեղևի տակ:

Երբ լրացավ իմ տասնութ տարին, ես արդեն յուսուցիչ էի գվարդիական գնդում և երկու հազար հոգի ունեցող կալվածատեր: Ինձ հովանավորում էր քեռիս, որ վարպետ էր դրամ մսխելու մեջ և ինձ նույնպես սովորեցրեց այդ ոչ դժվար արվեստը: Շուտով ես հենց նույն գնդում ստացա կոռնետի՝ կրտսեր սպայի աստիճան: Երկու տարի անց նշանվեցի մի իշխանուհու հետ, որը ժամանակի ամենանշանավոր գեղեցկուհիներից մեկն էր: Մոտենում էր հարսանիքի օրը: Բայց Աստծո նախախնամություն

² Լայպցիգի ճակատամարտը տեղի է ունեցել 1813 թվականին.- (թարգմ.):

ինձ համար այլ ճանապարհ էր պատրաստել: Երևում է, որ Տերը խղճացել էր իմ խեղճ հոգուն:

Հարսանիքից մի քանի օր առաջ՝ սեպտեմբերի 15-ին, ես տուն էի վերադառնում պալատի պահակակետից: Օրը հրաշալի էր: Ես իմ վարդաձին չհեծա և ոտքով սկսեցի քայլել Նևայի պողոտայով: Տխուր էի, ինչ-որ անբացատրելի թախիժ ճնշում էր կուրծքս, ինչ-որ մուսյլ կանխազգացում ծանրացնում էր հոգիս...

Անցնում էի Կազանյան տաճարի մոտով և ներս մտա. ծննդյանս օրից ի վեր առաջին անգամ ցանկացա աղոթել եկեղեցում: Ինքս էլ չգիտեմ, թե ինչպես պատահեց, բայց սրտանց աղոթեցի Սուրբ Տիրամոր հրաշագործ պատկերի առջև, աղոթեցի ինչ-որ անտեսանելի վտանգ հեռացնելու համար, ամուսնական երջանկության համար: Եկեղեցուց դուրս գալիս ինձ կանգնեցրեց մի ցնցոտիավոր կին, որ ծծկեր երեխա ուներ, և ողորմություն խնդրեց: Մինչ այդ ես անողորմ էի աղքատների նկատմամբ, բայց այս անգամ խղճացի աղքատ կնոջը, նրան փող տվեցի և շնջացի. «Աղոթիր ինձ համար»: Քայլելով մի քիչ առաջ գնացի, բայց ինձ վատ էի զգում: Վրաս տաք ու սառը քրտինք եկավ, մտքերս խառնվեցին: Հազիվ հասա տուն և ուշագնաց ընկա, ի սարսափ իմ հավատարիմ Ստեփանի, որ մանկուց ի վեր ինձ մոտ էր և հաճախ (ավաղ, անօգուտ) ինձ հետ էր պահում բազում հիմար արարքներից:

Հետո ինչ է եղել, չեմ հիշում: Միայն, ինչպես երագում, հիշում եմ, որ իմ շուրջն էին հավաքվել բժիշկները, ուրիշ էլի ինչ-որ մարդիկ, որ սարսափելի ցավում էր գլուխս և ամեն ինչ պտտվում էր:

Վերջապես լիովին ուշագնաց եղա: Ինչպես հետո իմացա՝ այդպես շարունակվել է տասներկու օր ու գիշեր: Հետո ես ասես արթնացա: Զգում եմ՝ գիտակցությունս տեղն է, բայց աչքերս բացելու և նայելու ուժ չունեմ, չեմ կարողանում բերանս բացել

և ձայն հանել: Չեմ կարողանում չըջապատին կյանքի թեկուզև փոքրիկ նշան ցույց տալ, անկարող եմ մարմնիս որևէ մասը չարժել: Լսում եմ՝ կողքից մի հանդարտ ձայն է գալիս:

-Տերն իմ հովիվն է

և ինձ ոչինչ էի պակասի:

Դալար վայրերում Նա ինձ բնակեցրեց

և հանդարտ ջրերի մոտ ինձ սնուցեց:

Նա կենդանացրեց ինձ հանուն Իր անվան,

առաջնորդեց ինձ Իր արդարության ճանապարհով:

Եթե մուգիսկ անցնեմ մահվան ստվերների միջով,

չեմ վախենա չարից, քանզի Դու, Տեր, ինձ հետ ես: (Սաղմ. 22):

Սենյակի անկյունից լսվում էր իմ երկու ծառայակցի խոսակցությունը: Ես ճանաչեցի ձայները:

-Ափսոս, խեղճ Վ.-ն,- ասում էր մեկը,- նրա համար դեռևս - վաղ էր մեռնելը: Ինչպիսի՞ կարողություն ուներ, ի՞նչ կապեր և ինչպիսի՞ գեղեցկուհի հարսնացու:

-Հարսնացուի հարցում շատ ափսոսալ չարժե,- պատասխանեց մյուսը,- ես վստահ եմ, որ նա նշանվել էր շահից ելնելով: Իսկ Վ.-ին իսկապես ափսոսալ արժե, հիմա այլևս չկա մեկը, որից հնարավոր լիներ փոխարինաբար դրամ վերցնել: Նրանից միշտ էլ կարելի էր երկար ժամանակով պարտք վերցնել:

-Երկար ժամանակով: Ուրիշներն ընդհանրապես պարտք չէին տալիս... Ի դեպ, հնարավոր է, որ նրա ձեռքը ծախեն էժան գնով, լավ կլիներ, որ մի հեծկան ձի առնեինք:

«Այս ի՞նչ է,- մտածում էի ես,- մի՞թե իմ հոգին լսում է, թե իմ շուրջն ինչ են խոսում, զգում է, թե ինչ են խոսում իմ մեռած մարմնի շուրջը: Նշանակում է ես մարմնից անկախ հոգի՞ ունեմ, անմահ հոգի՞:(Թշվառ մեղավորս առաջին անգամ էի հանգում նման եզրակացություն): Ոչ, չի կարող այնպես լինել, որ ես մեռ-

նեմ: Ես զգում եմ, որ անշարժ պառկած եմ, զգում եմ, թե համազգեստն ինչպես է սեղմում կուրծքս: Նշանակում է՝ ես ողջ եմ: Կպռուկեմ, կհանգստանամ, ուժերս կհավաքեմ և կբացեմ աչքերս: Ինչպես կզարմանան ու կսարսափեն բոլորը»:

Անցավ մի երկու ժամ: (Ես ժամանակը կարողանում էի հաշվել հարևան սենյակում կախված պատի ժամացույցի զարկերով):

Սաղմոսարանի ընթերցանությունը շարունակվում էր: Երեկոյան հոգեհանգստին բազմաթիվ հարազատներ ու ծանոթներ կային: Բոլորից առաջ իմ հարսնացուն եկավ, հոր՝ ծեր իշխանի հետ:

- Դու պիտի տխուր տեսք ունենաս, եթե կարող ես, լաց եղիր,- ասաց հայրը:

- Մի՛ անհանգստացեք,- պատասխանեց դուստրը,- կարծում եմ, որ ես կարողանում եմ ինձ հավուր պատշաճի պահել: Բայց ներեցեք, չեմ կարողանա ինձ ստիպել, որ լաց լինեմ: Դուք գիտեք, որ ես Վ.-ին չէի սիրում և նրա հետ ամուսնանալ էի համաձայնել միայն Ձեր ցանկությամբ: Ես ինձ զոհաբերեցի հանուն ընտանիքի:

- Գիտեմ, գիտեմ, բարեկամս,- շարունակեց ծերունին,- բայց ի՞նչ կասեն, եթե քեզ անտարբեր տեսնեն: Այս կորուստը շատ մեծ վիշտ է մեզ համար: Քո ամուսնությունը կկարգավորեր մեր գործերը: Հիմա որտեղի՞ց գտնես նման ձեռնտու գործարք:

Հասկանալի է, որ այս խոսակցությունը տեղի էր ունենում ֆրանսերենով, որպեսզի ծառաները չկարողանան հասկանալ: Միայն ես էի լսում ու հասկանում...

Հոգեհանգստից հետո ինձ հրաժեշտ տալու համար մոտեցավ նախկին հարսնացուս: Նա շուրթերը պինդ հպեց իմ սառը ձեռքին և կարծես թե երկար ժամանակ չէր կարողանում կտրվել

ու հեռանալ: Նրան ուժով հեռացրին, որ ինքն իրեն չսպանի վշտից: Շուրջ բոլորը շշնջում էին.

-Որքան ցավալի է, ինչպես էր սիրում հանգուցյալին...

Օ, աշխարհի կապեր, որքան խաբուսիկ ու անհաստատ եք դուք: Ահա ընկերական սերը, ահա և հարսնացուի սերը: Իսկ ես՝ թշվառ անխելքս, նրան սիրում էի անմնացորդ և այդ սիրո մեջ էի տեսնում իմ երջանկությունը:

Երբ հոգեհանգստից հետո բոլորը հեռացան, ես լսեցի, թե ինչպես է ինձ վրա ողբում Ստեփանը՝ այդ բարի ծերունին: Նրա արցունքները կաթում էին իմ դեմքին:

-Դու մեզ ո՞ւմ թողեցիր, աղավնյակս,- հեկեկում էր ծերունին,- հիմա ի՞նչ կլինի մեզ հետ: Ես քեզ աղաչեցի, որ պահպանես քեզ, պարոն, իսկ դու նույնիսկ լսել չուզեցիր: Քեզ քո բարեկամները կործանեցին գինով և բազում անառակություններով: Իսկ հիմա նրանք նույնիսկ չեն վշտանում: Քեզ վրա միայն մենք՝ քո ծառաներն ենք լաց լինում:

Ստեփանի հետ նաև իմ այն գյուղացիներն էին լալիս, որոնք ապրում էին Պետերբուրգում: Նրանք սրտանց սիրում էին ինձ, քանի որ ես նրանց չէի նեղում և չէի ավելացնում բահրան: Խղճի դեմ մեղանշած չլինելու համար ասեմ, որ այդպես էի վարվում իմ անփութության պատճառով: Ես փողի պակաս չէի զգում, ոչ միայն իմ պահանջները բավարարելու, այլև գլուխս եկած ցանկացած այլանդակությունն անելու համար:

Ես իմ նկատմամբ իսկական սեր գտա հասարակ մարդկանց՝ ծառաների սրտերում:

Եկավ երկար, անվերջ թվացող գիշերը: Ես սկսեցի լսել Սաղմոսարանի ընթերցանությունը: Այն մինչ այդ անծանոթ էր ինձ: Առաջ ես ոչ մի անգամ բաց չէի արել այդ աստվածային քաղցր գիրքը:

-Քեզ կանչեցի, Տեր, անարձագանք մի թողնիր ինձ,

Աստված իմ. Եթե երբևէ լուռ մնաս,
Կննանվեն նրանց, ովքեր գերեզման են իջնում:
Լսիր, Տեր տառապանքիս ձայնը, երբ ես աղաչեմ Քեզ,
Երբ ձեռքերս դեպի սուրբ տաճարդ պարզեմ:
Ամբարիշտների շարքը մի դասիր ինձ և մի կործանիր ինձ նրանց
հետ,
որ անօրինություն են գործում,
որ հաշտության մասին են խոսում իրենց ընկերների հետ,
բայց սրտներում չարություն կա...
...Տերն է իմ օգնականն ու պաշտպանը
Նրա վրա դրեց իր հույսը պիտոն իմ,
և մարմինս գոհացավ ու զվարճացավ.
ես հոժարական պիտի փառաբանեմ Նրան: (Սաղմ.27, 1-3 և 7):

* * *

Տեր, Քո զայրույթով մի հանդիմանիր ինձ և մի խրատիր,
քանզի Քո նետերն ինձ հարվածեցին,
Քո ձեռքն ինձ վրա ծանրացավ:
Ինձ համար բուժում չկա Քո բարկության դեմ,
...Տեր, ամբողջ ցանկությունս առջևդ է, և հառաչանքս չծածկվեց
Քեզնից:
Սիրտս պղտորվեց իմ մեջ, և ուժս լքեց ինձ,
աչքերիս մեջ լույսի գշույլ իսկ չմնաց: (Սաղմ. 37, 1-4, 10-11):

*Սաղմոսի այս բառերը մտնում էին սրտիս մեջ, ես մտքիս
մեջ ջերմությամբ կրկնում էի դրանք և աղոթում ջերմորեն: Ողջ
անցած կյանքս՝ ասես զանազան անմաքրություններով պատած
կտավ, բացվում էր աչքերիս դեմ: Ինչ-որ անտեսանելի, սուրբ*

բան ինձ հրապուրում, կանչում էր դեպի իրեն: Ես խոստացա ապաշխարել, ուղղվել, երգվեցի կյանքս նվիրել ողորմած Տիրոջ ծառայությանը, եթե Նա ինձ ողորմա:

Իսկ եթե վիճակված չէ՞ ապրել, եթե այս կենդանի մահը վերջ չունենա և ինձ՝ կենդանի մեռյալիս, ողջ-ողջ թաղե՞ն: Չեմ կարող հիմա լրիվ պատմել այն ամենը, ինչ զգացի այն սարսափելի և անմոռանալի գիշերը: Միայն այն ասեմ, որ հաջորդ օրը Ստեփանն իմ գլխի պատանեկան շեկ խոպոպների մեջ սպիտակ մազափունջ հայտնաբերեց: Նույնիսկ հետազայում, երբ երագիս մեջ տեսնում էի դազաղի մեջ անցկացրած այդ գիշերը, սարսափահար վեր էի թռչում ճիշով և մարմինս պատած էր լինում սառը քրտինքով:

Լույսը բացվեց և ավելի ուժգնացան հոգեկան տվալտանքները: Ինձ վիճակված էր լսել իմ մահվան դատավճիռը: Իմ կողքին ասում էին. «Այսօր երեկոյան հոգեհանգիստն է, իսկ վաղը թաղումն է Նեալի մայրավանքում»:

Առավոտյան հոգեհանգստի ժամանակ ինչ-որ մեկն իմ դեմքին քրտինքի կաթիլ նկատեց և այն ցույց տվեց բժշկին:

-Ոչ,- ասաց նա,- դա սենյակի ջերմությունից առաջացած ջրի կաթիլ է: Ապա շոշափեց զարկերակս ու շարունակեց.

-Երակազարկ չկա: Կասկած չկա, որ նա մահացել է:

Աննկարագրելի տառապանք է մեռած համարվելը՝ սպասելով այն ըուպեին, երբ կմեխեն դազաղի կափարիչը, ուր պառկած ես դու և հողը կլցնեն նրա վրա: Սարսափելի է այն, որ դու այլևս հնարավորություն չես ունենա քո ողջ լինելը արտահայտել ո՛չ հայացքով, ո՛չ ձայնով, ո՛չ շարժումով:

Ես զգում էի, որ այսօր իմ ուժերը երեկվա համեմատությամբ ավելի են պակասել: Հույս չկար: Սարսափելի հուսահատությունը տիրեց ինձ, արյունը գլխիս խփեց, ինձ թվաց, թե ներքին օրգաններս սեղմվում ու ցավում են, սրտիս միջից դուրս

են գալիս չարության, անեծքի հոսանքներ... Բայց երևի իմ Պահապան Հրեշտակը պահպանեց ինձ. ինչ-որ ներքին զգացում ինձ ստիպում էր աղոթել այն աղոթքի բառերով, որոնք լսել էի դագաղի մեջ պառկած:

«Տեր իմ, ողորմիր ինձ, գթա ինձ, ես կործանվում եմ... Վատն եմ ես, անմաքուր, շատ ու անհաշիվ են իմ մեղքերը, բայց անչափ է ողորմությունը Քո: Ողորմիր ինձ, Տեր, քանզի խռովեցին ոսկերք իմ, ինձ խիղճս մաքրելու ժամանակ տուր, անցած կյանքս քննելու հնարավորություն: Քոնն եմ, փրկի՛ր ինձ»:

Ես այսպես կանչեցի հոգուս խորքից՝ ալեկոծվելով մահվան նախաշեմին գտնվողի թախիժով:

Անցան մի քանի տառապալից ժամեր, և ես արդեն չէի աղոթում կյանք վերադառնալու համար: Ես հանգիստ մահ էի խնդրում՝ որպես առաջիկա տառապանքներից ազատվելու ամենալավ միջոց:

Աղոթքի մեջ կամաց-կամաց հանգստացավ հոգիս, և գերեզմանում դանդաղ մահվան հեռանկարն ինձ երևում էր որպես արդյունք իմ վաստակած մեղքերի: Ես ինձ ամբողջովին հանձնեցի Աստծո կամքին և միայն մի բան էի ցանկանում՝ մեղքերի թողություն:

Ես այդպիսի զգացում ունեի երեկոյան հոգեհանգստի ժամանակ, երբ սկսեցին ինձ վրա երգել. «Քո անճառելի փառքի պատկերն եմ և մեղքի խոցերն եմ կրում: Ողորմիր Քո արարածին, Տե՛ր, և մաքրիր Քո ողորմածությամբ և փափագելի հայրենիքին արժանացրու ինձ, ինձ դրախտի բնակիչ դարձրու»:

Հոգեհանգիստն ավարտվեց, և ինչ-որ մարդիկ վերցրին իմ դագաղը: Նրանք շարժեցին ինձ և հանկարծ իմ կրծքից անսպասելի մի հառաչ պոկվեց: Նրանցից մեկն ասաց մյուսին.

-Կարծես թե հանգուցյալը հառաչեց:

-Չէ՛, քեզ թվաց,- պատասխանեց մյուսը:

Բայց իմ կուրծքն ազատվեց այն սեղմող հեղձուկից, և ես բարձր տնքացի: Բոլորը նետվեցին իմ կողմը: Բժիշկն արձակեց համազգեստը, ձեռքը դրեց սրտիս վրա և զարմացած ասաց.

-Սիրտն աշխատում է, նա շնչում է, նա ողջ է: Ջարմանալի դեպք է սա:

Ինձ արագ տեղափոխեցին ննջասենյակ և անկողին դնելով՝ սկսեցին մարմինս շփել ինչ-որ սպիրտով: Շուտով ես աչքերս բացեցի և հայացքս առաջինը ընկավ Փրկչի պատկերին, այն նույն պատկերին, որը (ինչպես հետագայում իմացա) դրված էր իմ դագաղի գլխավերևում՝ գրակալի վրա:

Արցունքի վտակներ էին հոսում իմ աչքերից՝ թեթևացնելով սիրտս: Մահճակալի մոտ կանգնել էր Ստեփանը և լալիս էր ուրախությունից: Իմ կողքին նստել էր բժիշկը և համոզում էր հանգիստ մնալ: Նա չէր հասկանում իմ վիճակը:

Ինձ բժշկի օգնությունը պետք չէր. երիտասարդիս ուժերն արագ վերականգնվում էին: Ասենք, ես նրան շնորհակալ եմ այն բանի համար, որ նա, իմ խնդրանքի համաձայն, կողմնակի անձանց մոտքն արգելեց, որպեսզի «չանհանգստացնեն հիվանդին»:

Ես մի քանի օր անցկացրի կատարյալ մենության մեջ՝ չտեսնելով ոչ մի օտար դեմք: Ինձ համար ուրախություն և հոգու սնունդ էին Դավթի աստվածային երգերը: Նրանցից սովորեցի ճանաչել Աստծուն, սիրել Նրան և ծառայել Նրան:

Հետաքրքրությունից դրդված՝ շատ ծանոթներ էին հավաքվում դռների մոտ՝ փորձելով տեսնել ողջացած մեռյալին: Ամեն օր այցելում էր աներս: Նա երևի աշխատում էր ձեռքից բաց չթողնել ձեռնառու գործարքը: Բայց ես ոչ ոքի չէի ընդունում:

Առողջանալուն պես իմ առաջին գործը եղավ Քրիստոսի Մարմնով և Արյամբ Հաղորդվելու խորհրդին նախապատրաստ-

վելը: Հոգևոր կանքում փորձառու հայր Մ.-ն էր իմ հոգևորականը: Նա իմ մեջ ամրապնդեց հոգևորական դառնալու վճռականությունը: Բայց ես այդքան շուտ չկարողացա ազատվել աշխարհիկ գործերից: Ամենից առաջ հրաժարվեցի նշանավոր իշխանի փեսան և գեղեցիկ իշխանուհու ամուսինը դառնալու պատվից: Հետո հրաժարվեցի զինվորական ծառայությունից, ազատ արձակեցի իմ գյուղացիներին՝ նրանց դարձնելով ազատ հողագործներ: Իմ ամբողջ ունեցվածքը վաճառեցի և փողը ծախսեցի բարի նպատակներով: Մնացած ունեցվածքը տվեցի օրինական ժառանգներին: Այդպիսի հոգսերի մեջ անցավ մի ամբողջ տարի: Վերջապես աշխարհիկ հոգսերից ազատվելով՝ ես կարող էի խաղաղ հանգրվան փնտրել և ինձ համար բարի բաժին ընտրեցի:

Եղա մի քանի վանքերում և հաստատվեցի այն անապատում, ուր այժմ անց եմ կացնում կյանքս: Իմ հավատարիմ Ստեփանին ես ազատություն տվեցի և նրան դրամ առաջարկեցի, որը կապահովեր նրա ծերությունը, բայց նա դրամը չընդունեց և արցունքներով խնդրեց ազատ չարձակել իրեն: Նա ցանկանում էր մահանալ ինձ մոտ: Իր մնացած կյանքն անց կացրեց մեր մենաստանում և մեռավ՝ հրաժարվելով ձեռնադրությունից:

-Մի՞թե ես՝ մեղավորս և անարժանս, կարող եմ վանական լինել,- ասում էր նա:- Ինձ համար բավական է և այն, որ արժանացա Աստծո ծառաների հետ ապրելու բախտին:

Հարգարժան հայր Գ.-ն իր պատմությունն ավարտեց հետևյալ խոսքերով.

-Իմ օրինակով Դուք տեսնում եք Աստծո ողորմածությունը: Որպեսզի իմ հոգին փրկի մեղավոր քնի ճիրաններից, բարի Մարդասերն ինձ թողեց, որ անցնեմ մահվան հովտով և դազադի մեջ լուսավորեց իմ աչքերը, որպեսզի չքնեմ հավերժական քնով:

Ռուսերենից թարգմանեց Հրաչ Բեգլարյանը

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հավատացյալ մարդու համար հրաշքը իրերի սովորական ընթացք է: Հրաշքով է շաղախված մեր կյանքի ցանկացած դրվագ: Մի՞թե հրաշք չէ, երբ առավոտյան արթնանում ես քնից և նորից տեսնում ես արևը, հրաշք չէ՞ միթե, երբ տեսնում ես աշխարհը՝ լուսով ողողված և կամ գիշերային լիալուսինը, որ իր արծաթե փայլով քեզ մտածել է տալիս իրեն Ստեղծողի մեծության և ուժի, Նրա իմաստնության ու ողորմածության մասին: Այո, աշխարհը հրաշալի է, կյանքը հրաշալի է, սակայն մենք այստեղ այդ կարգի հրաշքների մասին չենք խոսում, այլ այն դեպքերի, երբ խախտելով իրերի սովորական կարգն ու բոլոր տեսակի օրենքները՝ Աստված անմիջականորեն միջամտում է իր արարածների կյանքին:

Այդ պահին հաճախ իրերի նման ընթացքը հրաշք չի թվում, բայց անցնում է ժամանակ, մարդն ասես սթափվում է և հասկանում, որ իր հետ կատարվածը սովորական բան չէր: «Հոգևոր գիտակցությունը շատ իրատեսական է,- ասում է Անդրեյ Կուրաևը,- այն «ֆանտազիաներ» չի սիրում: Ուղղակի նրա իրականության մեջ մտնում է նաև հրաշքը, պարզապես նրա իրականությունը չի սահմանափակվում մեռած իրերի աշխարհով» (Дьякон Андрей Кураев, Школьное богославие, издание третье, исправленное и дополненное, <Светояр>, С-Пб, 2000, с. 13.):

Հրաշքն անձեռագործ է, մարդու ուժերից վեր մի բան, որի առաջ հաճախ ավիիբերան ենք մնում: Այն նաև անսպասելի է և՛ ձևի, և՛ ժամանակի, և՛ տարածության տեսակետից: Հարկ է փաստել մի կարևոր հանգամանք. հրաշքը տեղի է ունենում ոչ թե մարդու ցանկությամբ կամ նրա ուզած ձևով, այլ՝ Աստծո: Արարիչն Ինքն է հարմար գտնում Իր ուզած ձևով և Իր ցանկացած ժամանակ խառնվելու մարդու կյանքին, այն հրաշալի կերպով ուղղելու համար, բարելավելու համար իրերի այն դրությունը, որը խախտվել է մարդու մեղքի պատճառով:

«Հրաշք ասելով հասկանում ենք Աստծո այնպիսի արտակարգ ազդեցությունը մարդու կամ բնության վրա, որը որպես կանոն դուրս է գալիս բնական հայտնի օրինաչափությունների շրջանակից և մարդուն ակնհայտորեն, առանց կասկածանքի կանգնեցնում է աշխարհում Աստծո ռեալ գոյության փաստի առաջ», - գրում է Ա. Օսիպովը (А. И. Осипов, Путь разума в поисках истины, Основное богославие, М. 1999, с. 195): Հետազոտողները հրաշքները բաժանում են երկու տեսակի՝ արտաքին (օրինակ՝ մեռածի հարությունը, փոթորիկի խաղաղեցումը և այլն) և ներքին (օրինակ՝ ավազակի բարոյական անսպասելի վերածնունդը կամ մաքսավորի ու անառակ կնոջ վերածնունդը կամ ասենք վշտի կամ ցավի մեջ գտնվող մարդու ուրախության զգացումը աղոթքի ժամանակ):

Սակայն թե՛ մեկի, թե՛ մյուսի համար ընդհանուրն այն է, որ մարդն զգում է Աստծո ազդեցությունն իր վրա և դրական կամ բացասական արձագանք է տալիս դրան: Իսկական հրաշքը միշտ ուղեկցվում է.

ա. Այն մարդու սրբությամբ, որի միջոցով կատարվում է դա

բ. Մարդու հոգևոր-բարոյական փոփոխությամբ (զղջում, դարձ դեպի Աստված կամ ընդհակառակը՝ խստամալ և աստվածամարտ դառնալ):

Հենց սրանով է հրաշքը տարբերվում աճաբարությունից, հալյուցինացիայից, հիպնոսից, էքստրասենսորիկայից, ինչպես նաև այն «հրաշքներից», որոնք հնարավոր են մարդու երևակայության շնորհիվ (Ը. Լ. ԿրոտՏՉ, նշվ. աշխ. էջ 196):

Անհրաժեշտ է նշել, որ իսկական հրաշքի կարևոր հատկանիշներից մեկն էլ այն մարդու անբասիր ու մաքուր կյանքի առկայությունն է, որի միջոցով Աստված կատարում է այն: Եթե այդպիսի կյանք չկա, այլ ընդհակառակը, փաստեր կան, որոնք հակառակն են ապացուցում, ապա, սուրբ հայրերի վկայությամբ, նման դեպքը պետք չէ հրաշք համարել կամ այն հրաշքի տեղ ընդունել: Չի ժխտվում նաև այն, որ հրաշքը կարող է կատարվել մեղավոր մար-

դու կամ նույնիսկ՝ կենդանու միջոցով (ինչպես, օրինակ Բաղասամի ավանակի խոսեւէն է)(Թվեր 22:28), սակայն դա այն դեպքում, եթե պահպանվում է այն մարդու զոջալու ընդունակությունը, որի հետ կամ որի ներկայությամբ կատարվել է հրաշքը: Դրա համար էլ հրաշքներ են կատարվում նաև եկեղեցուց դուրս և մինչև օրս, քանզի. «Նա կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությանը» (1 Տիմ., 2:4):

Հարկ է շեշտել, որ քրիստոնեական հավատի հիմքում ընկած են ոչ թե դատողությունները կամ ապացույցները, այլ ամենից առաջ Աստծո զորությունն ու ուժը: Թե որտեղ և ինչ ձևով ի հայտ կգան դրանք, մարդու գիտակցությունից դուրս են: Եվ հենց այդ պատճառով էլ զարմանալի ոչինչ չկա, երբ քրիստոնյայի մեջ գործում է Քրիստոսի ուժը, և տեղի է ունենում հրաշք:

Չմոռանանք նշել նաև այն կարծիքը, որ կա աստվածաբանների որոշ խմբի մոտ: Հրաշքները մեզ հրաշք են թվում, քանի որ մենք ծանոթ չենք այս կամ այն օրենքին, որ Աստված սահմանել է գործելու բնության կամ հասարակության մեջ: Ասենք ինչպիսի՞ հրաշք կարող էր թվալ մեզմից երկու դար առաջ ապրած մարդու համար հասարակ հեռախոսը, կամ ռադիոն, հեռատեսիլը... Կգա ժամանակ և այսօր հրաշք համարվող շատ երևույթներ կդառնան սովորական բան: Սակայն չպետք է մոռանանք, որ հրաշքները միշտ կամ գրեթե միշտ, տեղի են ունենում առանց հաշվի առնելու բնության օրենքները:

Ինչ խոսք, անհավատ մարդուն հնարավոր չէ հավատի կոչել և ոչ մի հրաշքով: Մի՞թե Քրիստոսը քիչ հրաշքներ գործեց, իսկ Նրա կատարած ամենամեծ հրաշքը մեր մեղքերի համար խաչվելն էր և հարություն առնելը, սակայն դա չվերացրեց անհավատ-կասկածամիտների բազմությունը: Մինչև այսօր էլ սերունդների միջով ձգվում է նրանց շարանը:

Պրագմատիկը գործնական ապացույց է ուզում: Մենք նրան պարզում ենք Աստծո զորությամբ տեղի ունեցած հրաշքները:

Դրանք տեղի են ունեցել ոչ վաղ անցյալում, ականատեսների հիմնական մասը դեռ ապրում են և զարմացած պատմում են իրենց հետ կատարվածը:

-Փչո՛ց է,- փնչացնում են արհամարհանքով:

-Վկաներ կան,- ասում ենք:

-Հեքիա՛թ է,- թերահավատությամբ ուսերն են թոթվում:

Դրա համար էլ կրկին ու նորից գալիս ենք Հիսուսի հարցին.

-Իսկ դու հավատու՞մ ես, որ ես այդ կարող եմ անել քեզ:

Հասկանալի է՝ հրաշքը հավատի արդյունք է, սակայն չի կարելի ժխտել և այն հանգամանքը, որ հրաշքները տեղի են ունենում նաև անհավատ մարդկանց հետ, որպեսզի նրանց հավատի բերեն:

Մենք՝ մարդիկս, սովոր ենք հաճախ դատողություն անել մի բանի մասին, որից գաղափար անգամ չունենք: Նույնը նաև այս ասպարեզն է: Հոգևոր բնագավառը որքան պարզ, նույնքան էլ բարդ է շատերիս համար: Մարդը կարող է կրթված լինել, բայց հոգևոր առումով՝ անգրագետ: Այսինքն՝ լինել խավարի մեջ և այդ մասին չհիմնալով՝ արհամարհանքով փնչացնել՝ ուրիշի մոմ վառելու, լույս վառելու, ճրագ վառելու փորձը ծաղրելով: Սակայն միշտ պետք է հիշել, որ մարդու փրկագործությունը տեղի է ունենում ոչ այլ կերպ, քան մարդու և Աստծո համագործակցությամբ: Առաջինի տեսանելի և երկրորդի անտեսանելի ուժերի համադրությամբ: Իսկ Աստծո անտեսանելի ուժը մեզ չի հարցնում, թե որտեղ կամ ինչ ձևով միջամտի մեր կյանքին: Դրա համար էլ հրաշքները հաճախ անտեսանելի աշխարհի տեսանելի գործունեության արդյունքն են: Անտեսանելի աշխարհը մեզ օգնում կամ խանգարում է (չարի ձեռքով): Իսկ հրաշքների դեպքում նրանց գործունեությունն աստվածային ուժով և կամեցողությամբ բացահայտվում է:

«Իրական հրաշքներին չհավատալու պատճառը,- ասում է Պասկալը,- սիրո պակասն է», - և ավելացնում է, որ սուտ հրաշքներին հավատալու պատճառը նույնպես սիրո պակասն է (Ս. Փո-

ренцкий, Христианство и культура, издательство фолио, М. 2001, с. 354):

Հասկանալի է, որ «հրաշքներ» կարող է գործել նաև սատանան, սակայն դրանք սուտ հրաշքներ են: Պողոս առաքյալը խոսում է սատանայի սուտ հրաշքների մասին: «Նրա՝ անօրենի գալուստը Սատանայի ներգործությամբ է,- ասում է Առաքյալը սուտքրիստոսի գալստյան մասին,- ամենայն զորությամբ, նշաններով, խաբեբայության զորավոր գործերով և անիրավության բոլոր պատրանքներով կորստյան մատնվածների վրա. և այդ ամենը այն բանի փոխարեն, որ չընդունեցին ճշմարտության սերը, որպեսզի փրկվեն» (2 Թեսաղոնիկ. 2, 9-10): Դա այն է, երբ մեղքի որդու գործողությունները ներկայացվում են որպես Աստծո գործողություններ և դրանցով կորստյան մատնում մարդկանց հոգիները: Կարծում ենք նույն նպատակին են ծառայում նաև օկուլտային տարբեր գիտելիքները և նրանց հետևորդների կողմից ներկայացված «հրաշքները»:

Քիչ չեն դեպքերը, երբ որպես հրաշք ընդունվում է հմայքը: Սակայն ասենք, որ հրաշքը և հմայքը տարբերակել հնարավոր է միայն Սուրբ Հոգու զորությամբ:

Դրա համար էլ անհրաժեշտ է շատ ուշադիր լինել դրանց նկատմամբ և չձգտել հրաշքներ տեսնել կամ ամեն ինչ հրաշքով բացատրել: Քանզի այնկողմնային աշխարհի հետ շփումը շատ հաճախ կարող է ավարտվել ոչ մեր ուզածի նման: Պատահական չէ, որ սուրբ հայրերը միշտ էլ մեծ զգուշությամբ են վերաբերվել հրաշքներին: Օրինակ, Գրիգոր Սինայեցին (14-րդ դար) հիշեցնում է. «Երբեք մի ընդունիր, եթե զգայական կամ հոգևոր որևէ բան տեսնես, լինի շրջապատում, թե քո ներսում, թեկուզ և դա լինի Քրիստոսի, Հրեշտակի կամ որևէ սրբի կերպար... Այդ ընդունողը հեշտությամբ հմայքի մեջ է ընկնում: Աստված չի զայրանում նրա վրա, ով խիստ ուշադիր է սեփական անձի նկատմամբ, և եթե հմայքի մեջ ընկնելու վախից չի ընդունում այն, ինչը որ Նրանից է, այլ ավելի շատ գովում է նրան, որպես իմաստունի» (Преп. Симеон новый

Богослав, О трех образах молитвы, добротолубие. Т. 5, М. 1900, с. 463-464): Իսկ Ռուս Ուղղափառ եկեղեցու 19-րդ դարի սուրբերից մեկը՝ Իգնատի Բրյանչանինովը այդ առթիվ գրում է. «Քրիստոնեական ճգնակեցության ուսուցիչները խորհուրդ են տալիս մեծ ուշադրության չարժանացնել հոգևոր և մարմնական զգացողությունն առաջացնող երևույթները: Խորհուրդ են տալիս բոլոր նման կարգի երևույթների նկատմամբ դրսևորել ողջախոսի սառնություն և փրկարար զգուշություն պահպանել» (Էп. Игнатий Брянчанинов. Соч. Т. 2, СПб., 1905, с. 17): Այսօր ողջ աշխարհը կարծես թե «ականատեսն» է դառնում զարմանալի դեպքերի ու «հրաշքների»: Էլ այլնուրակայիններ, էլ թռչող ափսեներ, էլ չհայտնաբերված թռչող օբյեկտներ... ԱՄՆ-ի բնակչության 70 տոկոսն, օրինակ, հավաստում է, որ ունեցել է էքստրասենսոր ընկալման փորձ, իսկ 42 տոկոսը նշում է, որ հաղորդակցվել է մահացածների հետ (А. И. Осипов, նշվ. աշխ., էջ 199):

Ուրեմն ո՞րն է մեր խնդիրը: Ինչու՞ ենք ձեռնամուխ եղել այս գործին: Պարզապես այն պատճառով, որ մեր կյանքում շատ են պատահում այնպիսի դեպքեր, որոնք դուրս են սովորականի ծիրից: Դրանք կատարվել և կատարվում են Հայ Առաքելական սուրբ եկեղեցու ծոցում:

Այն հրաշքները կամ զարմանալի պատմությունները, որոնք մենք ներկայացնում ենք, առաջին հերթին հավաստի են: Նշված են տեղը, ժամանակը, հանգամանքները, որոնց մեջ կատարվել են դրանք: Նաև նշված են ականատեսները, հնարավորին չափ տեղեկություններ են տրված դրանք ներկայացնողների բնակավայրի մասին: Նրանք տարբեր մասնագիտության ունեցողների տեր մարդիկ են, պատկանում են հասարակության այս կամ այն շերտին, սակայն նրանց հետ պատահած դեպքերի ընդհանրությունն այն է, որ դրանք բոլորն էլ կատարվել են հրաշալի կամ զարմանալի կերպով: Այս կամ այն լարված իրադրության մեջ Աստվածային զորությունն

օգնել է նրանց: Այդ ընթացքում մարդիկ ապրել են բառերով անբացատրելի զգացողություն:

Մենք մեր պարտքն ենք համարել ամենայն ճշտությամբ գրի առնել դրանք, այս կամ այն չափով ենթարկել գրական մշակման և ներկայացնել ընթերցողին: Ցանկանում ենք մի անգամ էլ շեշտել, որ իսկական հրաշք է նրանց կյանքը, ովքեր ընթանում են Ավետարանի նշած ուղիով: Նրանց գերագույն նպատակը երբեք էլ չի եղել հրաշք տեսնելը կամ գործելը: Երանելիները, մարտիրոսները, արդարները ոչ թե սառը բանականությամբ կամ մերկ դատողություններով, այլ իրենց կյանքով և ճգնակեցությամբ ապացուցել են, որ քրիստոնեությունը ոչ թե ինչ-որ մեկի երևակայության պտուղն է կամ յուրատեսակ փիլիսոփայություն, այլ մարդու իրական ճանապարհ է դեպի ժամանակավոր ու հավերժական բարիք, դեպի ճշմարտության ճանաչողություն:

ՅԵՂԻՆԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐՅՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ	3
ՆԱԽԱԲԱՆ	6
ԻՄ ԿՅԱՆՔԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՅՐԱՇՔԸ	14
ԱՎԵՏԱՐԱՆԻ ԲՈԼՈՐ ԽՈՍՔԵՐՆ ԷԼ ՍՈՒՐԲ ԵՆ	16
ԻՆՉՊԵՍ ԿԱՆԱՉԵՑ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԸ	17
«ՆԱՐԵԿԻ» ԲԺՇԿՈՂ ՈՒԺԸ	18
ՅՐԱՇՔ ԱՇԽԱՐՀ	19
ՅՐԱՉԻ ԹՈՒՉՔԸ	21
ԵՎ ԴԵՎԸ ՀԵՌԱՑԱԿ	22
ԱՐՑՈՒՆԸ՝ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎՐԱ	24
ԽՈՒՆԿԻ ԲՈՒՅՐԸ	25
ԻՆՉՈՒ ԱՌԱՋ ՉԷՐ ՇԱՐԺԿՈՒՄ ԱՎՏՈՍԵՔԵՆԱՆ	26
ԱՂՈԹՔԸ ՎԱՅԱՆ Է ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ	27
ԻՆՁ ՓՐԿՈՂ ՁԵՌՔԸ	28
ՅԱՅԱՅԻՍ «ՄԱՅԸ»	29
ԵՎ ՊԱՏԻԺ, ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ	31
ԵԿԵՂԵՑՈՒ ՅՐԱՇԱԳՈՐԾ ԲԱՆԱԼԻՆ	32
ՏԻՐԱՍՈՐ ՅՐԱՇԱԼԻ ԵՐԵՎՈՒՄԸ ՉԻՆՎՈՐՆԵՐԻՆ	33
ՕՐՅՆՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈ ՎԵՐԱԴԱՐՁԱ ԵՐԿՐԱՅԻՆ ԿՅԱՆՔ	34
ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ ԿՈՒՐԱՑԱԾ ԿԻՆԸ	37
ԽԵՆԹԻ ՅՐԱՇԱԼԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ	39
ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾ ԵՐԵՄԱՆ	39
ԲՈՒԺԵՑ ՄՅՈՒՌՈՆԻ ԿԱԹՍԱՆ	42
ՏԻՐԱՍՈՐ ԵՐԵՎՈՒՄ՝ ԱՌԻՆՋԻ ԳԵՏԱՐԳԵԼԻ «ՍՈՒՐԲ ՆՇԱՆ» ԵԿԵՂԵՑՈՒՄ	43
ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԱՆՁԵՌԱԿԵՐՏ ՊԱՏԿԵՐ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՅՈՒՆԻ ՎՐԱ	43
ՀԱՅ ԶԱՅԱՆԱՅԻ ԱՂՈԹՔԻ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ	45

ՈՏՆԱԼՎԱՅԻ ԶՐԱՇԸԸ	46
ՉՈՐԱԿՈՐ Է ԶԱՎԱՏՔՈՎ ԱՐՎԱԾ ԱՂՈԹԸԸ	47
ՀԻՍՈՒՄԻ ԱՆՈՒՆԸ ՉՍՊԵՑ ԿԱՏԱՂԱԾ ՇՆԵՐԻՆ	48
ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՂՈԹԸ՝ ՇՈՒՐՁԱՌԻ ՏԱԿ	49
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՂ ԵՎ ԱՊՐԵՑՆՈՂ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ	49
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԲՈՒԺԿԵՑ ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	50
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՅԱՆԱՅԻ ԱՂՈԹԸԸ	51
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂՈԹԸԻ ՇՆՈՐՀԻԿ	52
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ ՄԻ ԿՆՈՋ ԿՅԱՆԸԸ ԵՐԿԱՐԱՅՐԵՑ ՏԱՍՆՉՈՐՍ ՏԱՐՈՎ	54
ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ	55
ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺԵՑ ԶԱՂՑԿԵՂԸ	55
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՓՈՔՐԻԿ ԱՂՁԻԿԸ ՓՐԿԿԵՑ ՎՆԱՍԿԵԼՈՒՑ	56
ՄԻ ԱՆԳԱՄ, ՀԻԿԱՆԴԱՆՈՅՈՒՄ	57
ՍՐԲԱՊԱՏԿԵՐԻ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ	58
ԱՆԴԱՍՏԱՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ	59
ԳՏՆՎԱԾ ԽԱՉՔԱՐԸ	60
ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՐԿԵՑ ՄԱՆԿԱՆԸ	61
ՀԱՇՄԱՆԴԱՄ ՏՂԱՅԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ	62
ՍԵՂԱ ՏԱՏԻ ԽԱՉԸ	63
ՀԱՎԱՏՈՎ ԱՂՈԹԸԸ ԲՈՒԺՈՒՄ Է, ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՊԱՆՈՒՄ	63
ՀՐԱՇԸ ՉԷՐ, ԻՆՉ ԷՐ	65
ԱՆԾՈՒԽ ՀՐԴԵՂ	65
ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ ՈՏԸԸ	66
ՀՐԱՅՐ ԲԱԶԵԻ ՈՒԽՏԸ	67
ՀԻՍՈՒՄԻ ԱՂՈԹԸԻ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ	68
ԱՍՏՎԱԾ ԲՈՒԺԵՑ ԵՐԱՎՆԵՐԻՍ ԽՅԱՆՈՒՄԸ	72

ՓՐԿԵՑ ԱՍՏԾՈՆ ԱՆՈՒՄԸ.....	73
ՔԱՅԱՆԱՅԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՄԸ.....	75
ԻՄ ԱՂՈԹՔԸ ՓՐԿԵՑ ԻՆՁ.....	76
ԻՄ ԱՌԱՋԻՆ ԲԱՌԸ՝ «ԽԱՉ».....	77
ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՊԱՏԱՐԱԳ.....	78
ԲԱՑԿԵՑ ՅԱՄՐԻ ԼԵՉՈՒՆ.....	79
Ո՞Վ ՍԹԱՓԵՑՐԵՑ ԹՄՐԱՄՈՒԽՆ.....	80
Ս ԿՈՒՅԱԸ ԲՈՒԺԵՑ ՅՈՒՓՍԻՄԵ ԱՂՋՆԱԿԻՆ.....	82
ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԱՏԱՂԸ.....	82
«ՄԱՇՏՈՑՆԵՐԻ» ԲՈՒԺԻՉ ԶՈՒՐԸ.....	84
ՓՈՔՐԻԿ ԹԱԹՈՒԼԻ ԹՈՒՉՔԸ.....	85
ՅԻՍՈՒՄԻ ԱՐՑՈՒՄԸ.....	86
ՅՐԴԵՅԻՑ ՅԵՏՈ.....	87
ԻՆՉՈՒ՞ ԷՐ «ԼԱԼԻՍ» ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸ.....	87
ԱՆԴՈՒՆԴԻ ԵՉՐԻՆ.....	88
ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԿԵՑ ՔԱՂՅԿԵՂԸ.....	89
ՔԱՂՅԿԵՂԸ ԲՈՒԺԵՑ ՄԱՍՆԱՏՈՒՓԸ.....	90
«ՍՈՒՐԲ ՍԱՅԱԿ» ԵԿԵՂԵՑՈՒ ՅՐԱՇՔԸ.....	93
ԴԻՎԱՅԱՐ ԵՂԱԾ ՍԻՐԱՅԱՐԸ.....	94
ԱՂԱՆԴԱԿՈՐ ԴԻՎԱՅԱՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՄԸ.....	97
ԻՄ ՈՂՋ ՄՆԱԼԸ ՅՐԱՇՔ Է.....	98
ՍԵՎ ԽԱՉԵՐ՝ ՍՊԻՏԱԿ ՎԵՐՆԱՇԱՊԻԿԻ ՎՐԱ.....	102
ԻՆՉՈՒ ԷՐ ԾԵՐՈՒՆԻՆ ՊԱՏԿԻՐՈՒՄ ՄԱՏԱՂ ԱՆԵԼ.....	103
ԻՆՉՊԵՍ ՅՐԱԺԱՐՎԵՑԻ ՍԵՎ ՄՈԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳՐՔԵՐԻՑ.....	104
ԻՆՉՊԵՍ ՏԵՍԱ ԶՐԻՍՏՈՍԻՆ.....	105
Ո՞Ր ԿՈՐԱՆ ՈՒՈՒԹՅՔՆԵՐԸ.....	105
Ո՞Վ ԷՐ ԻՆՁ ՏԱՆՈՂԸ.....	106
ՄԱՅՍԵՂԱԿԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՄԸ.....	107
ՄԱՐԴՈՒ ՅԱՐՈՒԹՅՈՒՄԸ.....	108

ՏԻՐԱՍՈՐ ՆԿԱՐԸ	108
ԱՂԶԿԱ ԲՈՒԺՈՒՄԸ	109
ՀԱՎԱՏԱ ԵՎ ԿՓՐԿՎԵՍ	109
ԻՄ ՀՐԱՇԸԸ	110
ՏԻՐԱՍՈՐ ՀՐԱՇԱԼԻ ԵՐԵՎՈՒՄՆԵՐԸ ԽՈՐ ՎԻՐԱՊՈՒՄ	112
ՍՈՒՐԲ ՆԵԿՏԱՐԻՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾ ՊԱՏԿԵՐԸ.....	116
ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ ՕԳՆԵՑ ԻՆՁ	118
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԴԱՐՁԻ ԵՎՎ ԵՍ.....	121
ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ՄԱՅՐՍ՝ ՆՈՐԱԴԱՐՁ	123
ԻՆՁ ՓՐԿԵՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵՎԵՂԵՑԻՆ	125
ԱՂՈԹՔԻ ՉՈՐԱՎՈՐ ՈՒԺԸ.....	127
ՄՈՐՍ ՏԵՍԱԾ ՉԱՐՄԱՆԱԼԻ ԵՐԱՉԸ.....	128
ՏԻՐՈՋ ԵՎ ՏԻՐԱՍՈՐ ԱՆՎԱՆ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ	129
ԻՆՉՊԵՍ ԴԻՎԱԶԱՐ ԵՂԱՎ ՏՂԱՍ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿՎԵՑ	129
ԻՆՉՊԵՍ ԲԱՐԵԼԱԿՎԵՑ ՄՈՐՍ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ.....	132
«ՉԵՂԱԾ ԲԱՆԸ».....	132
ԾԱՆՈԹԻՍ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	134
ՍԿԻՅԻ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ	137
ՍՈՒՐԲ ՏԻՐԱՍՈՐ ՏԵՍԻԼՔԸ.....	138
ՕԴԻՑ ԿԱԽՎԱԾ	139
ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ.....	139
ԴԱՐՁԻ ԵՎԱԾ ՄԱՅՍԵՂԱԿԱՆԸ, ՈՐԻՆ ՓՐԿԵԼ ԷՐ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՄԸ	140
ԻՄ ՊԱՅԱՊԱՆՆ ԱՍՏՎԱԾ Է.....	142
ՄԻԽԱՅԻԼ ՏՈԼՍՏՈՅ ԿԵՆԴԱՆԻ ՄԵՌԱԾԸ (պատմվածք).....	143
ՎԵՐՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	154

Խմբագիր՝ Ժիրայր քահանա Խաչատրյան
Շապիկը՝ Ժիրայր քահանա Խաչատրյանի